


Յ Ե Լ Ե Ն Ա Կ Ո Ւ Յ Բ Ի Շ Ե Վ Ա



ՎԱՆԵՐԻԱՆ ՎԼԱԴԻՄԻՐՈՎԻՉ
Կ Ո Ւ Յ Բ Ի Շ Ե Վ

ՊԵՏԶՐԱՏ—ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ ● 1939

329.15:92 [304.104]

05 FEB 2018

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՔ

ՅԵԼԵՆԱ ԿՈՒՅԲԻՇԵՎԱ

ՎԱԼԵՐԻԱՆ ՎԼԱԴԻՄԻՐՈՎԻԶ
ԿՈՒՅԲԻՇԵՎ

1888—1935

Քրոջ հիշողություններից

ՊԵՏԶՐԱՏ

ԳԱՂԱԳԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ • 1939



11-28840դր

ЕЛЕНА КУЙБЫШЕВА
ВАЛЕРИАН ВЛАДИМИРОВИЧ
КУЙБЫШЕВ

Армгиз — Издательство полит. литературы
Ереван, 1939



ՔԱՂԱՔԸ: ՏՈՒՆԸ ԸՆՏԱՆԻՔԸ

Մի կողմից անվերջ լայն տափաստանն և գրկում Ակմոլին-
սկի մարդի Կոկչետավ քաղաքը (ներկայումս Ղաղախական
ԽՍՀ), իսկ մյուս կողմից բարձրանում են լեռներ, վորոնք
կտրտված են խոր կիրճերով: Տափաստանն ու լեռները միանում
են Կոպա մեծ հայելանման լճով: Լիճը խորն և, հատակն ավա-
զբւտ, ափը պատած և մանր քարերով, ինչպես ծովափը:

Կոկչետավում մի քանի փողոցներ կան առանց մայթերի,
բնական ավազուտ սալահատակով, վորի միջից ծլում և փափուկ
կանաչ խոտը: Կոկչետավում ցեխ յերբեք չի լինում: Ուժեղ,
հորդառատ անձրևից հետո անիմների թողած հետքերով հոսում
են վճիտ վտակներ, վորոնք կարկաչելով թաղնվում են ավազուտ
հողում:

Վալերիանը ծնվել և Ռմսկում 1888 թ. մայիսի 25-ին (հու-
նիսի 6-ին) և ութամսյա յերեխան բերվել և Կոկչետավ, ուր նրա
հայրը՝ Վլադիմիր Յակովլևիչը նշանակվեց զորախմբի պետ:
Վալերիանի մայրը՝ Յուլիա Նիկոլայեվնան մտավ կաղակային
դպրոցը վորպես ուսուցչուհի:

Յեթե դաք Կոկչետավ և հարցնեք առաջին իսկ հանդիպած
հին բնակիչներին Կույրիչեմների մասին, ապա նրանք կպատմեն,
թե ինչպես Յուլիա Նիկոլայեվնան և Վլադիմիր Յակովլևիչը
չատերին մարդ դարձրին, չքավորների յերեխաներին պատրաս-
տելով միջնակարգ դպրոց ընդունվելու, ուղարկելով նրանց սո-
փորելու Պետրոպոլիովսկի, դրա համար միջոցներ հայթայթելով՝
ներկայացումներ և յերեկույթներ կազմակերպելով: Ինչպես դար-
ձյալ նրանք կազմակերպեցին ժողովրդական տունը և կիրակնո-
րյա յերեկոյան դպրոցը:

Մեր ընտանիքն ապրում էր փայտյա փոքրիկ միհարկանի
տան մեջ, վորը չորս կողմից շրջապատված էր կեչիներով, թխկե-
նիներով և ուռենիներով: Գարնանը տունը թաղվում էր ծաղկած
թխկենիների մեջ, իսկ ամառն այդում լինում էյին ամեն տեսակի

չատ ծաղիկներ, վորոնց խնամում եր մայրս: Նա սովորաբար
ասում եր.

—Սիրել ե պետք ծաղիկները. նրանք զգում են, յերը նրանց
չավ ես վերաբերվում, յերը սիրով խնամում ես նրանց: Նրանք
յերեխաների նման են:

Ձմեռը տունը բոլոր կողմերից ծածկվում եր խոշոր ձյունա-
կույտերով. յերեւում եյին միայն հին, բարձր կեչիների կատար-
ները, վորոնք ձյան լեռների վրա մացառներ եյին թվում:

Վոչ միայն հարստության, այլ և միջին կարողության տեր
չեր մեր ընտանիքը: Հորս և մորս վաստակածը բավարարում եր
միայն ապրելու և դաստիարակելու յերեխաներին, վորոնք
ընտանիքում ութ հոգի եյին: Հագուստն ու կոշիկները շարունակ
մեծից միջակին, իսկ հետո փոքրին եյին անցնում: Այդ բոլորն
ուշի-ուշով միջանի անգամ վերակարվում, վերասարքվում եր:
Տան կահավորումը շատ պարզ եր: Տան մեջ տիրում եր մաքրու-
թյուն և ճշտապահություն: Մամայի ձեռագործը զարդարում եր
տան բոլոր անկյունները, սեղծելով դուրալություն:

Մայրս ձեռագործով զրդովում եր ամեն մի ազատ ընկն:
Իսկ ձմռան յերկար գիշերները ձեռագործով պարապում եյին
բոլորը՝ տղաները փորագրում եյին, սղոցում, նկարում. աղջիկ-
ները կարում եյին և գործում: Ամենից փոքրերը թրջած սխեռից
պատրաստում եյին զանազան փոքրիկ կերպարներ (Ֆիգուր-
կաներ), լուցկիներով նրանք միացնելով իրար հետ: Մեծերը
հերթով բարձրաձայն կարգում եյին: Մեզ մոտ ձեռագործ սովոր-
եցրել վաղիս եյին և կողմնակի մարդիկ: Հյուրասենյակում շա-
րունակ ձողոց (поялы) կար դրված, վորի վրա սփռոցներ եյին
գործում:

Ձմեռը տանն եյին լինում վոչ բոլոր յերեխաները: Մեծերը՝
Տոյյան, Նադյան և Վոլյան գնում եյին Ոմսկ սովորելու: Նույն-
իսկ ծննդյան արձակուրդներին նրանք չեյին գալիս, վորովհետեւ
ձյունապատ տափաստանով ձիերով պիտի գային 280 վերստ:

Ծննդյան նախդրյակին յերեխաների համար պատրաստվում
եւր տոնածառ: Տոնածառի համար խաղալիքները պահպանվում
եյին տարեցտարի. ամիսացնում եյին միայն այն խաղալիքները,
վոր արձաթե, վոսիկ և զանազան գույնի թղթերից պատրաս-
տում եյին իրենք՝ յերեխաները: Տոնածառի շուրջը յերեխաներն
ուրախանում եյին և պարում, պապայի գիթառի նվազի տակ,
իսկ մաման նստում եր բազկաթոռի վրա և լալիս, ցավելով, վոր
Տոյյան, Նադյան և Վոլյան չկան:

Մաման ընդհանրապես հաճախ եր լալիս: Նամակներ չկան—
արտասուք. յեկավ նամակը և մինչ այն բացվում եր—արտա-
սուք: Կկարգար նամակը և յեթե նրանում անգամ վոչ մի տխուր
բան չլիներ—զարձյալ արտասուք: Մեզ այդ բանը շարունակ
սարսափեցնում եր, և մենք չըջապատում եյինք մամային ու
մխիթարում նրան:

Ձմռան սովորական որերին տանն անդորրություն եր տի-
րում: Յերեխաները շուտ եյին պառկում քնելու, իսկ հայրս և
մայրս յերկար ժամանակ բարձրաձայն կարգում եյին գրական
նորությունները, վոր նրանք շարունակ դուրս եյին գրում: Տես-
նելով, վոր մեզ մոտ դեռ վառվում են ճրագները, գալիս եյին
և հարեանները, ու ընթերցանությունը շարունակվում եր կես
գիշերից անց:

Ամառը շատ ուրախ եր լինում:

Գալիս եյին մեծերը և տունը թնդում եր յերիտասարդ,
ուրախ ձայներով ու ծիծաղով: Կազմակերպվում եյին աղմկալից
խաղեր, դրոսանք դեպի լեռները, դրոսանք ձիերով: Ծնողներս
մասնակցում եյին ուրախությանը, և կարիքի մասին չեյին խո-
սում ու յերեք չեյին տրտմեցնում այդ ուրախությունը:

Ամառը մեր տունը գրավում եր քաղաքի ամբողջ սովորող
յերիտասարդությանը, վորն արձակուրդներին գալիս եր Կոկչե-
տով: Մենք հազվադեպ դեպքում եյինք հյուր գնում վորեւե
տեղ, ամբողջ ուրախությունը շարունակ մեզ մոտ եր տեղի ունե-
նում:

Մեր ընտանիքում բոլոր յերեխաներն ել առողջ եյին և
կենսուրախ: Միայն Վալերիանը մինչև 13 տարեկան հասակը
հիվանդատ և մոտձկոտ տղա յեր: Առողջության պատճառով նա
զատկական արձակուրդներին տուն եր գալիս և այլևս ամբողջ
ամառը հետ չեր գնում: Նրան կումիս եյին խմեցնում, ստիպում
եյին շատ քնել և դրոսներ:

Վալերիանը—Վոլյան, ինչպես նրան կոչում եյին ընտանի-
քում, սովորում եր գերազանց և նրան դասարանից դասարան
եյին փոխադրում առանց քննությունների:

Մեր ընտանիքում ունեյինք մի ուրիշ յեղբայր ևս՝ Միչան,
վորը վոդրերգական վախճան ունեցավ: Նրան սպանեց ընկերը՝
հրացանի հետ խաղալու ժամանակ: Միչան և նրա ընկերն այն
ժամանակ 14 տարեկան տղաներ եյին:

Ի հակադրություն Վոլյայի, Միչան առողջ, չարածձի տղա
յեր և մեծ ֆանտազյոր: Մի անգամ Միչան խորհրդավոր կերպով

Հայտնում է Վոլյային՝ իրը թե ինքը լսել է ծնողներին խոսակցու-
թյունն այն մասին, վոր Վոլյան իրենցը չէ, վոր ծնողները նրան
վերցրել են աղքատներից: Միշայի այդ ֆանտազիան Վոլյայի
վրա շատ ուժեղ տպավորություն գործեց: Նա սկսեց ելլ ավելի
ախրել, առանձնանալ, գիշերները լաց լինել և նույնիսկ պատ-
րաստվում էր փախչելու, վորպեսզի վորոնի իր ծնողներին՝
աղքատներին:

Նրա համար հեշտ էր հավատալ այդ բանին, քանի վոր
ծանոթները հաճախ ելին ասում, վոր նա ընտանիքից վոչ մեկին
նման չէ: Նա շատ նիհար էր, մեծ, կարծես թե զարմացած և
քիչ դուրս ընկած աչքերով, յերկար վզով:

Մի անգամ գիշերը հայրս լսեց, վոր Վոլյան լալիս է: Յեկավ
նրա մոտ և սկսեց հարցնել, թե ինչու յե լալիս:

Վոլյան յերկար ժամանակ չէր խոսում: Հայրը պնդում էր:

— Ինչու՞ յեք ինձնից թաղցնում, վոր յես ձեր տղան չեմ:
Ա՛ր ես իմ ծնողները:

Հայրս յերկար ժամանակ հանգստացնում էր նրան, ասելով,
վոր այդ ճիշտ չէ, վոր Միշայի հերթական հնարածն է այդ: Դա
ավելի Միշային: Նա նույնպես աշխատում էր համոզել Վոլյային,
վոր կատակ է արել և չէր մտածում, թե Վոլյան կհավատա...

Արդեն չափահաս դառած Վոլյան ասում էր, վոր Միշայի կա-
տակն իր վրա շատ ուժեղ տպավորություն գործեց և տխրու-
թյան կնիքը դրեց իր ամբողջ մանկության վրա:

Մերձավորների կողմից թույլ տված ամենափոքրիկ անար-
գարությունից Վոլյան նեղանում էր: Նրան թվում էր, թե բո-
լորը գեպի ինքն անարգարացի ելին այն պատճառով, վոր ինքն
ստար է, վոր իրեն չեն սիրում:

Վոլյան սովորություն ուներ լուռ նստել, հայացքը մի կետի
հառելով: Նրա աչքերն ավելի ելին մեծանում, յերեսը ձգվում
էր: Իսկ յերբեմն, ձեռքերը դնելով անդրափարտիքի գրպանները,
ման էր դալիս սենյակում, հանկարծ կանգ էր առնում պատի ա-
ռաջ և այդպես մնում էր, մինչև վոր մեկն ու մեկը նրան կանչեր:
Շերխանները ծիծաղում ելին, իսկ մաման բարկանում էր նրա
ցրվածության վրա:

Վոլյային վաղ մանկության ժամանակ կոչում ելին «Դոս-
պալտա»: Նրա համար ելին այդպես կոչում, վոր նա յերազում
էր մեծանալ մինչև առաստաղը, բայց փոխանակ ասելու «դո-
պոտոկա» («մինչև առաստաղ»), ասում էր «դոսպալտա»: Հետո
ծիծաղում ելին և այն բանի վրա, վոր «կարաուլ» և «ուռա» բա-

ռերը չիտթում էր իրար հետ: Յերբեմն, ամենահանդիսավոր
գեպերում, իր հիացմունքը հայտնելով, նա գոչում էր՝ «կա-
րաուլ» և, ընդհակառակը, վտանգի դեպքերում գոչում էր՝
«ուռա»:

Հիշում եմ այսպիսի մի դեպք. Վոլյան, Տոլյան և Նադյան
մեզ, փոքրերիս համար, ցիրկ ելին սարքել: Լարախաղային
մի համաբույս Նադյան գլխի վրա պիտի կանգներ փափուկ աթո-
ռի վրա: Վոլյան նրան պիտի ոգներ վոտքերից բռնելով: Յեկ
ահա այն վայրկյանին, յերբ Նադյան արդեն գլխի վրա յեր
կանգնել, աթոռի բարձն ընկավ, և Նադյան այնպես ուժեղ ճանկ-
ռոտեց իր դեմքը, վոր աչքն արյունով լցվեց: Նադյան լաց յե-
ղավ, իսկ վախեցած Վալերիանը գոչեց.

— Ուռա՛, Նադյայի աչքը թելի վրա յե կախված:

«Հասարակության» մեջ հուսահատական խուճապ բարձրա-
ցավ: Վաղեցին մեծերը և սկսեցին զբաղվել Նադյայով: Ծաշե-
լիս Վոլյայի վրա շարունակ ծիծաղում ելին, հիշելով նրա
«ուռա»-ն՝ Նադյայի աչքը թելի վրա կախվելու առթիվ:

Հետագայում Վոլյան յերազում էր Սովորով դառնալ: Նա
շատ էր կարգում այդ զորավարի քաջությունների մասին, նմա-
նություն էր գտնում իր և նրա արտաքինի մեջ, սիրում էր պա-
տերազմ խաղալ: Նմանելով Սովորովին, Վոլյան քնում էր
մերկ տախտակների վրա, նույնիսկ ձմեռ ժամանակ սառը ջուր
էր ածում իր վրա, զբաղվում էր մարմնամարզությամբ:

Իր մեջ համարձակություն դաստիարակելով, Վոլյան աչ-
խատում էր այն պատվաստել նաև մեր մեջ. մեզ ստիպում էր
գնալ մուժ սենյակ, մտնել մահճակալի տակ և իրբև ապա-
ցույց, վոր մենք կատարել ենք նրա հանձնարարությունը, բերել
այնտեղից մի վորևե իր: Դողալով սարսափից, բայց վախենալով
մեր նկատմամբ Վոլյայի դժգոհությունն առաջացնելուց և վախ-
կոտների համբավ ստանալուց, մենք կատարում ելինք նրա պա-
հանջները և բերում ելինք թաղցրած առարկան: Ընդամին ինչ-
քան շատ կնստես մուժ սենյակում մահճակալի տակ, այնքան էլ
բարձր թվանշան կստանաս համարձակության համար: Այն ժա-
մանակ Վոլյան մեր աչքում շատ հասակավոր էր յերևում, իսկ
այժմ իմ առջև պարզ պատկերանում են նրա բոլորովին յերեխա-
յական դեմքը և յերեխայական չարաճճիությունները:

Մենք շատ ելինք սիրում Վոլյայի հետ զրոսնել սարերում:
Նա միշտ վորևե հետաքրքրական բան էր հնարում, կազմակեր-
պում էր խաղեր, վորոնք լի ելին արկածներով:

Մի անգամ, սարերում զբոսնելիս, մենք սողացող ոճ տեսանք և սարսափահար փախանք նրանից: Վոլյան հպարտ տեսքով նեղ-վեց դեպի ոճը: Յերևի այն ժամանակ նա իրեն Սուվորով էր յերևակայում, իսկ ոճին՝ թշնամու մի ահագին զորագունդ: Վոլյան համարձակորեն վոտքը դրեց ոճի պոչին և արագորեն իր ձեռքերի մեջ առավ նրան:

Մենք ցնծության մեջ էյինք: Բայց հանկարծ լավեց սարսափի ճիչ—ոճը գետին է նետված, իսկ «Սուվորովը» բռնել է խայթված մատը:

Մատն արագորեն կապտում և ուռչում էր, մի բան, վոր մեզ շատ վախեցրեց: Մեզ հետ կար մի տղա, վորը Վոլյայի մատը հաստ թելով ամուր կապեց խայթված տեղից վերև, վորպեսզի ուռուցքը չտարածվի:

Մենք տխուր վերադառնում էյինք տուն: Մեր «Սուվորովը» ամբողջ ճանապարհին լուռ էր և միայն տան մոտ ասաց.

—Միայն թե մամային մի՛ սսեք, թե չե նա կասի, վոր ոճը թունավոր է...

Նա այնքան չեր վախենում խայթելու հետևանքներից, վորքան մամային վշտացնելուց: Բայց ամեն ինչ բարեհաջող վերջացավ՝ պարզվեց, վոր ոճը թունավոր չի յեղել:

Մի անգամ մենք կրոկետ էյինք խաղում մեր տան մոտ գտնվող փոքրիկ մարգագետնում: Գիչ հեռու արածում էյին սագերը: Նրանք ունեյին փոքրիկ դեղին սագիկներ: Կրոկետի գընդակը դլորվեց սագերի յերամի ամենախորքը: Սագերը զզուշացան, ձգեցին վզները: Վոչ վոք չեր համարձակվում գնալ գընդակը բերելու: Յեվ ահա Վոլյան բարձրացնելով կրոկետային մուրճը՝ շարժվեց դեպի սագերը: Անհանգստացած սագերը չընկալապես նրան, սկսեցին ֆսսացնել, լեզուներով շրխկացնել, մոտենում էյին նրան, ձգելով իրենց յերկար վզերը: Բայց Վոլյան համարձակ է և ճարպիկ: Գնդակն արդեն ձեռքին, նա հաղթականորեն բերում է այն դեպի խաղացողները: Մենք ծափահարում ենք, իսկ պապան ծիծաղում է.

— Ձե՞՞ վոր նա մեր Սուվորովն է:

Յե՛վ մեծ յերեխաները, և՛ մենք, փոքրերս, տարվում էյինք «մոդա» խաղով: Մոդաների ժուռնալներից կտրտում էյինք մարդկային ֆիգուրները և խաղում նրանցով: Նրանք մեզ մոտ կատարում էյին շուրջերկրյա ճանապարհորդություններ, խորտակվում էյին, ձնաբուքի հանդիպում, սովահար էյին լինում և աղքատության դատապարտվում:

Մենք այնքան էյինք տարվում խաղով, վոր շուտով կտրտված ֆիգուրաների փոխարեն արդեն ինքներս էյինք դառնում գործող անձեր: Շուտ էյինք տալիս սեղանը, վորպես առագաստներ վրա էյինք քաշում սավաններն ու սփռոցները և լողում էյինք ովկիանոսում:

Ահա Նադյան չկարողացավ նալ նստել և մնաց ափին: Նա իսկականի պես լալիս է, մենք բոլորս հուզվում ենք, իսկ նա վապետ Միշան վոչ մի կերպ չի ցանկանում նրա հետևից ուղարկել նավակը: Կարեկցությունը դեպի Նադյան հաղթահարում է Վոլյայի տատանումները, և նա նետվում է «մոլեղնող ովկիանոսի ալիքների մեջ»: Մենք իրար ենք խառնվում, նստում ենք փրկարար գոտիներ, վազվղում ենք տախտակամածի վրա, առաջացնելով՝ նավապետի դժգոհությունը:

Նադյան նավի վրա յե՛ հոգնած ու «թրջված»: Մենք հոգատարությամբ շրջապատում ենք նրան, ուշքի յենք բերում, չփում ենք նրա ձեռներն ու վոտները: Վոլյան հաղթականորեն մեզ է նայում, իր վրայից քամում է յերևակայական ջուրը, չորանում և նույնպիսի յերևակայական կրակի մոտ, և մենք մեր շնորհակալությունը հայտնելով Վոլյային և միանգամայն լրջորեն բարկանալով նավապետ Միշայի վրա, լողում ենք մինչև նոր արկածի, մինչև նոր վտանգի հանդիպելը:

Մենք կաղմակերպում էյինք նաև ներկայացումներ և կրկեսային ցուցադրումներ: Մեր բախում ծածկի տակ պատրաստված էյին ճոճաճողեր, ողեր, ձողեր, աստիճաններ՝ մարմնամարզական վարժությունների համար: Այստեղ ել տեղի էյին ունենում կերկեսային ներկայացումները: Այդ ներկայացումներին մասնակցելու համար ներգրավվում էյին հարեանների յերեխաները: Կատարվում էյին բավական բարդ համարներ: Հանդիսատեսներ շատ կային:

Հաճախ մեր ընտանիքը ամբողջ օրով մեկնում էր լեռները կամ անտառը՝ վերցնելով իր հետ ինքնայեռ և ուտելիք: Մենք, իհարկե, կաղմակերպում էյինք խաղեր, վորոնում էյինք մոլորված ճանապարհորդներին, քարաժայռերից իջնում էյինք պարանե աստիճաններով, կամուրջներ էյինք դրում անդունդի վրայով: Վոդեորվում էյինք և ամեն ինչ վերածում իրականության՝ տանջվում էյինք մոլորվածների համար, ուրախանում էյինք խաղի բարեհաջող յեղով:

Վոլյան շատ էր սիրում յերգեցողություն և յերաժշտություն: Դաշնամուրի և մանդոլինայի վրա նա լավ էր գտնում իր

լռած բոլոր յեղանակները, բայց ձայնով վոչ մի յեղանակ չեր կարողանում վերարտադրել: Յերբ մենք խմբով յերգում եյինք, նա օտարաբար հայտարարում եր.

— Իսկ յես պառլազ կպահպանեմ...

Մի անգամ մեր շքամուտքի մոտ յերգում եր մի աղջիկ: Նրա յերգի յեղանակը տխուր եր: Նա յերգում եր անբախտ վորբուհու մասին, վորը վոչ վոքի չի կարող գանգատվել իր միայնակ կյանքից: Վոլյան կամացուկ վերցրեց աղջկա գլխարկը, զարդարեց ծաղիկներով և աննկատելի կերպով նորեց գրեց յերգուհու մոտ: Այդպես նա միշտ ցույց եր տալիս յերգչին կամ յերածշտին մի վորեւ, թեկուզ և փոքրիկ, ուշադրութիւն:

Մյուս օրը նա մանդոլինայի վրա նվագում եր այդ տխուր յեղանակը և հյուսեց հետեյալ խոսքերը.

Слушайте, товарищи, песенку мою,
Эту песнь сложил я про судьбу свою,
Эта песня вырвалась из души, как стон...
Как-то, братцы, видел я страшный, страшный сон:
Будто бы остался я в свете одинок,
И никто мне ласковых слов сказать не мог...*)

Յեվ միանգամայն տխուր վերջացրեց յերգը.

Но не сон то, братцы, я вам рассказал,
Всю, всю правду-истину от души сказал**).

Նա ելի ուներ տխուր վոտանալորներ, գրված վաղ պատանեկութեան հասակում, բայց այդ վոտանալորները նա խնամքով թաղցնում եր բոլորից:

Տասներեք տարեկան Վոլյան այլևս հիվանդոտ տղայի տպավորութիւն չեր թողնում, բայց նրա գորշ-յերկնագուշտ խոշոր աչքերն առաջվա պես տխուր եյին:

*) Լսեցե՛ք, ընկերներ, յերգն իմ այս,
Վոր հյուսել եմ յես իմ բախտի մասին,
Յերգ մի, վոր պոկվել ե սրտից իմ, վորպես հառաչանք...
Յեղբայրներ, կարծես յերազ լինե՞ր մի սարսափելի,
Վոր իբր մնացել եմ աշխարհում մենակ ու անոգ,
Յեվ վոր քնքուշ խոսքեր ինձ ասել չի կարող վոչ վոք...

**) Բայց դա յերազ չեր, յեղբայրներ, ինչ ձեզ պատմեցի,
Դա ինքը—ճշմարտութիւնն եր, վոր սրտիցս թափեցի:

ՊԱՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆԸ

Վարերիանը 14 տարեկան եր, յերբ կատարեց հեղափոխական կողմակերպութեան առաջին հանձնարարութիւնը:

Մի անգամ պապայի զորախմբի գլխավորների մեջ թուռցիկներ չաղ տվին: Վո՞րտեղից հայտնվեցին դրանք: Ո՞վ համարձակվեց:

Գլխի ընկները դժվար չեր: Թուռցիկները յուրաքանչյուրը խոշորակաձև փաթաթված և կապված եր գունաթելով, հենց այն գունաթելով, վոր կար միայն մեր մամայի մոտ: Փոքրիկ հեղափոխականը դեռ չեր իմանում դադոնիք պահպանելը:

Ճաշի ժամանակ հայրս մուսյլ եր և խոսում եր այն անախտան աղաների մասին, վորոնք չեն հասկանում, թե ինչ հիմարութիւններ են անում, վոր այդպիսի անախտան տղաներին պետք ե ծեծել այն բանի համար, վոր նրանք փչացնում են գլխավորներին...

Վոլյան ամբողջ ժամանակ գլուխն ափսոյի վրա խոնարհած նստած եր:

— Այդ դո՞ւ յես արել—աշխատելով չնայել Վոլյային, հարցրեց պապան:

— Այո՛, յես,—մեղմ, բայց հաստատուն կերպով պատասխանեց Վոլյան:

Հայրս աղմուկով շարժեց աթոռը, չպրտեց անձեռոցը և հեռացավ սեղանից: Ճաշը ընդհատվեց: Ուրեմն ինչ-վոր սարսափելի բան եր պատահել, յեթե միշտ սիրալիր և հանգիստ պապան բարկացավ:



Հաճախ, չնայած վատ յեղանակին և ուշ լինելուն, տղաները, նույնիսկ փոքրերը, տանից դուրս եյին գալիս, խախտելով մամայի խիստ ռեժիմը:

Յես հիշում եմ, թե ինչպես Վոլյան և Միշան ուշ տուն դալու համար պատժված կանգնում եյին անկյունում, իսկ մենք, փոքրերս, մաքսաննդ կերպով նրանց համար քաղցրավենիք և կարկանդակ եյինք տանում:

Բանից դուրս յեկավ, վոր Վոլյան, Սուսորով խաղի պատրվակով, յեռներում, ժայռերի մեջ ամբողջ-պահեստ եր պատրաստել անկեղալ զբաղանդիւթյան համար: Նրա «սովորովյան» գործը դատարարակված եր խիստ կարգապահութեան պայմաններում: Յեվ վոչ վոք յերբեք չմտնեց ամբողջ տեղը և չհախտակեց

այնտեղ պահված գրականությունը: Նրա «գլխավորները» հերթով պահակություն ելին անում ամբողջի մոտ, թշնամուց պաշտպանում ելին արժեքավոր պահեստը, փոփոխվում ելին սահմանված ժամանակին, պահապան ելին կանգնում նաև գիշերվա ժամերին:



Մայրս շատ կրոնասեր եր, և մենք ամեն կերակի գնում ելինք յեկեղեցի:

Վոլյան հաճախ տանն եր մնում, պատճառաբանելով, վոր վատառողջ ե, իսկ յերբ գնում եր, մաման տխուր ասում եր.

— Պատան և Վոլյան ճակատները չեն խաչակնքում:

Կորսուսի բարձր դասարաններից տուն վերադառնալիս Վոլյան մեր նկատմամբ սիրալիր եր և քնքուշ, բայց արդեն հաղվազյալ եր պատահում, վոր խաղեր կաղմակերպի: ԱռանձնաՆալով ալբուս մի խուլ անկյունում, նա շատ կարգում եր:

Ի սարսափ մամայի, Վոլյան զրուցում եր գլխավորներին հետ և նրանց դրքեր եր տալիս կարդալու: Մաման գտնում եր, վոր գլխավորական կարգապահությունը թույլ չի տալիս մտերմական հարաբերություն սպայի և գլխավորի միջև:

— Մի՞թե դպրոցում քեզ սովորեցնում են մտերմանալ սպասյակների հետ: Քեզանից ի՞նչ սպա դուրս կգա, յեթե սպասյակը քեզ չպիտի լսի:

— Սպասյակը նույնպիսի մարդ ե, ինչպես և յես, ինչո՞ւ յես չեմ կարող նրա հետ մտերմաբար զրուցել—վրդովվում եր Վոլյան:

— Դու գլխավորին ասում ես՝ «դուք» և նրան բարեկիր ձևով ես տալիս,—չե՞ք վոր նա սխալ կմեկնաբանի քո վերաբերմունքը և չի հարգի քեզ, չի յենթաբերվի քեզ:

Սկսվում եր վեճը: Վալերիանն ասում եր, վոր ինքը յերբեք սպա չի լինի, իսկ բոլոր գլխավորներին հաշվում ե իրեն հավասար և ստրկական յենթաբերվածություն յերբեք չի ցանկանում նրանց համար:

Նման վեճերից հետո Վոլյան ե՛լ ավելի յեր խորանում, ամփոփվում իր մեջ, մենակ գնում եր լեռները և միշտ կարդում եր: Բայց շարունակում եր գլխավորներին բարեկիր ձևով տալ, մտերմաբար զրուցել և դիմում եր նրանց՝ «դուք»-ով:

Մեր ընտանիքում մաման կենտրոնական տեղ եր դրավում: Նա ավելի խիստ եր, քան պապան: Մենք հաճախ ելինք նեղանում

նրա նկատողություններից, բայց հարգում և սիրում ելինք նրան: Մամային բարկացնելը կամ վիրավորելն ամենամեծ դժբախտություն և հանցագործություն եր համարվում մեզ մոտ: Այդ ըզդացմունքը մեր մեջ պահպանում եր պապան: Նա յերբեք վռչեց չեք թույլ տալիս առանց մամայի համաձայնություն:

— Պա՛պա, կարելի՞ յե դնալ սարերում դրոսներու,—հարցնում ելինք մենք, յերբ մաման տանը չեք լինում:

— Ահա մաման կգա, այն ժամանակ կհարցնեք նրան:

— Պա՛պա, կարելի՞ յե խաղալ սեղանատանը:

— Հարցրե՛ք մամային:

Մենք սիրում ելինք պապային, բայց գլխավորները վոր նա առանց մամայի սիրտ չի անի թույլ տալ նույնիսկ այնպիսի մի դատարկ բան, ինչպիսին ե սեղանատանը խաղալը: Մենք սովորել ելինք զգալ մամայի հեղինակությունը: Յեվ յերբ վեճ եր ծագում Վոլյայի և մամայի միջև, մենք դարձանում ելինք՝ ինչպե՞ս և Վոլյան համարձակվում հակաճառել մամային, բայց հաճախ զգում ելինք, վոր Վոլյան իրավայի յե, և տանջվում ելինք Վոլյայի ու մամայի համար հավասարապես:

Պապայի վերաբերմունքը գլխավորներին հետ նույնպես շատ մտերմական և պարզ եր: Մենք յերբեք չենք տեսել, վոր պապան բղավեր կամ բարկանար գլխավորի վրա, բայց հասկանում ելինք, վոր պապան, վորպես ավագ, իրավունք ուներ գլխավորների հետ կատակ անել և նրանց ասել՝ «դու»: Յեվ մենք մտածում ելինք, վոր յերբ Վոլյան մեծանա, գլխավորներին նույնպես կասի «դու», և նախորդ արդարացնում ելինք նրան:

Զինվորները հորս շատ ելին սիրում նրա պարզ ու սիրալիր վերաբերմունքի համար: Ասում ելին, վոր պապայի զորախմբում գլխավորներին ավելի լավ ելին կերակրում, քան ուրիշ զորանոցներում. հավանորեն այն պատճառով, վոր հայրս լինելով արտասովոր աղնխվ մարդ, ի չարը չեք գործադրում պետական դրամարկը:



Կաղետական կորսուսից Վոլյան մամային նամակ ուղարկեց՝ նրան նվիրած իր բանաստեղծություն հետ.

Откуда, ласточки, вы быстро так летите?

Быть может, вы покинули край родины моей?

Ну что она? Ну что же вы молчите?

Скажите же вы мне хоть чтонибудь о ней.

Быть может, вы в долине той летали,
 Где хижина стоит на берегу реки,
 Где дни мои так быстро протекали,
 Где годы детства милого прошли?
 Бывало, всей семьей на берегу сидели
 И вместе наслаждались прятным, летним днем..
 Быть может, ласточки, вы около летели?
 Ну что мой дом? Скажите же вы мне хоть что нибудь о нем,
 Все так же милая, любимая мной мать
 В слезах меня все поджидает?
 О, как бы я хотел скорей ее обнять,
 О, скоро ли мгновение то настанет?*)

Այդ բանաստեղծությունը համոզեց մեզ, վոր թեև Վոլյան մամայի հետ կոպում է, բայց և այնպես սիրում է նրան:

ԿՍ.ԴԵՏԱԿԱՆ ԿՈՐՊՈՒՍՈՒՄ

Կադետական կորպուսում դաստիարակվում էյին համարյա բացառապես զինվորականների յերեխաները: Մեր ընտանիքի բոլոր տղաները սովորում էյին նույնպես այնտեղ:

Կադետներն իրենց մեծամասնությամբ, ինչպես և նրանց հայրերը, ցարի կողմնակիցներն էյին, պատրաստվում էյին նրան ծառայելու և դրա համար իրենց միապետականներ էյին անվանում:

Վոլյան կադետների մեջ չկարողացավ իր համար ընկերներ

*) Վոլյանից էլ թուրք-թուրք, ծիծեռնակներ, այդպես արագ, Գուրգեն դուք ել լքել-թողել եք յերկիրն իմ հայրենի. Դեհ, ասացե՛ք ի՞նչ կա այնտեղ: Բայց ինչո՞ւ յեք դուք լսում, Ասացե՛ք զեթ մի խոսք միայն իմ հայրենի յերկրի մասին: Գուրգեն թե դուք թուրք-թուրք եք այն հովտի վրայով, Վորտեղ հյուսիսն է մեր կանգնած գետափին, Այնտեղ, ուր հոսեցին որերն իմ այնպե՛ս արագ և անցան, Այնքա՛ն քաղցր տարիներն իմ մանկության: Լինում եր, վոր ամբողջ տնով նստում էյինք գետափին Յեմ միասին հրճվում էյինք ամռան քաղցր օրվա միջին, Գուրգեն թե դուք, ծիծեռնակներ, գետի մոտովն եք անցել, Դեհ՛ պատմեցե՛ք, մեր տան մասին, դսեն մի բան, մի խոսք ասե՛ք: Ինձ հետ այնպես քաղցր ու անուշ վարվող մայրս Միթե այժմ ել, ինչպես վոր միշտ, արցունք աչքին, Սպասում է վերադարձի իմ ճամբին: Ո՛ր, յես ինչքա՛ն կարոտում եմ զրկել նրան նորից, ելի, Յեմ աս՛, միթե կհասնի ժամն այդ ցանկալի:

դսեն և միայնակ եր: Արդեն բարձր դասարաններից նա կապված եր հեղափոխական կադմակերպության հետ:

Մեծ քույրս, Նադեժդան, ավարտելով դիմնադիան, մնաց Ռոսիում ապրելու. նա պատրաստվում եր համալսարան ընդունվելու: Դասերով ապրելով՝ նա իր ընկերուհու հետ միասին մի փոքրիկ բնակարան եր վարձել հանդիստ, սակավամարդ փողոցում: Յես հիշում եմ, վոր նրանց տան պատուհանները նայում էյին դեպի բակը, իսկ փողոցի կողմից պատն եր փոքրիկ յերդեկով, ինչպես ունենում է սրահատունը:

Այդ բնակարանում հաճախ եր հավաքվում հեղափոխական յերեսարարությունը: Կարգում էյին ունիթերաներ, արդելված դրականություն, վիճաբանում էյին: Այստեղ մի ժամանակ գտնվում եր ընդհատակյա գաղտնի տպարան, վորտեղ աշխատում եր Նադեժդան և նրա ընկերուհին: Այդ տպարանը շատ թուլեցիկներ և թերթիկներ եր բաց թողնում, վորոնք տարածվում էյին Ուսկի բոլոր ձեռնարկություններում, ինչպես և զինվորական կադարմաներում:

Այդ բնակարանը՝ քրոջ մոտ եր գալիս և վալերիանը, յերբ նա կադետական կորպուսից արձակուրդ եր ստանում տատի մոտ դնալու համար: Նա գալիս եր իր զինվորական համազգեստով և, այն առանց փոխելու, գնում եր բանվորական ժողովներ կամ դորանոցներ՝ զինվորների հետ զրուցելու:

Սկզբում բանվորական լսարանն անվտանգությամբ դիմավորեց կադետական կորպուսի համադրեստ հազած պատանի ադիտատոր-պրոպագանդիստին: Բայց վալերիանը շուտով նվաճեց ունիլընդիրներ Վտանգությունն ու սերը: Յերիտասարդ բանվորությունը սիրեց նրան, նրան անհամբեր սպասում էյին զինվորներն իրենց գորչ և տխուր կադարմաներում:

— Յես ել անհամբեր սպասում էյի արձակուրդի, վորպեսզի դնամ բանվորական ժողովները կամ կադարմաները—ասում եր վալերիանը—յես այնպես էյի ձգտում գնալ նրանց մոտ, վոր ավելի մեծ հաճույք չէյի պատկերացնում ինձ համար, քան նրանց հետ զրուցելը: Յես այնպես էյի ընտելացել այդ լսարանին, վոր ուղղակի չէյի պատկերացնում այլ կերպ անցկացնել ժամանակը... Իսկ այն, վոր այնտեղ քաղցր և սիրալիկ էյին դիմավորում ինձ, այդ ել ավելի մեծ ուրախություն եր պատճառում ինձ, և յես գնում էյի այնտեղ վորպես մի մեծ տոնի:

Տասնվեց տարեկան հասակում (1904 թ.) վալերիանը մտավ ՌՄԴԿ Ուսկի կադմակերպության մեջ և կուսակցության մեջ

սկսած իր աշխատանքի առաջին իսկ օրերից հարեց բոլշևիկներին Փրակցիային:

1905 թվականին Վալերիանը բողոք դրեց հունվարյան դեղակահարումների դեմ և ցանկանում էր այն ուղարկել Պիտեր, վորպեսզի իր ձայնը միացնի դայրացած բանվորների բողոքին:

Լսելով, թե ինչպես յերկու կադետներ դեղակահարումները դեմ արտահայտվում էին բարձրաձայն, նա առաջարկեց նրանց ստորագրել բողոքը: Նրանք ստորագրեցին: Բողոքի թերթիկը ձեռքից-ձեռք անցնելով հասավ բոլոր կադետներին:

Մի թունդ միապետական կադետ մոտեցավ Վալերիանին և պահանջեց, վորպեսզի նա «չխայտառակի» կորպուսը, այլ պառուի բողոքը և հրաժարվի նրանից: Վալերիանը դործում էր բացահայտորեն և հաստատուն կերպով: Նա հայտարարեց, վոր բողոքը չի պատու և իր խոսքերից չի հրաժարվելու:

— Այդ դեպքում մենք քեզ հետ այլ կերպ կխոսենք, — սպառնաց նրան կադետը:

Նեղարանում շտապ կերպով խորհրդակցություն կազմակերպվեց, վորին Վալերիանին թույլ չտվին մասնակցելու: Նա միայնակ նստած էր դասարանում: Այդ ժամանակամիջոցում նա շատ բան վերամտածեց, հուզվեց, բայց հաստատապես վորոշեց չզիջել միապետականներին:

Խորհրդակցությունը վերջանալուն պես կադետների աղմկոտ ամբոխը չընդատեց Վալերիանին և պահանջեց նրանից հրաժարվել բողոքից և պատուել այն:

Վալերիանը պնդում էր իր առածի վրա:

— Յես չեմ ել մտածում պատուել և հրաժարվել...

— Բոյկոտ, բոյկոտ: Մենք քեզ բոյկոտ ենք հայտարարում, — աղաղակում էին կադետները:

Վալերիանը չհանձնվեց: Բողոքը միակ նրա ստորագրությունով ուղարկվեց Պիտեր: Իմանալով այդ բանի մասին, կորպուսի պետերը անհանգստացան: Վալերիանի գրքերը հուղարկեցին: Գտան Ենդեյսի յերկերը և Լավրովի «Նամակները»: Սկսվեցին բացատրություններ, խոսակցություններ և միայն հորս միջամտությունը փրկեց Վալերիանին կադետական կորպուսից հետապնդումից:

1905 թվականին Վալերիանը դժվարություններ ավարտեց կադետական կորպուսը: Նրա համար, վոր արդեն կապված էր կուսակցության հետ, դժվար էր յենթարկվել կորպուսային կանոններին և կարգապահությանը: Նա սովորում էր դերազանց, բայց

հրաժարվում էր դաս պատասխանել կրոնից կամ վիճում էր քահանայի հետ, այդ պատճառով ուզում էին նրան, կորպուսը վերջացնելուց հետո, ավարտական տալ առանց կրոնի թվանշան դնելու: Իսկ առանց այդպիսի թվանշանի նա չէր կարող ուսումը շարունակել: Յեւ միմիայն այն պատճառով, վոր նա բոլոր առարկաներից ուներ դերազանց թվանշաններ, նրան մի կերպ և կրոնից փոխադրական թվանշան դրին:

Վալերիանն այդ ժամանակ միայն 17 տարեկան էր: Դեռևս անչափահաս լինելով, նա չէր կարող տնորինել իր բախտը: Նա ցանկանում էր ստանալ ծնողների համաձայնությունը, վորպեսզի չչարունակի զինվորական կրթությունը: Նա համոզված էր, վոր ե՛լ մայրս, ե՛լ հայրս նրան կընդառաջեն, և ձգտում էր այդ համաձայնությունը:

Զինվորական դպրոցում ձրի էին սովորեցնում: Ծնողներս միջոցներ չունեին, վորպեսզի վորդուն տային բարձրագույն կրթություն: Սրանք էին մորս գլխավոր փաստարկումները, վորպեսզի Վալերիանը սովորի զինվորական դպրոցում:

— Յես զինվորական դպրոց չեմ դնա: Յես չեմ ուզում սպա լինել: Մամա, մի՞թե դուք այդ չեք հասկանում:

— Իսկ յես այնպե՛ս էյի յերազում քեզ և Տոլյային իբրև սպաներ տեսնելու... Կզայիք արձակուրդին՝ պապադ, Տոլյան, դու և բոլորդ ե՛լ՝ զինվորականներ: Այնքան դեղեցիկ կլինեք—յերազկոտորեն ասում էր մայրս:

— Այստեղ խնդիրը դեղեցկություն մե՛ջ չե, այլ սկզբունքի: Յես չեմ ուզում /և չեմ կարող զինվորական լինել: Զեմ կարող լինել իմ համոզմունքների համաձայն:

— Ի՞նչ սկզբունքներ և համոզմունքներ կարող ես ունենալ—դու դեռ տղա յես, դու տասնյոթ տարեկան ես: Հետո պիտի ասես սոսա և հենց ինձ պիտի մեղադրես, վոր յես չպնդեցի իմ առածի վրա:

Մաման սկսում էր բարկանալ և ջղայնանալ:

Վալերիանը լուծ էր, իսկ քիչ հետո կրկին խոսակցություն էր սկսում այդ հարցի շուրջը:

— Մայրիկ, ինձ փող պետք չի լինելու: Յես ձեզանից վոչինչ, վոչինչ չեմ վերցնի: Յես գիտեմ, վոր դուք ավելորդ փող չունեք: Յես կվստակեմ դասեր տալով:

— Պիտի վազվզես ամբողջ Պետերբուրգով մեկ՝ դասերին հասնելու համար և սովա՞ծ մնաս: Իսկ զինվորական դպրոցում

11-2824099



տաք է, դուրսի և լալ են կերակրում: Դու կնախանձես քո ըն-
կերներին:

Վալերիանի փաղաքշական խնդրանքները փոխվում էյին հա-
մառ սպառնալիքների, թե, միլենոյն է, զինվորական ուսումնա-
րանից կհեռանա:

Հայրս այդ ժամանակ կոկչետավում չեր. նա Պետերբուր-
գում բուժվում եր ուսա-յապոնական պատերազմում ստացած
վերքերից:

Մայրս նրան ուղարկում եր յերկար նամակներ, խորհուրդ եր
հարցնում և խնդրում, վորպեսզի նա ազդի Վալերիանի վրա և,
վերջապես, այնուամենայնիվ խնդիր դրեց կադետական կորպուսի
դիրեկտորին այն մասին, վոր թույլ առողջության հետևանքով
ազատեն իր վորդուն զինվորական ուսումնարանում սովորելուց
և ուղարկեն նրան Ձինվորա-բժշկական ակադեմիա: Մայրս կար-
ծում եր, վոր կադետական կորպուսի դիրեկտորը Վալերիանին
ակադեմիա կուղարկի զինվորական ուսումնարանի հաշվին:

Մորս խնդիրը մերժվեց: «Կույրիչելվը բավականաչափ առողջ
է,—պատասխանեց դիրեկտորը, և յենթակա յե տեղափոխման
Պադետական կորպուսից Պավլովյան զինվորական ուսումնարա-
նը»:

Վալերիանը տխրեց, բայց իր վորոշման մեջ հաստատուն
մնաց:

— Ձինվորական ուսումնարան չեմ գնա: Իմ համոզմունքնե-
րին չեմ դավաճանի: Սպա չեմ լինի:

Հայրս վերադարձավ: Մորս հետ միասին յերկուսով սկսեցին
համոզել Վալերիանին:

— Դու վերջացրու զինվորական ուսումնարանը, մեծաշիր,
իսկ հետո կտեսնենք: Մեծի համար հեշտ կլինի տնորինել իր
բախտը: Ձե՞ վոր դու՞ դեռ տղա յես, դու տասնյոթ տարեկան ես:
Իսկ քաղցել և վաղել դասից-դաս՝ յես քեղ թույլ չեմ տա: Իսկ
յես ել փող չունեմ, վորպեսզի քեղ սովորելու ուղարկեմ:

Հայրս խոսում եր խիստ և հաստատուն:

Իսկ յերբ ծնողներս մնացին մենակ, խնդրողը յեղավ արդեն
հայրս:

— Արի համաձայնվենք, հա՞:—Թող տղան սովորի վորտեղ
ինքն է ուղում: Միջոցներ կգտնենք: Այ՛, կթողնեմ ծխելը՝ տըն-
տեսում կլինի: Կուղարկենք նրան միքանի ուսուրի, դաս ել կդըս-
նի... Թող ինքնուրույնություն սովորի: Տեսնում ես՝ նա ինչպիսի
համառն է և լուրջ:

— Նրա համար վատ կլինի, սովածություն կքաչի: Նա փայ-
լուն առողջության տեր չէ: Դու գիտես...

Բայց պապայի խնդրանքների հանդեպ դիմանալը դժվար եր:
— Դե, ուրեմն վորոշված է: Կոպենհեյք: Կնեղվենք, իսկ մի-
քանի ուսուրի կուղարկենք տղային:

Միքանի որից հետո հայրս խնդրադիր ուղարկեց.

«Յանկանալով վորդուս, Վ. Կույրիչելին, տեղավորել Ձին-
վորա-բժշկական ակադեմիայում, խնդրում եմ կարգադրել հա-
նելու նրան կորպուսի սաների թվից և ինձ տալու նրա փաստա-
թղթերը, ինչպես և կորպուսի ավարտման նրա վկայականը»:

Դրան հետևեց № 173 հրամանը.

«Դ-րդ դասարանի կադետ Վ. Կույրիչելվը, համաձայն ծնող-
ների խնդրին և Սիրիլյան զինվորական չրջանի գործերի հրամա-
նատարի թույլտվության, արձակվում է կորպուսից, անցնելով
ծնողների խնամքին, կորպուսի լրիվ դասընթացը հաջողությամբ
ավարտածների իրավունքներով: Կույրիչելին կորպուսի ցուցա-
կից հանել»:

Վալերիանն այդպես դուրս արձավ զինվորականությունից:
1905 թ. ոգոստոսին նա ընդունվեց Ձինվորա-բժշկական ակադե-
միան:

ՁԻՆՎՈՐԱ-ԲԺՇԿԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՈՒՍԱՆՈՂ

Պետերբուրգում Ձինվորա-բժշկական ակադեմիայի ուսանող
Կույրիչելվը անհապաղ կապվեց կուսակցության կադմակերպու-
թյան հետ և զլխովին թաղվեց հեղափոխական աշխատանքի մեջ:

Մոսկվայում պատրաստվում եր դեկտեմբերյան զինված ա-
պրտամբությունը: Պետերբուրգի կուսակցական կադմակերպու-
թյունը սլիտի ոգներ՝ Մոսկվայի կադմակերպությանը: Կուսակցու-
թյան բոլոր անդամները ներգրավվեցին այդ աշխատանքին:
Պետք եր զենք տեղափոխել Մոսկվա: Այդ աշխատանքով ել դրադ-
վեց Վալերիանը: Հետադարձում նա մեզ պատմում եր Ֆինլանդա-
կան կայսրանից անլեղալ պահեստը զենք տեղափոխելու շատ դեպ-
քերի մասին:

Հադուստի տակից կապած ուսմբերով և նադաններով, նա իր
ուսանողական վերարկուի մեջ գերացած՝ եր թվում: Ծանր ճամպ-
րուկները նույնպես լցված էյին զենքով: Այդ բեռով նա կառա-
պան եր վերցնում և գնում ամբողջ քաղաքի միջով, ոխիկ անելով
քնկնել վոստրիկանության ճանկը:

Ընկերները նրա մոտ գալիս եյին անլեզու գրականութեան համար, վորը պահպանում էր նրա սենյակում: Բնակարանի տիրուհին լավ էր վերաբերւում իր յերիտասարդ հանգիստ կենսութեան նրա մարմնով եւ չէր անցնում, վոր նա հեղափոխական մեծ աշխատանք եւ տանում, վոր իր բնակարանում պահպանում է արդեւ-ված գրականութիւն, իսկ հաճախ եւ՝ ղենքով կամ ուժերերով իբրեւ պաշտօնակ:

Բայց կուսակցական աշխատանքով զբաղւելով, Վալերիանը չէր դադարում Զինվորա-բժշկական ակադեմիայում սովորելուց: Ապրելը դժվար էր: Դասեր ունենալու համար ստիպւած էր մեծ տարածութիւններ անցնել քաղաքում: Պետք էր կատարել այն խոսքը, վոր տվել էր ինքն իրեն—ծնողներէն փող չլինեցնել, ապրել իր ուժերով:

Վորպեսզի հնարավոր լինի շուտ դրամ վաստակել, Վալերիանն արագ կերպով անցնում է մասսաժի դասընթացը, քննութիւն եւ տալիս է սկսում եւ վորոնք վճարովի պրակտիկա: Ընկերներն այստեղ ողնում են նրան: Յեւ ահա նա վազում է քաղաքի մի ծայրից մյուսը, դասից դաս, մասսաժի եւ ղեռ հեղափոխական մեծ աշխատանք եւ տանում:

Մասսաժի ու դասերը շատ քիչ բան եյին տալիս: Վաստակը բավարարում էր միայն մի կերպ սնվելուն եւ սենյակի վարձը վճարելուն: Իսկ ղեռ պետք էր մտածել ակադեմիայի ուսման վարձը վճարելու մասին:

Մորս խոսքերը, իհարկե, իրականացան. Վալերիանն ստիպւած էր հաճախ սոված մնալ: Բայց նա հաստատակամ էր եւ հորից փող չէր խնդրում: Բայց դրա փոխարեն ինչպիսի՞ ուրախութիւն էր լինում, յերբ տանից մթերքների ու տնային քաղցրեղենների ծանրոց էր գալիս:

— Խնճճէք կկազմակերպենք,—ասում էր նա իր մօտիկ ընկերներին:

Ծանրոցը, վոր հաշված էր ամենաքիչը մեկ շաբաթվա համար, չքանում էր մի օրում: Վալերիանը եւ իր ընկերներն այդ օրը ման եյին գալիս կուշտ, գոհ, տոնական տեսքով:

Վոչ մի դժվարութիւն Վալերիանին չէր կարող ստիպել դադարեցնել հեղափոխական աշխատանքը: Այդ աշխատանքի մեջ էր պարունակվում նրա ամբողջ հետաքրքրութիւնը: Առանց հեղափոխական աշխատանքի նա չէր պատկերացնում կյանքը:

Շուտով ակադեմիայում խոսվութիւններ ծագեցին: Ուսանողները դործադուլ եյին հայտարարել: Գործադուլին մասնակ-

ցում էր նաեւ Վալերիանը: Իսկաւ դործադուլավորները հեռացվեցին ակադեմիայից: Պետերբուրգում մնալը հնարավոր չէր: Վաստիկանութիւնը վորսում էր խռովարարներին: 1906 թվի սկզբներին Վալերիանը դնաց Ռմսկ:

ԱՌԱՋԻՆ ՁԵՐԲԱՍԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ

Ռմսկ գալով, Վալերիանն անմիջապէս կապեց կուսակցական կազմակերպութեան հետ եւ շուտով ընտրվեց ՌՍԴԲԿ Ռմսկի կոմիտէի կազմի մեջ, վորն իր մեծամասնութեամբ բոլշեւիկներ էր: Վալերիանի վրա յեր դրված պրոպագանդիստական աշխատանքը ընդհանուր ղեկավարութիւնը: Յեւ նա ինքն էլ բանվորական միջանի խմբակներ էր ղեկավարում: Այդ ժամանակ Վալերիանը ղեռ տանութ տարեկան էլ չկար:

Այդ ժամանակաշրջանում Վալերիանն ստիպւած էր հաճախակի գնալ Կայինսկ, Պետրոպոլիսի, Բարաբինսկ եւ տափաստանային ուրիշ քաղաքներ՝ մասսովիկաների կազմակերպման եւ յերկաթուղային բանվորների ու յերիտասարդութեան հեղափոխական խմբակների ղեկավարման համար:

Շատ վաղուց, ղեռ իմ գիմնադրական տարիներում, Վալերիանը Տոմսկում ինձ ծանոթացրեց ինձանից մոտ յերկու տարով մեծ մի աղջկա հետ: Վալերիանը նրան իր աշակերտուհին էր անվանում: Յեղբորս մահից քիչ անց յես հանգիպեցի նրան Մոսկվայում: Նա արդեն բժշկուհի յեր: Յես հրապիրեցի նրան ինձ մոտ: Յես ցանկանում էյի նրա հետ խոսել յեղբորս աշխատանքի այն շրջանի մասին, վոր ինձ ամենից քիչ էր ծանոթ:

Նա ինձ մի հետաքրքիր դեպք պատմեց Պետրոպոլիսիում յերիտասարդութեան մեջ յեղբորս տարած աշխատանքի մասին: Այդ պատմութիւնը վերաբերում է II Պետական դումայի ընտրական կամպանիայի շրջանին:

Մի անգամ գիմնադրայի իմ ընկերուհին ինձ մի յերեկույթի կանչեց: Յես սիրով համաձայնեցի,—պատմում էր բժշկուհին:—Յերբ մենք յիկանք այնտեղ, ինձ դարմացրեց այն, վոր շատ հասարակութիւն կար եւ մեծ մասամբ անծանոթ: Այստեղ կային եւ՝ ռեալականներ, եւ գիմնադրիստականներ, եւ՝ բանվոր աղջիկներ ու պատանիներ, ինչպէս եւ խանութների վաճառողներ ու վաճառողուհիներ: Յես, այդ բոլորից հիասթափված, ուզում էյի հետ գնալ, բայց ընկերուհիս ինձ բաց չթողեց: Նա սկսեց ինձ հալատացնել, վոր ուրախ եւ հետաքրքիր կլինի: Յես մտացի: Ամբողջ հասարա-

կության մեջ միայն մի ուսանող կար: Նա բարձրագույն էր, փարթամ զանդուր մազերով, մեծ դուրչ աչքերով: Նրա աղջանուհը, ինչպես ինձ ասացին, Կասատկին էր:

Պարելու տրամադրված՝ յես մտածեցի. «Կհրավիրի՞ր ինձ արդյոք այդ ուսանողը պարելու»:

Շատ աղմկալից էր: Սկսեցին ֆանտ խաղալ: Յես տարվեցի իմ ֆանտը և պարտավոր եյի յերգել:

Յես սկսեցի հրաժարվել: Յես չեյի ցանկանում յերգել անձանոթների մեջ, բայց Կասատկինն սկսեց համոզել ինձ: Յեվ նա այնքան պարզ, ընկերաբար մոտեցավ ինձ, վոր յես համաձայնեցի յերգել, բայց և այնպես ինձ սաստիկ չփոթում էր Կասատկինը ուշադիր հայացքը: Յերբ յես վերջացրի յերգելը, Կասատկինը շատ բարձր ծափահարեց, հետո մոտեցավ ինձ և ասաց, վոր յես շատ լավ եմ յերգում, բայց տարրինակ ե, վոր չփոթվում եմ աշխարհի յերիտասարդութան մեջ, ինչպիսին եմ յես ինքս:

— Յեղեք պարզ, չե՞ր վոր այս բոլորը ձեր ընկերներն են, — ասում էր նա:

Սկսվեցին պարերը և ահա յես վալս եմ պարում Կասատկինի հետ: Յեվ սովորական ուրախ դատարկախոսութան փոխարեն յես լսում եմ խոսակցություններ կարգացած դրժերի և այնպիսի հարցերի մասին, վորոնց համար յես բոլորովին պատրաստ չեյի: Պարելով ուրիշների հետ, յես խմացա, վոր Կասատկինը հաճախ է գալիս մեզ մոտ, վոր այսօր նա մեզ զեկուցում պիտի տա Պետական դումայի մասին, վոր նա Պետրոպոլիովսկի յերիտասարդութան բարեկամն է: Ինձ մոտ բոլորը դուրում եյին նրան:

Ինձ դարձացնում էր այն, թե ի՞նչպիսի հարգալի փառաքշանքով եյին վերաբերվում բոլորը գեպի այդ Վալերիան Կասատկինը: Ամեն ինչից զգացվում էր, վոր նա յերիտասարդութան սիրելին է: Նրան ուղղակի Վալերիան եյին կոչում:

Հետագայում, ամեն անգամ, յերբ նա Պետրոպոլիովսկի էր գալիս, յես անպայման լինում եյի յերեկոյթներում: Յես արդեն գիտեյի, վոր պարերը կազմակերպվում են յերիտասարդութանը գրավելու և փոստիկանութան կասկածանքը չհարուցելու համար:

Կասատկինը սովորեցրեց մեզ այլ կերպ նայել կյանքի վրա: Մենք արդեն գիտեյինք, վոր դուրսից ունեն բուռն ինքնություն և մենչեկիկների կուսակցություններ, ինչպես և այն, թե ինչի՞ համար են նրանք պայքարում: Նա մեզ սովորեցնում էր ճանաչել մենչեկիկներին, չհավատալ նրանց և պայքարել նրանց դեմ:

Մենք ոգնում եյինք Կասատկինին թաղցնելու դրականությունով, թուրքիկներ ցրելու, դեուշացնելու կուսակցական կազմակերպությանը վտանգի մասին, փոստիկանութան հետապնդման մասին—և ուրիշ շատ պարտականություններ էր դրել նա մեզ վրա:

Այդ բոլորից բացի, մենք շատ կարգում եյինք: Յերբ նա մեզ մոտ էր գալիս, մեղանից մեկնումեկը հանդես էր գալիս ունիք-բառներով՝ քաղաքական թեմաների շուրջը: Բայց Վալերիանը մեզ հետ զրուցում էր նաև ուրիշ թեմաների մասին: Նա ծիծաղում էր նրանց վրա, ովքեր թողնում եյին կլասիկների ընթերցումը: Նա մեզ ասում էր, վոր հեղափոխականը պետք է կրթված և կուլտուրական լինի, վոր ամեն մեկը, յեթե միայն աշխատի, կարող է կրթություն ստանալ: Անդրադետը չի կարող լավ հեղափոխական լինել:

Հետո մեզ հայտնեցին, վոր Կասատկինը ձերբակալված է: Պետրոպոլիովսկի յերիտասարդությունը ծանր էր տանում նրա ձերբակալումը և ամեն կերպ աշխատում էր կապ հաստատել նրա հետ:

Ինչպիսի՞ ուրախություն էր, յերբ մենք նամակներ եյինք ստանում Կասատկինից: Յուրաքանչյուր նամակում, վորը մեզ հաղորդում էր ստանալ, նա գրում էր այն մասին, թե մենք ի՞նչ պիտի անենք, ինչ պետք է կարդալ, վորտեղից ճարել դրժերը և այլն:

Մի քանի տարուց հետո յես յեկա Տոմսկ՝ սովորելու: Մի անգամ յես գնում եյի ընկերուհուս հետ, վորը Բարաբինսկից յեկել էր Տոմսկ: Մենք հանդիպեցինք Վալերիանին: Նա դեռ հեռվից մեզ նկատեց և սիրալի կերպով հանեց իր գլխարկը: Ուրախ ժպտալով և վողջունելով՝ նա մոտեցավ մեզ:

— Այ՛ թե ինչ, յես չեյի սպասում, թե ո՛ւմ կհանդիպեմ... Բարե:

— Կուկուշկին՝, — ուրախ բացականչեց իմ ընկերուհին:

«Ձի կարող այդպիսի նմանություն լինել», — մտածեցի յես, և ընկերուհուս ուղղելով, ասացի.

— Կասատկին՝:

— Ձե, այժմ յես Կույրիչե՛վ եմ: Յեվ պատկերացրե՛ք՝ Նարե՛մի աքսորական: Յես Տոմսկ եմ յեկել միայն նրա համար, վոր հրաժեշտ տամ մորս և քույրերիս, վորոնք գնում են Տամբով: Քե՛ս յես, իհարկե, կրկին պիտի վերադառնամ Նարիմ:

— Ուրեմն, նշանակում է դուք խաբու՞մ եյիք մեզ, — հասնա՞ծ դուք թուով իմ բերանից:

— Ձեզ՝ վո՛չ և ձեզ ել վո՛չ, — դիմեց նա մեզնից ամեն մեկին, — իսկ վոստիկանությանը և ժանդարմներին խաբում եյի՝ խոստովանում եմ՝ խաբում եյի, — և նա ուրախ ծիծաղեց:



Բայց Վալերիանը միայն յերիտասարդության մեջ չէր, վարհեղափոխական աշխատանք եր տանում Պետրոպոլիտիսկում՝ Կասատկին և Բարբրինսկում՝ Կուկուչկին անվան տակ: Նա չափ և յեռանդով աշխատում եր յերկաթուղայինների մեջ:

— Նա յերիտասարդ եր, բայց միշտ խորապես լուրջ, և գլխացւում եր, վոր այն, ինչ ասում եր, մտածել, կշռել և և ինքը համոզված լինելով իրավացիության մեջ, համոզում եր մեզ, — պատմում է Պետրոպոլիտիսկի մի յերկաթուղային բանվոր:

Նույն 1906 թվին, Պետրոպոլիտիսկից չորս կիլոմետր հեռու, Պյոտարոյե լճի մոտ, անտառում հավաքվեցին դեպոյի, մեխանիկական արհեստանոցների և մյուս ձեռնարկությունների բանվորները:

Անտառ յեկածները բոլորը տեղավորվեցին փոքրիկ խմբերով: Ամեն մի խմբի մոտ թափված եյին դարե՛ջրի միջանի դատարկ շշեր, վորոնցով պետք է խաբեյին վոստիկանությանը, յեթե նա մտածեր հետեւելու, թե ի՛նչ են անում բանվորներն անտառում:

Այտեղ է և Կասատկինը: Նա խոսում է մենչեիկներէ դեմ մղվող պայքարի մասին, այն մասին, վոր Ուսկի կազմակերպությունը մերկացրել է մենչեիկներին և դուքս է մղել նրանց ամեն տեղից:

Կըքոտ և համոզիչ կերպով եր հնչում Վալերիանի յերիտասարդ ձայնը: Բանվորներն ուշադրությամբ լսում եյին նրան: Միտինդն անցնում եր աշխույժ:

Կասատկինից հետո վրա հասավ մի մենչեիկ: Նա աշխատում է վարկաբեկել բուլչեիկներին և անձամբ Վալերիանին: Բայց բանվորները չեն ուզում լսել մենչեիկին:

Անսպասելի կերպով հայտնվեց վոստիկանությունը և շուտով նրա հետեւից՝ Պետրոպոլիտիսկի կայազորի զինվորները:

— Ինչո՞ւմն ե բանը, — վրդովվում եյին բանվորները: — Մե՞թե մենք իրավունք չունենք անտառում գրոսնելու:

Վոմանք նույնիսկ փորձեցին հարբած ձեանալ: Բայց վոստի-

կանությունը և զինվորները գործի դրին մտրակները: Բանվորներն սկսեցին պաշտպանվել ինչով կարող եյին, գործի դնելով նաև շշերը:

Վալերիանը նույնպես տուժեց զինվորների մտրակից, բայց նրան հաջողվեց թաղնվել: Նրան վորոնում եր վոստիկանությունը, բայց ապարդյուն: Բանվորները չհանձնեցին իրենց դեկավարին:



Վալերիանը վառվում եր աշխատանքում: Չնայած նրան, վոր նա ստիպված եր վորպես հալածված դադան փախչել վոստիկանությունից քաղաքից-քաղաք, առանց ապրուստի միջոցների, նա յերբեք չէր վհատվում, յերբեք նրան չեյին տեսել հոգնած կամ իրեն կորցրած: Նա շարունակ կայտառ եր և կարողանում եր քալարել թույլերին և հուսալքվածներին:

Վալերիանին սիրում եյին նրա համարձակության, արիության և հաջող հնարադիտության համար:

Մի յերկաթուղային բանվոր այսպիսի մի դեպք է վերհիշում: Տեղեկություն եր ստացված, վոր Պետրոպոլիտիսկի վրայով քաղաքական կալանավորների եշելոն է անցնում:

Վալերիանը յերկաթուղային բանվորներին պատմեց, վոր կալանավորները փողի և մթերքի կարիք են ուղում և վոր նրանց անհրաժեշտ է ոգնել: Բացի դրանից, անհրաժեշտ է առհասարակ հանդիպում կազմակերպել ցարիզմի կալանավորների տրամադրությունը բարձրացնելու համար:

Վալերիանը այսպես եր մտածում. դեպոյի և արհեստանոցների բանվորները կհավաքվեն կանգ առած դնացքի մոտ, այդ կզբաղի քաղաքի ազգաբնակչության ուշադրությունը և, իհարկե, կհավաքվի բազմություն:

— Լավ կլինե՛ր, յեթե ծաղիկներ լինեյին, — անվճռողականորեն ասաց Վալերիանը:

— Յե՛վ ծաղիկներ կլինեն, և՛ յերաժշտություն կլինի — ուրախորեն վրա բերին բանվորները:

Հեշտ չէր բանտարկյալներ տանող դնացքը կանգնեցնել դեպոյի մոտ, բայց և այնպես այդ հաջողվեց: Մեծ բազմություն հավաքվեց: Յերաժշտություն չկար, բայց հեղեցին հեղափոխական յերգեր, հայտնվեցին աշակերտները՝ ծաղիկներով: Գնացքին հսկող ժանդարմներն անհանգստացան: Հեռախոսով վոստիկանություն և զինվորներ կանչվեցին:

Հետաքրքիրությունները և համակրողները բաղժուկները բան-
տարկյալների վաղուցների մոտ գնալով աճում եր: Ժանդարմներին
աշխույթյան յեկած ղինվորները չկարողացան մոտենալ զնադրին:
Իոլոր գծերի վրա շոգեքարչները վրոնում եյին, բայց թողնելով
ծխի և գոլորշու քուլաներ, վորոնք անթափանցելի ծածկույթ
եյին ստեղծում՝ բաժանելով ցուցարարներին ղինվորներից:

Փողը, մթերքը և ծաղիկները հանձնելով բանտարկյալներին
և վողջույններ փոխանակելով նրանց հետ, բանվորները և զնացքը
գլխավորող յերխասարգուկներն սկսեցին զգուշորեն ցրվել, իսկ
շոգեքարչերի չչակները շարունակում եյին սուլել, և ծխի ծած-
կույթը չպակասեց մինչև այն ժամանակ, յերբ բանտարկյալները
եղևոնը թողեց Պետրոպոլիսի կայարանը:

Այդ գեպը մասին յեղբայրս մեղ նույնպես պատմում եր,
բայց, ինչպես միշտ, լռելով իր գերի մասին: Իսկ բանվոր Կուզ-
նեցովն ասում եր, վոր Վալերիանի դերը հանդիպման կազմա-
կերպման գործում խոշոր եր և լուրջ:

1906 թվի նոյեմբերի 20-ին կուսակցության Մ համագումարի
պատգամավորների ընտրության համար Ոմսկում կոնֆերենցիա
գումարվեց: Պատգամավորների ճնշող մեծամասնությունը բոլ-
շևիկներ եյին:

Կոնֆերենցիան գումարվեց քաղաքի ծայրամասում, մի փոք-
րիկ տան մեջ: Կոնֆերենցիան ընթանում եր իր կարգով: Հան-
կարծ ներս վազեց մի ընկեր և հայտնեց.

— Տուներ շրջապատված ե կաղակներով և վոստիկանությամբ:

Յեմ իսկապես, այդ ուշացած զգուշացումից անմիջապես հե-
տո տուն ներսուժեցին վոստիկանությունը, իսկ նրա հետևից՝
նաև կաղակները:

— Ձեռքները վե՛ր: Կերակե՛նք:

Ձերբակալեցին կոնֆերենցիայի բոլոր 38 մասնակիցներին,
առանց խուզարկելու դուրս բերին փողոց և կաղակների ու վոս-
տիկանության հսկողության տակ ուղարկեցին վոստիկանական
թաղամաս, ուր բոլորին միասին տեղավորեցին մի հեղձուցիչ
փոքր սենյակում: Ողբ քիչ եր: Ծնչել անհնարին դարձավ:

— Զարդե՛լ պատուհանը, — առաջարկեց մեկը:

Վալերիանը, վորը պատուհանի մոտ եր նստած, վոտքով ջա-
րեց ապակին:

Ներս թափանցեց թարմ, սառն ոդը: Հեշտացավ շնչելը:
Իոլորը գլխաթացան:

— Յերգե՛լ, յերգե՛լ: Յեկե՛ք յերգենք:

Կալանավորված աղջիկն սկսեց յերգել հնչուն կոնտրալտո ձայ-
նով մի հեղափոխական յերգ, վորին ձայնակցեցին բոլորը:

Կալանավորվածներին վոստիկանական թաղամասում յերեք
ժամ պահելուց հետո ուժեղացրած պահակախմբի հսկողության
տակ բանտ տարան: Վալերիանը նկատեց, վոր մի ջահել տղա
չատ ե ջղայնանում: Նա նույնպես առաջին անգամն եր, վոր ձեռ-
բակալված եր:

— Ինչո՞ւ յես դողում, Մուղույ, — հարցրեց նրան Վալերիա-
նը — վախենո՞ւմ ես:

— Ձե, հենց այնպես, մի ինչ — վոր ջղային դողոց ե:

— Մենք շատ ենք: Մի՛ ընկճվիր, — ասաց Վալերիանը: — Ափ-
սոս միայն, վոր չկարողացանք պատգամավորներ ընտրել և այն,
վոր քո բնակարանում գրականություն մնաց:

Բանտում բոլոր տղամարդկանց նստեցրին մի կամերա:
Սկսեցին քննել գրությունը: Ձերբակալվածները մեջ միայն
յերկուսը կային, վորոնք առաջներումն ել յեղել եյին բանտում,
իսկ մնացածները վոչ մի անգամ բանտ չեյին նստել: «Ծերունի-
ներից» մեկն սկսեց բացատրել յերիտասարդներին, թե ինչպես
պիտի իրեն պահել բանտում, հարցաքննությունների ժամանակ
և դատարանում:

Վորոշեցին վոչ միայն վոչ մի ցուցմունք չտալ, այլև չպա-
տասխանել, յերբ կհարցնեն իրենց ազգանունները: Ամեն մեկը
պիտի սաճմանափակվեր հետևյալ նախադասությամբ.

— Յես ցարական դատարանի ներկայացուցիչներին վոչ մի
ցուցմունք չեմ տա:

Այդպես ել արին:

Բանտում Վալերիանն ընտրվեց քաղաքական ալիադ: Նա յեր
վարում բանակցությունները բանտի վարչության հետ: Մագած
կոնֆլիկտների ժամանակ նա ցուցաբերում եր հաստատվածու-
թյուն և խոշոր տակոտ. նրան շարունակ հաջողվում եր պաշտպա-
նել բանտարկված՝ ընկերների շահերը:

Բանտից Վալերիանը կապ եր պահպանում ազատ մնացած
ընկերների հետ: Նրան հաց եյին բերում, վորի մեջ գրություն-
ներ եյին լինում դրված: Նա իր խմբակներին հրահանգներ եր
գրում իր շապիկների թևերի և ոճիքի վրա և իրեն տեսակցու-
թյան յեկողներին շապիկը տալիս եր իրր թե լվանալու համար:

Կալանավորներին համեմատաբար ազատ եյին պահում: Նը-
րանց տեսակցելու թողնում եյին վոչ միայն ազգականներին, այլև

բարեկամներին: Վոլյայի հետ տեսակցություն ունենալուց հետո տուն գնալիս, յետ և իմ քույր ժենյան դառն կերպով լալիս է-
յինք: Տունը հեռագիր ուղարկեցինք. «Վոլյայի հանձնով և գին-
վորս—գալտային դատարանին»:

Հայրս, ստանալով այդ հեռագիրը, շտապ յեկավ Ոմսկ:

Յերբ յեղբորս հայտնեցին, վոր նրան տեսակցության և կան-
չում հայրը, նա շատ հուզվեց: Կարծում էր, վոր հայրը նրան
պետի կշտամբի, պետի խնդրի հրաժարվել իր հայացքներից,
իեկիքի դալ: Ընդհանրապես ապաստում էր, վոր հոր հետ ծանր ու
անախորժ խոսակցություններ են լինելու, բայց հաստատուն
կերպով վորոշել էր չհամաձայնել հորս ամեն մի առաջարկին,
վորը դեմ կլիներ իր համոզմունքներին:

Յեւ վորքա՛ն մեծ էր նրա զարմանքը, յերբ կշտամբանքներ
փոխարեն հայրն ուրախ բացականչությամբ փաթաթվեց նրա
վզովը:

—Ինչպես ուրախ եմ... Ինչպես ուրախ եմ... Բայիկա...
Փա՛ռք աստուծու...

Վալերիանը տարակուսում էր՝ ինչո՞ւ և ուրախանում
հայրը:

Բանից դուրս և դալիս, վոր հայրը միայն բանտումն և իմա-
ցել, վոր Վալերիանը պետի ներկայանա վոչ թե զինվորա—գալ-
տային դատարանին, այլ պարզապես զինվորա—ոկրուգային դա-
տարանին: Բանից դուրս և դալիս, վոր մենք հեռագիրը սխալ է-
յինք կաղմել:

Հայր ու վորդի իրար հետ բարեկամարար գրուցեցին և բա-
ժանվեցին վորպես բարեկամներ: Հայրը չէր ել մասնում կշտամ-
բել Վոլյային կամ վորեւ բանում փոխել նրա համոզմունքը:

Դ Ա Տ Ը

Դատը կայացավ 1907 թ. մարտ ամսին: Բոլոր 38 կայանա-
վորներն էլ իրենց կայուն էյին պահում: Ձերբակալվածները մեջ
կային յերկու իրավաբան: Նրանք լավ էյին հասկանում գործի
վարույթը և հրահանգներ էյին տալիս իրենց ընկերներին:

Պարզվեց, վոր վոստիկանապետին հայտնված էր, թե հա-
վաքվել և եքսպրտպրիատորների մարտական զրուժինա: Սպասե-
լով, վոր դրուժինայի կողմից ուժեղ զինադրություն կլինի, նա
վոստիկանություն և կազակներ էր ուղարկել: Պարզվեց, վոր
զինվորական դատարանը հրաժարվում էր այդ գործը վարելուց:

դանելով, վոր չի յեղել նրանում զինված ապստամբության
փորձ, բայց գեներալ—նահանգապետ Նադարովը պնդում էր
հանձնել զինվորական դատարանին, ապացուցելով, վոր զինված
ապստամբության փորձ յեղել է:

Իսկ իրականում պարզվեց, վոր խուզարկության ժամանակ
դաւել էյին կաղմակերպության կնիքը, կոնֆերենցիայի բանաձեւը
և միջանի թուղթիկներ: Վարկարեկիչ ուրիշ վոչինչ չէր հայտ-
նաբերվել:

Յերբ դատարանում հարցաքննում էյին վկաններին, մեղա-
լոյսալներեց մեկը հարցրեց վոստիկանին՝ ի՞նչ յեղան ձերբա-
կալվածներից մեկի տասը ուրբլին և անդրավարտիքը:

Պարզվեց, վոր փողը վոստիկանների մոտ ձեռքից—ձեռք էր
անցել և, վերջապես, չքացել: Նույն վիճակին էր արժանացել
նաև անդրավարտիքը:

Մեղադրյալների նստարանի վրա միահամուռ ծիծաղի
պոռթկում լավեց: Անգամ դատավորները հաղիվ էյին զսպում
ժպիտները: Հետո պարզվում է, վոր խուզարկության ժամանակ
գենք՝ հայտնաբերել են միայն... մի գրչահատ:

Դարձյալ քրքիշ:

Ահա քեզ զինված ապստամբություն՝ գրչահատով:

Դատը վերջացավ: Այն, վոր սպասվում էր, թե ամենաքիչը
չորս տարվա տաժանակրության դատավճիռ կլինի, դրա փոխա-
րեն դատարանն անսպասելի կերպով բոլորին մեղավոր ճանաչեց
24-րդ հոդվածով և վորոշեց յուրաքանչյուրին մեկ ամիս բերդ:

Վալերիանը շատ վշտացած էր:

—Կամ բոլորովին ազատել, կամ աքսոր, թե չե հանկարծ՝
միամսյա բանտային կալանք:

—Ջահելությունը, ջահելությունն և քո մեջ խոսում,—ծի-
ծաղում էյին նրա վրա ընկերները:

Բանտից հետո Վալերիանը զնաց Կայինսկ, վորտեղ հայրս
զինվորական պետ էր:

Հայրս ուռս—յապոնական պատերազմից հետո յենթազնա-
պետի աստիճան ուներ և տեղափոխվել էր նախ՝ Կոկչետավից
Կոկչեցկի՝ Ալտայի վրա, իսկ հետո՝ Կայինսկ—Տոմսկի նահան-
գում:

Վալերիանը շարունակում էր իր ընտանիքում դադունապա-
հալ և յերբեք վոչինչ չէր պատմում իր աշխատանքի մասին:
Մենք հարգանքով էյինք վերաբերվում զեպի նա: Նա մեզ մոտ

միջոց հեղինակութուն եր հանդիսանում: Մենք գիտեցինք, վոր նա ասածուն չի հավատում և չի ճանաչում ցարին, բայց չգիտե-
ինք, թե հարկավոր և արդյոք մեր ոգնությունը Վալերիանին
և ինչո՞ւմն է նրա հեղափոխական աշխատանքը:

Նույնիսկ ինձ տարորինակ եր թվում, թե ի՞նչպես յես և
Ժենյան, լինելով Վալերիանի մոտ, բանտում, վոչ մի անգամ
չհարցրինք՝ ինչի՞ համար և նա բանտ ընկել:

Այդ տեղի յեր ունենում, ըստ յերևութին, այն պատճառով,
վոր և՛ տանը, և՛ Ոմսկում, տատիս մոտ, վորի հետ մենք սաղ-
րում էինք այնտեղ, Վալերիանի մասին վոչ վոք վատ չեր խո-
սում, վորովհետև մենք համոզված էինք, վոր նա վոչ մի վատ
բան անել չի կարող:

ՁԵՐԲԱՎԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԲԱՆՏԵՐԸ

Վալերիանի պատանեկական տարիների մասին իմ բոլոր հի-
շողությունները հանգում են նրա ձերբակալություններին, աք-
սորումներին, բանտում նրա հետ տեսակցություններ ունենալուն
և նրա համար մեր տանը տիրող մշտական տաքնապին:

Ապրելով Կայինսկում, Վոլյան անմիջապես շատ ընկերներ
գտավ իր համար քաղաքական աքսորյալների շրջանում: Մեզ
մոտ հաճախ կազմակերպվում էին դրական յերեկոներ, վիճա-
բանություններ, ընթերցանություն և յերեկոն վերջանալիս յեր-
գում էին հեղափոխական յերգեր:

Մաման սարսափելի ջղայնանում եր, փակում եր լուսամուտ-
ները և համոզված եր, վոր Ժանդարմներն ամբողջ յերեկոն մա-
ն գալիս մեր լուսամուտների մոտ: Նրան թվում եր, թե
ամենուրեք նրան հետապնդում են վոստիկանները և Ժանդարմնե-
րը: Անգամ յեկեղեցում նրան թվում եր, վոր վոստիկանը կանգ-
նած է նրա կողքին:

Մի անգամ Վոլյան անհետացավ: Մաման սարսափելի հուզ-
վեց, հայրս՝ Նույնպես: Վոլյայի անհետացումից մի քանի ոք
հետո միայն գտնվեց մի գրություն, վորն ընկավ նկարի հետևից:

Վոլյան գրում եր, վոր նա այլևս չի կարող մնալ Կայինս-
կում, վոր նրա պարտքն է լինել իր աշխատանքի ընկերների հետ:
Նա խնդրում է չանհանգստանալ իր մասին: Հայրս գրությունը
տարավ վոստիկանապետի մոտ: Իսկ Վոլյան այդ Ժամանակ ար-
դեն հեռու յեր:

Հետո մենք իմացանք, վոր Վոլյայի փախուստը համաձայ-
նեցված է յեղել հորս հետ, վոր Վոլյան պատմել է նրան իր
սարսափելի գրության մասին՝ աշխատանքից հեռու լինելու հե-
տևանքով, վորից նա չպիտի կտրվի: Հայրս ոգնեց նրան փախ-
չելու: Գրությունը յերկար Ժամանակ չեր գտնվում, վորովհետև
հայրս հուզված լինելով, ինքն ել մոռացել եր, թե վորտեղ է
պահել:

Այդ տեղի ունեցավ 1908 թվին:

Կայինսկից Պետերբուրգ գալով Անդրեյ Ստեպանովիչ Սո-
կոլովի անվան անցագրով, Վալերիանն սկսեց կապ վորոնել կու-
սակցական կազմակերպության հետ:

Վատ հանդիպեց նրան Պետերբուրգը: Դասեր գտնել դժվար
եր: Ստիպված յեղավ գնալ վորպես սեւագործ բանվոր ավագա-
հանքերը: Աշխատանքը ծանր եր և հոգնեցուցիչ: Կուսակցական
կապեր հաստատել չեր հաջողվում, վորովհետև բուլժևիկյան
կազմակերպությունը ջախջախված եր: Վալերիանը վորոչեց Ժա-
մանակավորապես գնալ արտասահման՝ Կենտրոնական Կոմիտեյի
և Լենինի հետ կապ հաստատելու նպատակով, իսկ հետո վերա-
գառնալ և նոր ուժերով անցնել աշխատանքի:

Դռնապանը Վալերիանի համար 5 ուրբիով արտասահմանյան
անցագիր ձեռք բերեց: Ահա անցագիրը ձեռքին է, գնացքի տոմ-
սը գնված է: Խիստ հուզված վիճակում Վալերիանն սպասում է
այն մոմենտին, յերբ վաղ առավոտյան վազոն կնստի, վորպեսզի
հեռանա Պետերբուրգից:

Գիշերվա կեսին ներս է վազում խիստ հուզված ընկերը,
վորի հետ Վալերիանը ծանոթացել եր բոլորովին պատահարա-
բանից յերեւաց, վոր Մոսկվայի զինված ապստամբության մաս-
նակիցներից մեկին սպանում եր մահապատիժ: Նրան հարկավոր
եր ուղարկել արտասահման, իսկ անցագիր ձեռք բերել չեն կա-
րողանում:

Չմտածելով վոչ մի բոպե, Վալերիանը գրպանից հանում է
իր արտասահմանյան անցագիրը և տալիս նրան:

Դժվար է նկարագրել ընկերոջ ուրախությունը, վոր տեսել
էր իր ձեռքում արտասահմանյան անցագիր: Նա նետի պես դուրս
թռավ սենյակից, վորպեսզի մահվան պատիժ սպասողին չտապ
ուղարկի արտասահման: Այդ բոլորն այնքան արագ կատարվեց,
վոր Վալերիանը Նույնիսկ չիմացավ փրկվածի աղգանունը:

Դրանից հետո Վալերիանը Պետերբուրգում մնաց մի յերկու

շարժ, թագնալելով մերթ այստեղ, մերթ այնտեղ, հետո ձեռ-
րակարկեց և ուղարկեց Տոմսկ:



Մենք հուզմունքով եմ հիշում յես մի աշտպիսի դեպք: Մենք
հեռագիրը ստացանք, վոր Վոլյան ետապով դնում է Կայինսկի
վրայով և խնդրում է իրեն հանդիպել: Այդ հեռագիրը Վալերիա-
նը գուրս եր նետել, առանց փողի, վագոնի պատուհանից, մի ինչ-
վոր բալետովին անծանոթ մարդու վտոքերի տակ: Նա, կարեկից
մարդ լինելով, հեռագիրն ուղարկել եր ըստ հասցեյի:

Մաման, Նադյան և յես գնացինք կայարան:

Յեկավ գնացքը: Մենք վազում ենք դեպի վագոնը, վորի
պատուհանները, ինչպես բանտում, վանդակապատել են: Պա-
տուհանի վանդակապատի հետեւը—Վոլյան է: Նա ուրախ ժպտում
է մեզ:

— Մայրիկ: Յեկա՞ք, իսկ յես կարծում եյի, թե հեռագիրը
չեք ստանա: Շատ եյի հուզվում:

Մաման լալիս է: Վոլյան խրախուսում է նրան, ասում է,
վոր գործն այնքան ել վատ չէ, ինչքան վոր նրան է թվում...

Ուղեկցորդ գինավորը նկատողութուն է անում նրան: Վա-
լերիանը ուշադրութուն չդարձնելով նրա վրա, խոսում է մեզ
հետ: Ուղեկցորդ գինավորը կրկին նկատողութուն է անում: Իսկ
յերբ չարժվում է գնացքը, մենք տեսնում ենք Վալերիանին, և
նրա գլխի վերևում՝ ուղեկցորդ գինավորի սրի յերախակալը...

Նադյան արտասովելով վազում է դեպի յերկաթուղային ժան-
դարձը, մտածելով, վոր դեռ կարելի յե ոգնել Վոլյային: Մայրս
հաղիվ է կանգնում վտոքերի վրա, իսկ գնացքը կայարանից ար-
դեն հեռու յե գտնվում:

— Ինչո՞ւ համար յես այստեղ յեկա... Ի՞նչ կանեն նրա
հետ,— արտասովալից կրկնում եր մայրս ամբողջ ճանապարհին:

Մեզ մոտ ապրելիս՝ Վալերիանը վոչ մի անգամ չեր պատմել,
վոր բանտում իրեն ծեծում էյին. նա չեր ուզում վշտացնել
ծնողներին: Միայն վերջերս, յերբ մենք հիշեցինք այդ դեպքը,
նա պատմեց, վոր այն ժամանակ ուղեկցորդ գինավորը սրի յերա-
խակալով խիստ ծեծեց նրան մոր հետ խոսելու համար և սպառ-
նում եր շղթայել նրան:

Տոմսկից Վալերիանին բնակեցրին կրկին Կայինսկում:



Հիշում եմ, ինչպես 1909 թվին Վոլյան ապրում եր մեզ
ժող՝ Կայինսկում: Նրա մոտ կրկին դալիս եյին քաղաքական աք-
սորյալները, նա միշտ շրջապատված եր ընկերներով, բարեկամ-
ներով: Բայց այս անգամ Վոլյան սաստիկ ջղայնանում եր: Յես
այդ տեսնում եյի, յերբ նա ինձ հետ պարապում եր մաթեմա-
տիկայից, յերբ նա վորեւ բանի մասին սկսում եր վիճել մա-
մայի հետ:

Այդ ապրիլի 30-ին եր: Գիմնազիայից վերադառնալիս յես
տեսա, վոր մեր տունը շրջապատված եր վոստիկանությամբ:
Ինձ ներս թողին: Տանը սոսկալի անկարգութիւն եր տիրում:

Վոլյան կանգնած եր պապայի սենյակում՝ պատուհանին
կոթնած: Վալերիանի ամբողջ դիրքն ասում եր՝ «կրկին վանդա-
կապատի հետեւը»:

Վոլյային տարան:

Ուղարկութիւնը շարունակվում եր: Ժանդարմները մտան
չտեմարան: Յես գնացի նրանց հետեից: Շտեմարանում դամ-
բյուղների մեջ պապայի զրադարանի գրքերն եյին, իսկ վե-
րևում՝ հեծանների վրա՝ հենց կտուրի տակ—յերկու դամբյուղ՝
Վոլյայի գրքերով: Ժանդարմներն սկսեցին քրքրել պապայի
գրքերը: Գրքերը փոշոտ եյին: Ժանդարմները մրթմրթում եյին,
թափ եյին տալիս իրենց վրայի փոշին և կրկին շարունակում
խուզարկութիւնը:

Վերջապես նրանք նկատեցին Վոլյայի դամբյուղները: Յես
ասացի, վոր այդ գրքերը պատկանում են պապայի վարչությա-
նը: Այստեղ ներկա գտնվող գրագիրը ինձ համար անսպասելի
կերպով հաստատեց, վոր այնտեղ պահվում է վարչության ար-
խիվը: Մեզ հալատացին, և ժանդարմները գնացին, Վալերիանին
մերկացնող վոչինչ չգտնելով:

Գիշերը յես և մաման սկսեցինք այրել Վոլյայի գրքերը:
Յես այդ գրքերը բերում եյի տուն, իսկ մաման, նստած ուժեղ
վառվող վառարանի մոտ, կրակախառնիչով խառնում եր բոցա-
վառվող թուղթը, վորսկսողի չուտ այրվի:

Դուրս վագելով նոր խախտ գրքերի հետեից, յես նայում եյի
ծխնելույզին, խմանալու համար, թե դուրս չի՞ թռչում արդյոք
թղթի մոխիրը, վորով մեր տանը հետևող ժանդարմները կարող
եյին գլխի ընկնել, թե մենք վառում ենք արդեւլած գրքերը, ինչ-
պես յերկյուղ եր կրում մաման:

Կայինսկի բանտում Վոլյայի հետ տեսակցութիւնը տեղի
յեր ունենում յերկու վանդակապատի միջով: Վանդակապատե-
րի մեջ քայլում եր ժանդարմը, բայց և այնպէս ինձ հաջողվեց
Վոլյային ասել, վոր յես և մաման այրեցինք նրա բոլոր գրքերը:
Բայց վորքա՞ն մեծ եր իմ զարմանքը, յերբ ուրախութեան
փոխարեն վրդովմունք և դառնութիւն տեսա յեղբորս դեմքի
վրա:

—Ի՞նչ եք արել: Յես ինչպիսի՞ դժվարութեամբ եմ հաւաքել
այդ գրքերը:

Այս անգամ Վալերիանը ձերբակալված եր մի ծանրոցի հա-
մար, վոր Կիւից ուղարկել եր նրան մի կուսակցական ընկեր:
Ծանրոցի մեջ յեղել եր մայրամեկյան անլեզալ դրականութիւն:



Շտապային կարգով ճանապարհ դնալիս աղնլական ծագում
ունեցող քաղաքական րանտարկյալներն ողտվում եյին վորոշ ար-
տոնութիւններէ: Նրանց չղթայելու իրավունք չունեյին, ասում
եյին՝ «դուք» և ելի այս կամ այն արտոնութիւններն եյին տալիս
վոչ-ազնվական ծագում ունեցող րանտարկյալների հանդէպ:

Մի անգամ Վոլյան հանդիսավոր կերպով հայտարարում և
մամային, վոր նա քրքրել և հոր աշխատանքային ցուցակը, խո-
սել և իրավաբանի հետ և իմացել, վոր նա աղնլական չե, այլ
միայն պատմավոր անձնական քաղաքացի յե:

—Լա՛վ, ել ինչի՞ համար ես դու ուրախ:

—Նրա համար, վոր այժմ յես պատիժները պիտի կրեմ ձեր-
բակալված բոլոր ընկերների հետ հաւասար և չեմ ողտվելու
ավելորդ և ինձ համար վիրավորական արտոնութիւններից:

— Որինա՞կ, — հարցնում ե արդեն հուզված մաման:

— Որինակ, ինձ կարող են չղթայել:

— Յես քեզ բոլորովին չեմ հասկանում: Ուրիշ բանտարկյալ-
ներ աշխատում են մի կերպ թեթեացնել իրենց դրութիւնը,
իսկ դու կարծես դիտմամբ աշխատում ես ե՛լ ավելի վատթա-
րացնել այն, — զարմանում ե մաման:

— Ավելի վատթար վոչինչ լինել չի կարող, իսկ յես կլինեմ
չղթայված թե վոչ՝ դա դատարկ բան ե համեմատած բոլոր
մնացածի հետ, իսկ դրա փոխարեն յես բոլորի հետ հաւասար
կպատժվեմ...

— Վոլյան ընտրել ե մարտիրոս-հեղափոխականի ուղին, —
արտասովելով ասում եր մաման, յերբ Վոլյան մեզ հետ չեւ լի-

նում: — Վոչ իմ աղովթքները, վոչ խնդրանքները նրան չեն ուղղի:

Նամակներում նա Վոլյային խնդրում եր փոխել իր ապ-
րեւակերպը. ասում եր, թե նա այնքան ել ուժեղ չե, վոր պայ-
քարի դաժան ճակատագրի դեմ, վոր ճակատագիրը կկռացնի և
կկտորի նրան:

Վալերիանը պատասխանում եր մորը:

— Յերբ հարգում ես քեզ և գիտակցում ես քո ուղու ճշմար-
տութիւնը, ապա ամեն վիշտ միայն կկռացնի, բայց չի կտորի,
իսկ ճշմարտութեան գիտակցութիւնը կրկին կուղղի և կրկին հա-
մարձակ ու հպարտ առաջ կնայես:

Վոլյայի նամակից արված այս քաղվածքը գրված և մորս
որագրում, վորը պահվում ե ինձ մօտ:

Վալերիանը բանտից կանոնավոր կերպով նամակներ եր
գրում մամային: Նա գիտեր, վոր մաման ջղայնանում և, սպա-
սում ե և կհիմանդանա, յեթե իրենից նամակ չստանա: Նա
յերբեմն մամային ուղարկում եր բանտում գրած իր վոտանա-
վորները: Վերարտագրում եմ նրանցից մի քանիսը:

Эту ночь я без сна проведу,
Буду думать, смеяться, рыдать...
Этой ночью мечту изживу,
Пред зарей перестану мечтать...
Пред зарею я выйду к снегам,
Распахну утешенную грудь...
Улыбнусь дали, синим лесам
И скажу тихо сердцу: «забуди!»)

Ահա մի վոտանավոր, վորն առանձնապէս վրդովեց և հուզեց
մամային.

Замолчи, мое сердце, не думай о воле,
О задумчивом лесе, о солнечном поле.
Слышишь — в камеру входят, грохочут ключи,
Скрой же слабость мечтаний, будь гордо в неволе.
Замолчи!

*) Այս գիշեր կանցնեմ յես անքուն,
Կմտածեմ, կծիծաղեմ, կլացեմ տրտում...
Այս գիշեր յես կապրեմ ցնորքն իմ,
Յե՛վ վաղ ծեղին վերջ կտամ իմ յերազին...
Վաղ ծեղին դուրս կգամ յես ձյունոտ փողոց,
Կրացեմ կուրծքն իմ խոնջած...
Կժպտամ յես հեռուն, անտառներին բիւ
Յե՛վ սրտին իմ կասեմ հուշիկ — «մոռացի՛ր»:

Предо мною твой образ, любимый и милый,
Не дожидаться меня из застенка-могилы,
Позабудь, позабуду и я как нибудь,
Ведь на многие годы мне надобно силы.
Позабудь!

О свободе, о жизни замолкни, рыдания.
Ни оковы, ни стены, ни годы страдания
Не заставят позорней пощады просить.
Не сломить мою гордую стену молчанья.
Не сломить!(*).

Յերբ լուր ստացվեց, վոր Վոլյան աքսոր է գնում, բոլորն
ազատ չունչ քաշեցին: Սոսկալի յեր պատկերացնել Վոլյային
ձողերի հետևում, և դրա համար մենք շարունակ ուրախանում
էյինք, վոր նա բանտումը չէ:

Յուրաքանչյուր նոր ձերբակալումից հետո մաման տխուր
կերպով ասում էր.

— Վոլյան կրկին դործեր է արել—և անհույս կերպով թափ էր
տալիս ձեռքով: Այդ նշանակում էր, վոր Վոլյան կրկին բան-
տումն է:

*) Լսիր, սիրտ իմ, և մոռացիր, վոր անտառներ
կան խոհուն.

Դաշտեր արեւմտ և աղատություն:
Ծիթե չես լսում—շարժվում են խցիկում,
բանալիներն են հնչում, աղմկում,
Դե, թաքցրու, սիրտ իմ, յերազանդե մեղի,
յեղի՛ր հպարտ կալանքում:
Լսի՛ր:

Ին պատկերն է միշտ կանգնած իմ առաջ, քաղցր, սիրելի,
նա անհույս է, չի սպասում, վոր կթողնեմ յես շիրիմ—գնդանն իմ:
Մոռացի՛ր, սիրտ իմ, մի կերպ յես ել կմոռանամ.
Ուժ ու յեռանդ ինձ պետք են դեռ շատ տարիներ:
Մոռացի՛ր:

Ծի՛ հեկեկա, մոռացի՛ր դու, վոր կա արեւ, աղատություն:
Վա՛չ շղթաներ, վո՛չ բանտ—կալանք, տարիներով թող
ինձ տանջեն.

Մեկ է, իզո՛ւր, յես չեմ խնդրի յերբեք անարդ մի
դժուրյուն,
Յեւ չեն կտարի նբանք, յերբե՛ք, լուռթյան պատմ իմ պինդ,
հպարտ:
Ձեն կտարի:

—Աղջիկա, վոչ վորի չասես, վոր քո յեղբայրը քաղաքական
հանցավոր է,—մի տեսակ ճնշվելով խնդրում էր հայրս:

Մեզ արդելում էյին գիմնադրւում Վալերիանի մասին խո-
սել նաև ծանոթների հետ: Դա մեզ շատ էր վիրավորում: Մենք
թաքուն հպարտանում էյինք Վալերիանով, անգիր էյինք անում
նրա վոտանավորները և արտասանում:

Ահա մի աշխույժ, կենսուրախ բանաստեղծություն, վոր
դրել էր Վալերիանը նարիմյան աքսորում.

МОРЕ ЖИЗНИ

Гей, друзья! Вновь жизнь вскипает,
Слышны всплески здесь и там.
Буря, буря наступает,
С нею радость мчится к нам.

Радость жизни, радость битвы
Пусть умчит унынья след.
Прочь же робкие молитвы,
Им уж в сердце места нет.

В сердце дерзость. Жизни море
Вскинет нас в своих волнах.
И любовь, и жизнь, и горе
Скроем мы в его цветах.

Горе выпадет на долю,
Буря шум поможет нам
Закалить страданьем волю
И не пасть к его ногам.

Будем жить. Любовь? Чудесно!
В бурю любитесь сильнее.
Ярче чувство, сердцу тесно
Биться лишь в груди своей.

Так полюбим! жизни море
Вскинет нас в своих волнах.
И любовь, и жизнь, и горе
Скроем мы в его цветах.

Наслаждение мыслью смелой
Понесем с собою в бой,
И удар рукой умелой
Мы направим в строй гнилой.
Будем жить, страдать, смеяться,
Будем мыслить, петь, любить,
Буря вторит, ветры злятся.
Славно, братцы, в бурю жить!

Ну те ж в волны! Жизни море
Вскинет нас в свонг, волнах.
И любовь, и жизнь, и горе
Скроем мы в его цветах*).

ԿՅՈՒՆԻ ԾՈՎԸ

*) Ե՛յ ջան՛, տղեր՛ք, կյանքն ե յեռում նորից ու նորից,
Լսվում ճողվյունը նրա ալստեղ, ալստեղ,
Փոթորի՛կ, փոթորի՛կ ե պայթելու ահեղ,
Յե՛վ նրա հետ խնդությունն ե սլանում դեպի մեզ:

Խնդությունը կյանքի, խնդությունը կովի, պայքարի:
Թո՛ղ լքումի հետքերն այլևս կորչեն,
Հեռու մեզնից վհատության աղոթքներ,
Մեր արտերում նրանք այլևս տեղ չունեն:

Մեր արտերում այժմ խղիարություն ե յեռում,
Կյանքի ծովը կբարձրացնի մեզ իր ալիքներում:
Յե՛վ սերը, ե՛ խինդ, ե՛ վիշտը մեր կծածկենք մենք, այո՛,
Նրա փրփուրն ծաղիկների ներքո:

Յեթե սե ընկնի ճակատագրի որին,
Փոթորիկի շաշյունը կոզնի մեղ,
Վոր կռնք կամքը մեր տանջանքով,
Վոր չընկնենք մենք այլևս նրա վտուով:

Կատրենք: Մե՛րը, Ո՛հ հրաշք ե, հրաշալի,
Փոթորկում սերն ուժեղ ե, հույզը սլաքառ ավելի,
Յե՛վ մեն մի սրտին նեղ ե, դժվար այն,
Վոր խփում ե լուկ մի կրծքում միայն:

Արդ թիւնք ուրեմն: Կյանքի ծովը մեզ
Կբարձրացնի վեր՝ իր ալիքներում,
Յե՛վ սերը, ե՛ խինդ, ե՛ վիշտը մեր կծածկենք մենք, այո՛,
Նրա փրփուրն ծաղիկների ներքո:

Մարտի յեննք խղիար մտքերով խնդուն,
Յե՛վ հմուտ ձեռներով մեր տանը հարվածը վերջին՝
Փռած ու հին կարգերին:
Կյանք, տառապանք, խնդում,

Յեբաղ, յերդ ու ուր մերն ե, մերը:
Ջանակցում ե փոթորիկը, չարանում ե քամին՝
Ինչ լավ ե, տղերք, ապրել փոթորիկի ժամին:

Գնա՛նք ալիքների մեջ, Կյանքի ծովը
Կբարձրացնի մեզ իր ալիքներում,
Յե՛վ սերը, ե՛ խինդ, ե՛ վիշտը մեր կծածկենք մենք, այո՛,
Նրա փրփուրն ծաղիկների ներքո:

Այս բանաստեղծությունը յեղրայրո հաճախ եր արտասա-
նում ընտանեկան և ընկերական յերեկույթներում:



Կայինսկից հորս տեղափոխեցին Տյումեն: Շուտով՝ 1910 թը-
վին նա մեռավ: Վուլյան հորս թաղմանը չկարողացավ գալ: Նա
այդ կորուստը շատ ծանր կրեց:

Հորս գերեզմանաքարի վրա գրված ե. «Թանգազին ամուս-
նուն և սիրելի հորը: Յերեկանները յերբեք չեն մոռանա քեզ և
կլինեն այնպիսի ազնիվ աշխատողներ, ինչպիսին դու եյիր: Դրա-
նումն ե քո պարգևը»: Մաման այդ մակագրությունը համաձայ-
նեցրել եր Վալերիանի հետ: Նա հավանություն եր տվել:

Վուլյան սիրում եր հորը: Նա դիտեր, վոր հայրը նրա պատ-
ճառով դժվարություններ եր առաջ դնում պաշտոնում և նույնիսկ
միջանի անդամ կալանքի տակ եր առնված: Բայց հայրը այդ բո-
լորը ներում եր Վալերիանին, չեր կշտամբում նրան, չեր համո-
զում հրաժարվել քաղաքական դործունեությունից: Վալերիանն
այդ գնահատում եր և միշտ խորը դժվանքով և թախիծով եր խո-
սում հոր մասին:

Այս անգամ մեղ մոտ, Տյումենն յեկած Ժամանակ (1910 թ.)
Վալերիանը պատմեց Պետերբուրգում հոր հետ ունեցած հան-
դիպման մասին:

Վալերիանն ուրիշի անցագրով ապրում եր Պետերբուրգի
աղքատ թաղերից մեկում, ձեղնահարկում:

Մի անգամ գալով իր սենյակը՝ նա այնտեղ տեսավ պապային:
Տարորինակ եր տեսնել ձեղնահարկում յենթադնապետին՝ հա-
մագրեստով, չքանչաններով: Վուլյան սկսեց համոզել նրան հյու-
րանոցում համար վերցնել: Հայրը բողոքեց: Վալերիանն անդա-
ցուցում եր, վոր չի կարելի ապրել հսկողություն տակ գտնվողի
մաս և այն ել ձեղնահարկում: Վուլյան չեր ողնում: Հայրը
կրկնում եր.

— Յեթե դու, իմ վորդին, այստեղ ես ապրում, յես ել կապ-
րեմ քեզ հետ...

Վուլյան հետագայում հաճախ եր սլատմում այդ դեպքի
մասին և միշտ ընդդժում եր.

— Յենթադնապետ և հանկարծ ձեղնահարկում, անլեզալ
փորդու մոտ:

Միջանի որ միայն մնալով մեզ մոտ՝ Տյումենում, Վալերի-
անը գնաց Տոմսկ, վորպեսզի ներկայանա դատարանին՝ Կիևից
Կայինսկում անլեզալ գրականության ծանրոց ոտանալու գոր-

ծով, վորի համար արդեն պատիժ կրել եր բանտում՝ սկզբում Կայինսկում, իսկ հետո՝ Տոմսկում: 1910 թ. մայիսի 1-ին դատական հատուկ խորհրդակցությունը վորոշեց Վալերիանին յերկու տարով վտարել Նարիմի յերկիրը՝ վոստրիկանության հսկողության տակ:

ՆԱՐԻՄԻ ԱՔՍՈՐԱՎԱՅՐՈՒՄ

1910 թվի ոգոստոսի 8-ին Վալերիանը շոգենալով հասավ աքսորի տեղը՝ Նարիմ: Դա մի հետ ընկած, փոքրիկ քաղաք է՝ Տորոլսկից 500 կիլոմետր հեռու: Նարիմը տարվա մեջ վեց ամիս կտրված է արտաքին աշխարհից: Քաղաքական աքսորյալներն այստեղ ընկնելով՝ զրեթե հույս չունենին աղատվելու: Վոստրիկանական հսկողությունը խիստ եր:

Վալերիանի Նարիմ գալուց հետո նկատելիորեն փոխվեց աքսորյալների կյանքը: Նա կարողացավ, ինչպես ամեն տեղ, գրավել համակրանք, վստահություն և արժանի հեղինակություն:

«Վալերիանը թարմ հոսանք մտցրեց մեր կյանքի մեջ: Մեզնում աշխատանքը յեռալ սկսեց: Նա այնքա՛ն հեշտ, այնքա՛ն ուրախ հավաքում եր իր շուրջը և՛ յերիտասարդ, և՛ հասակավոր մարդկանց, վոր նույնիսկ նրանք, ովքեր բոլորովին սկզբում թերահավատությամբ եյին վերաբերվում նրա ջանքերին, սկսեցին հարգել նրան, հաշվի առնել և լսել նրա կարծիքը», — իր հիշողությունների մեջ ասում է Նարիմի նախկին մի աքսորյալ:

Այդ ժամանակ Նարիմի աքսորավայրում եր գտնվում Յա. Մ. Սվերդլովը: Նա հատկապես հայածվում եր վոստրիկանության կողմից. Նարիմից փախչելու փորձ կատարելու համար նրան քչել եյին «Մաքսիմկայի քարավիր» — յերկրի մի շատ խուլ և հեռավոր տեղ: Վալերիանը վոստրիկանության դեմ պայքար կադմակերպեց Յա. Մ. Սվերդլովին Նարիմ վերադարձնելու համար, Համառորեն և յերկար պայքարում եյին աքսորյալները վոստրիկանության դեմ, և վերջիվերջո նրանց հաջողվեց ազատել Սվերդլովին «Մաքսիմկայի քարավիր» և բերել Նարիմ:

Բացի վոստրիկանության դեմ ուղղված պայքարից, բոլշևիկները կատաղի կերպով մարտնչում եյին մենչևիկների դեմ, վորոնք ամենուրեք փորձում եյին խանդարել՝ աքսորյալներին ցարիզմի դեմ ուղղված հետագա պայքարի համար պատրաստելու գործին:

—2ի կարելի դրադարանի աշխատանքը վստահել մենչևիկ-

ներին, — ասում եր Վալերիանը, — նրանք կարող են վեհաժողով գրականություն ձեռք բերել, ազխտացիա անել և խանդարել մեզ: Բոլշևիկը պետք է աշխատի դրադարանում, նա պետք է հետևի, թե ինչ է կարգում յուրաքանչյուր աքսորյալ, և ղեկավարի այդ ընթերցանությունը:

—Քաղաքական գիտելիքների մեջ պիտի ուժեղ լինել: Աքսորը — դա հարկադրական անդործունեյություն է: Մենք վոչ մի բնական չափով մոռանանք, վոր պայքարը շարունակվում է, վոր մենք շարքերից դուրս ենք յեկել ժամանակավորապես և յեթե վոչ այսօր, ապա վաղը մենք կկանգնենք սոցիալիզմի համար մարտնչողների շարքերում: Մարտնչողները միշտ պիտի իմանան, թե ինչի համար են պայքարում, — շարունակ կրկնում եր Վալերիանը:

Բոլշևիկները քաղաքական դպրոց կազմակերպեցին: Դասախոսությունները կարգում եյին Սվերդլովը և Կուլբիչեվը:

«Բայց շուտով մենք տեսանք, — հիշում է Վ. Կոսարեվը, — վոր դպրոցի «ուսանողներն» ընդհանուր գիտելիքներ չունեն և դա խոչընդոտ է հանդիսանում թեորետիկ հարցերի հետագա ուսումնասիրությանը: Վալերիան Վլադիմիրովիչը ձեռնարկեց հանրակրթական խմբակի կազմակերպմանը և ինքն ել վարում եր խմբակի պարապմունքները: Խմբակը և դպրոցը մտնողների համար մենք պայման եյինք դնում, վոր ուսումը վերջացնելուց հետո պետք է փախչել և աշխատել ընդհատակյա կազմակերպության մեջ»:

Յուրաքանչյուր շոգենալ վոր Նարիմ եր գալիս, քաղաքական աքսորյալները դուրս եյին գալիս հանդիպելու նոր ընկերների:

Անմիջապես սկսվում եր հարցուկործը:

—Ո՞վ է այստեղ բոլշևիկ:

Յեւ աքսորյալ բոլշևիկները միջանի որով դնում եյին Կուլբիչեի կամ Սվերդլովի մոտ: Ապրելով նրանց մոտ, ծանոթանում եյին իրադրությանը, իրենց համար ապրելու հարմար տեղ եյին վորոնում և սկսում եյին աշխատել խմբակներում, գրադարանում, ճաշարանում, կոոպերատիվում:

Փախուստները կազմակերպվում եյին ձմեռը: Ամառը դժվար եր փախչել վոստրիկանության արթուն աչքերից: Ձմեռը հեշտ եր: Ձմեռը աքսորյալները դնում եյին անառու փայտի: Իրենք եյին կտրում դարավոր սոճիները, իրենք օղոցում և իրենք բե-

բում: Շատերն անտառից այնպես ել չեյին վերադառնում: Նրանց վորոնում էյին, բայց մեծ մասամբ՝ անհաջող:

Աքսորյալների կողմից ճաշարանի, փոխադարձ ոգնության գրամարկի, գրադարանի, հանրակրթական դպրոցի լավ կազմակերպումը չափազանց անհանգստացրեց տեղական ժանդարմներին և վոստիկանությանը:

—Ի՞նչպես թե՛ Աքսորյալներ և ամեն ինչ իրենցը:

Վրդովեցին, դեռ ու դեն ընկան և չլուծելով այդ հարցը, Տոմսկից ոգնություն կանչեցին: Գալիս եր ինքը՝ Տոմսկի նահանգապետը՝ գինված թիկնադորների հսկայական վոհմակով:

Վորոչ ժամանակից հետո, 1910 թվի նոյեմբերին, ժանդարմները կրկին վերադարձան Նարիմ, վորպեսզի լիկվիդացիայի յենթարկեն «հանցագործ հասարակությունը»:

Աքսորյալներից մեկը Տոմսկում ապրող իր ծանոթուհուն ուղած նամակում պարծեցել եր նարիմյան քսորյալների ամուր կազմակերպությամբ, պատմել եր դպրոցի մասին, խմբակներում կարդացվող ռեֆերատների մասին և, ընդամեն, այնպես եր վորդեկովել, վոր նույնիսկ տվել եր խմբակները հաճախող ընկերների աղագնունները: Բռնելով այդ նամակը, ժանդարմները գնացին ուղղակի «սրտաբաց» մարդու բնակարանը և այնտեղ ձերբակալեցին նամակում հիշված վեց ընկերներին:

Այնուհետև, խուզարկության ժամանակ գտած նյութերի հիման վրա, ձերբակալեցին ելի 11 մարդ: Այդպիսով, ընդամենը ձերբակալվեց 17 մարդ:

Ձմեռ եր: Բոլոր ձերբակալվածներին տանելու համար շատ ձիեր էյին պետք: Նրանց տանում էյին ուժեղ պահակախմբի հսկողության տակ—յուրաքանչյուր սայլում կար յերեք—չորս պահակ: Տեղական բնակիչները լավ էյին ճանաչում բոլոր աքսորյալներին և նրանց համակրում էյին: Նրանք կազմակերպեցին յուրահատուկ սաբոտաժ՝ նրանցից վոմանք ասում էյին, թե իրենց ձին հիվանդացել և, մյուսները՝ թե՛ ձիերին տարել են փայտի, իսկ վոմանք ել՝ թե՛ ձիերը պայտած չեն: Դրա համար ել առաջին գիշերը հաջողվեց տանել միայն 10 մարդ: Մի ձերբակալվածի հաջողվեց փախչել:

Վալերիանը գնաց յերկրորդ հերթի հետ, առաջնայան: Դուրս յեկան նրան ճամբու դնելու:

—Մի ընկերոջ անգղուչության պատճառով պոկում են միանգամից 16 մարդ... Աշխատանքից կտրում են... Դուք պիտի շարունակեք ոկտած աշխատանքը, հիշեք, վոր այն ձեզ պատ-

րաստում և մեծ պայքարի,—այդպես հրաժեշտ տվեց Վալերիանը իրեն ճամբու դնող ընկերներին:

Տոմսկում չկարողացան ձերբակալվածների դեմ լուրջ մեղադրանք դնել, և չորս ամիս բանտում պահելուց հետո նրանց բոլորին նորից վերադարձրին Նարիմ:

Բացի քաղաքական և հանրակրթական հարցերին վերաբերող պարապմունքներից, Վալերիանն աքսորյալներին ծանոթացնում եր նաև կլասիկ գրականությանը:

Մի ընկեր պատմում և, թե ինչպես աքսորյալները միտինգ կազմակերպեցին Լ. Ն. Տոլստոյի մահվան առթիվ: Վալերիանը հանդես յեկավ ճառով, վորով նա տվեց Տոլստոյի ստեղծագործության վերլուծությունը:

Մեր լսարանը կանգնած եր, վորպես հիպնոսացված, լսելով դեռ բոլորովին յերևաասարդ Կուլբիշչևին: Յե՞րբ եր կարողացել այդ պատանին այդքան իմանալ և՛ քաղաքական հարցերից, և՛ գրականությունն ուսումնասիրել,—հարցնում էյին ունկնդիրները:

Աքսորյալայրում Վալերիանը շատ եր կարգում և խմբակներում մի շարք առարկաներ եր ավանդում: Դրա համար, իհարկե, պետք եր լինում, վոր ինքը պարապի շատ և հիմնավորապես:

«Այն ամենը, ինչի ձեռնարկում եր Վալերիան Վլադիմիրովիչը, նա կիրառում եր մի տեսակ հեշտ և նույնիսկ ուրախ: Նա յերբեք չեր ընկճվում և իր արիությամբ վարակում եր բոլոր չըջապատողներին»,—ասում էյին Վալերիանի մասին:

Նարիմի կալանատունը շատ նեղ եր և անտանելի, բայց և այստեղ Վալերիանը շարունակում եր իր արիությամբ և ուրախությամբ բարձրացնել ուրիշների տրամադրությունը:

Նա միշտ, ինչքան ել հողնած լիներ և ինչքան ել ուշ պտուկեր քնելու կամ ինչքան շուտ վեր կենար, միշտ պարապում եր մարմնամարզությամբ:

Մեզ մոտ՝ Նարիմում կազմակերպվում էյին նաև պարի յերեկույթներ: Այդ յերեկույթներին Վալերիանից ավելի ուրախ և ուրախ հնարագետ վոչ վոք չկար»,—Վալերիանի մասին գրում և մի կին աքսորյալ:

Հասավ 1912 թվի մայիսի 1-ը: Աքսորյալները կտրմի գրեթե գնացին անտառի բացառը: Տոնին ճառով հանդես յեկավ Վալերիանը: Վոստիկանությունը ձերբակալեց մայիսմեկյան ցույցի շատ մասնակիցների և դատական գործ ստեղծեց Նարիմի աք-

«սորյալների խռովութեան» վերաբերյալ: Բայց ձերբակալվածներն ազատ արձակվեցին կալանատնից՝ մեղադրական փաստեր չլինելու պատճառով:

1912 թվի մայիսի 7-ին Վալերիանն ավարտեց աքսորման ժամկետը և «անցիկ վկայականով» դնաց Ոմսկ:



Աքսորից վերադառնալով Ոմսկ, Վալերիանն իջավ իր տատի մոտ: Ձինապարտութունից նրան ազատեցին: Վալերիանը յերբեք չէր յենթադրում, Վոր «Նարիմի աքսորյալների խռովութեան գործը» դեռևս կարող է յերևան գալ և իր հետևանքներն ունենալ: Բայց այն յերևան յեկավ: Ոմսկ գալուց հետո Վալերիանը շուտով ձերբակալվեց Նարիմում մայիսմեկյան ցույցին մասնակցելու համար և ուղարկվեց Տոմսկի բանտը:

Այստեղ արդեն հավաքվել էին Նարիմի նախկին բոլոր աքսորյալները, վորոնք մասնակցել էին մայիսմեկյան ցույցին:

«Տոմսկի բանտում մենք գտնվում էինք չափազանց ծանր պայմաններում: Ինքնակալութունն ամեն ինչ անում էր, վոր պեսզի վատթարացնի մեր դրությունը: Բանտի վնասակար ազդեցութեանը հակաանդործելու համար ընկեր Կույրիչեվն ամեն օր պարապում էր մարմնամարզութեամբ և ստիպում էր մեզ անել նույնը»,—հիշում է մի ընկեր:

Իսկ Վալերիանն ինքը պատմում էր, թե ինչպես իրենց ամենօրյա մարմնամարզութեամբ զբաղեցին ժամապահ զինվորի ուշադրութունը: Ժամապահ զինվորը, ինչպես յերևում էր, մի խուլ գյուղից էր և մարմնամարզության մասին վոչ մի հասկացություն չուներ: Իր յուրաքանչյուր հերթափոխության ժամանակ զիսելով նույն բանը, նա համոզվել էր, թե բոլոր ձերբակալվածները ինչ—վոր կռապաշտներ են և ամեն առավոտ ու յերեկո իրենց աղոթքն են անում:

Մի անգամ, ցանկանալով ծիծաղել կռապաշտների կրոնի վրա, նա Վալերիանին դիմեց մի ինչ—վոր դիտողութեամբ: Վալերիանն սկզբում նրան չհասկացավ, իսկ հասկանալուց հետո այնպես ուրախ ծիծաղեց, վոր նորից տարակուսանքի մեջ գցեց ժամապահին: Վալերիանը և նրա ընկերները մեծ գովարտութեամբ հասկացրին նրան, թե ինչ բան է մարմնամարզությունը և թե ինչի համար են նրանք պարապում զբանով:

Այդպես եր անցկացնում Վալերիանն իր յերիտաստը կյան-

քը: Այդպես եր նա ամենադժվարին պայմաններում կոփում իրեն և անդադար սովորում, սովորում և սովորում:

—Հանգիստ կյանքի փոխարեն, կամֆորտով և հարմարություններով կյանքի փոխարեն Վալերիանն իր համար ընտրել է սոսկալի, տանջալի կյանք,—չարունակ նրա մասին ասում էր մաման:

Համենայն դեպս նրան վիճակվեց տեսնել իր վորդուն, անվահեր հեղափոխականին, անհաշտ, մինչև վերջ կուսակցության հավատարիմ բոլշևիկին՝ իր նպատակին հասած: Նա մեռավ 1921 թվին, յերբ Վալերիանն արդեն աշխատում էր Մոսկվայում: Մորիցս չի մնացել նույնիսկ համեստ գերեզման: Բայց դրա փոխարեն այնտեղ, ուր նա յե թաղված, խոյացել է մի հզոր գործարան, վորի շինարարութեան մեջ գործոն մասնակցութուն էր ցույց տվել նրա վորդին:

Ա.ՉԱՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1913 թվին յես ուսուցչուհի էյի Տամբովի նահանգում, Լիօնի Գորի գյուղում: Մաման և յերկու քույրերս—Մարուսյան և Գալյան—ամառն ինձ մոտ էյին ապրում: Մեզ մօտ յեկավ և Վոլյան:

Նա հազել էր ալ—կարմիր կուժաչե վերնաշապիկ, իսկ գլխին ուսանողական գլխարկ, վորը նրա համար փոքր էր: Նա մեզ պատմում էր, վոր այդ կարմիր վերնաշապիկով Կայինսկի ախումբում պարել է ծանոթ աղջիկների հետ, առաջացնելով նրանց մայրերի և վաստիկանութեան ներկայացուցիչների գոգոհությունը:

Հիշում եմ, վոր Վոլյան յեկավ պատույած կոշիկներով: Մեզ բոլորիս մոտ փող չատ քիչ կար: Մաման ասանում էր փոքրիկ կենսաթոշակ, յես՝ ուսուցչուհու վոչ—մեծ ուճիկ, իսկ Մարուսյան և Գալյան այն ժամանակ դեռ չէին աշխատում: Կոշիկ գնելու փող չկար, ստիպված էյինք հները կարկատել տալ, իսկ մինչ այդ Վոլյան պիտի ման գար գյուղական տրեխներով, վոր նրան տվեց դպրոցի պահապանը:

Կարմիր վերնաշապիկ, յերկար, խուճուճ, գրեթե մինչև ուտերը հասնող մազեր, ուսանողական փոքր գլխարկ և, ի լրումն այդ ամենի, տրեխներ—ահա ուշադրա՛վ պատկեր:

Բայց այդ հանդամանքը Վոլյային քիչ էր վշտացնում և չփոթեցնում: Գյուղում նրա համար շատ բարեկամներ գտնվեցին՝

տեղական ուսուցչուհիներ, հողաչերտն ուսումնասիրող ուսանողներ: Բոլորը սիրեցին Վալերիանին: Նա կարողանում էր իր շուրջը համախմբել համերաշխ ընկերութուն: Կաղմակերպվում էին ուրախ զրոսանքներ ձորերում և անտառներում:

Վալերիանը շատ ուժեղ և ճարպիկ էր:

Մի անգամ մենք զրոսնում էինք գյուղից հեռու: Պետք էր անցնել մի խոր ձորակ, վորն ուներ ուղղաձիգ զառիվայր: Զորակի շրջանցը հեռու կտաներ, և Վալերիանը հրամայեց.

— Ավելի համարձակ: Իջե՛ք:

Բոլորն սկսեցին զգուշարար իջնել ձորակի խիստ թեք լանջով. դժվար էր վոտքով վորեւ բանից կառչել, ձեռքերով բռնելու նույնպես վոչինչ չկար: Վոտքերի տակից թափվում էր չոր կավը, իսկ յերբմն ել խոշոր կոշտն էր սողում դեպի ձորակը:

Հանկարծ Վալերիանի ուժեղ ձեռքերը բռնում են ինձ: Բարձրացնելով ինձ գրեթե մինչև իր ուսերը, նա արագորեն վազում է դեպի ցած՝ ձորակի զառիվայրի լանջով: Իմ սիրտը կծկվեց, թուլացավ: Յես չեյի համարձակվում վոչ դուրս պրծնել և վոչ ել բղավել: Բայց այդ բոլորը տեսց մի ինչ-վոր ակնթարթ: Յած վազելով զառիվայր լանջից, Վալերիանը մի վայրկյան կորցրեց հավասարակշռութունը, չոքեց մի ծնկան վրա՝ բաց չթողնելով ինձ իր ձեռքերից: Իսկ հետո ինձ կանգնեցրեց և շուտ գալով դեպի սողացող ընկերները, ձեռքերը կրծքին դնելով՝ սկսեց նրանց գլուխ տալ:

Այն վայրկյանին, յերբ Վալերիանը վազում էր ինձ հետ զառիվայրով, բոլոր ընկերները կանգ եյին առել և վախից շնչները պահել, մտածելով, թե Վալերիանը չի կարող հավասարակշռութունը պահպանել և կրննի ձորակը:

Ուսուցչուհիներից մեկը այնպես էր հուզվել, վոր մնացել էր զառիվայրի կեսին և չեր կարողանում առաջ շարժվել:

Վալերիանը բղավեց նրան.

— Ոգնե՛ր ձեզ:

Նա այնպես վախեցավ այն հեռանկարից, վոր Վալերիանը նրան ևս կրարձրացնի իր ձեռքերին և կվազի զառիվայրով, վոր սկսեց արագ-արագ իջնել ցած, աղաղակելով.

— Վո՛չ, յես ի՛նքս կիջնեմ, յես ի՛նքս:

Զորի մեջ գտնվող բոլոր մարդիկ ուշքի գալով մեր վիճակի նկատմամբ ունեցած վախից և շունչ քաշելով զառիվայրի իջնելու ծանր հոգնածութունից, կանգնել ու բարձր ծիծաղում եյին վերջին ուղեկցուհու վրա: Բայց ահա իջավ և նա, և բոլորի

համար անսպասելիորեն հարձակվելով Վալերիանի վրա, սկսեց բռնեցքով նրա մեջքին խփել, արտասովալից ասելով.

— Յերբեք այդպես մի՛ անեք, յերբեք... Զի կարելի այդպես վտանգել և՛ իր, և՛ ուրիշների կյանքը...

Վալերիանը ծիծաղելով իր մեջքը դեմ տվեց նրա հարվածներին և հանկարծ նրան ձեռների վրա վերցրեց ու շեշտակի վազելով՝ բարձրացավ ձորակի մյուս, արդեն վոչ այնքան թեք, կոշմը:

Բոլորը բարձր ծիծաղում եյին, իսկ մեր խեղճ ուղեկցուհին ապրած վախից իրեն զսպելով՝ նայելով Վալերիանին, ասաց.

— Ա՛յ թե ուժեղ եք և ճարպիկ հա՛, բայց և այնպես յես այլևս յերբեք ձեզ հետ զրոսնելու չեմ գնա:

Նա, իհարկե, իր խոսքը չկատարեց և մի անգամ չեր, վոր նա մեղ հետ զրոսանքի յեր գալիս, բայց հենց վոր ճանապարհին ձորակ էր պատահում, աշխատում էր Վալերիանից հեռու լինել: Ծիշտ ասած, յես ել եյի վախենում այդ խորը, թեք կավե ափերով ձորակներից:

Վալերիանի տարրինակ տեսքը, համենայն դեպս, խոռվեց տեղական գավառակապետի հանդիստը: Մի անգամ ինձ հանդիպելիս ակնարկելով նկատեց. «Իսկույն յերեւում է, վոր ձեր յեղբայրը նիհիլիստ է»: Իսկ մի ուրիշ անգամ խնդրեց ինձ համոզել յեղորոս ուրիշ վերնաշապիկ հագնել և հանել տրեխները. «Շփոթեցնում է նա բոլորին: Շատ հարցեր կան նրա հետ կապված և ձեր մասին ել են խոսում»...



Տամբովից Վալերիանը 1913 թ. հունիսին գնաց Պետերբուրգ, բայց այնտեղ չկարողացավ կապվել կուսակցական կազմակերպության հետ և ուղևորվեց Վոլոգդա: Վալերիանը ամառն ապրեց այնտեղ, կապ հաստատեց քաղաքական աքսորյալների հետ, հեղափոխական աշխատանք տարավ «Պրոսվեչենիե» ընկերության մեջ: 1913 թվի աշնանը, ցուցում ստանալով հանդիպավայրի մասին, գնաց Սարկով:

Սարկովում Վալերիանը կուսակցական աշխատանք էր տանում, մասնակցեց 1914 թվի մայիսմեկյան ցույցին: Նկատելով, վոր վոստիկանութունը հետապնդում է իրեն, նա մայիսի սկզբին գնաց Պետերբուրգ, վորտեղ վորպես բանվոր մտավ Ասխովի՝ ռեսորի արհեստանոցը:

Այդ ժամանակ կուսակցության Պետերբուրգի կոմիտեյի

աշխատանքը կանոնավորվել էր, և Վալերիանը հեշտությամբ կապվեց կուսակցական կազմակերպության հետ:

Վալերիանն ամբողջովին թաղվեց աշխատանքի մեջ: Նրան ընտրեցին Գեյսլերի գործարանի, իսկ հետո «Տրեռզոլնիկ» գործարանի հիվանդանոցային դրամարկղի քարտուղար:

Վալերիանը թափանցում էր յուրաքանչյուր բանվորի կարիքների մեջ, պաշտպանում էր նրանց շահերը, սովորեցնում էր վարչության անդամներին, թե ինչպես պիտի նրանք գործեն, վոր ձեռք բերեն հիվանդանոցային դրամարկղի վարչության կողմից յեղած առաջարկութունների ընդունումն ու կենսագործումը:

Հիվանդանոցային դրամարկղում կատաղի պայքար տեղի ունեւր բողջեիկների և մենչեիկների միջև: Վալերիանը պերճախոս օրինակներով համոզում էր նույնիսկ անկուսակցական բանվորներին՝ պայքար մղել մենչեիկների դեմ: Նա սովորեցնում էր, թե ինչպես պետք է հանդես գալ ժողովներում՝ այս կամ այն հարցը պաշտպանելու:

— Հիշե՛ք, վոր դուք պիտի խոսեք վոչ թե վարչության առաջ և վոչ թե վարչության անդամների առաջ, վորոնք նշանակված են գործարանի ադմինիստրացիայի կողմից, այլ ամբողջ բանվորների առաջ և դուք զեկուցումը պիտի անեք այնպես, վորպեսզի ապացուցեք ձեր գործի արդարությունը և, յեթե մեկը դուրս գա ձեր դեմ, դուք պիտի կարողանաք պաշտպանել ձեր հայացքը, ջարդուիչուր անեք ձեր հակառակորդների փաստարկումները:

Վալերիանը շուտով արժանացավ բանվորների վստահությանը: Նրան հաջողվեց գլուխ բերել ընտանիքավորների նպաստների հավելման գործը, հսկողություն կազմակերպել հիվանդանոցային դրամարկղի բժշկի վրա, վորը հիվանդ բանվորին հաճախ հետ էր ուղարկում աշխատելու, նույնիսկ առանց քննելու նրան: Հսկողությունը կազմակերպելուց հետո հիվանդներն օկսեցին ազատվել աշխատանքից:

Բացի հիվանդանոցային դրամարկղում աշխատելուց, Վալերիանը կուսակցական մեծ աշխատանք էր տանում: 1914 թ. դեկտեմբերին նա ընտրվեց ՌՍԴԲԿ Պետրոգրադի կոմիտեյի անդամ և Պետրոգրադի կուսակցական կազմակերպության մեջ ղեկավարում էր պրոպագանդիստական աշխատանքը: Հենց այստեղ, գործարանում, հիվանդանոցային դրամարկղի աշխատանքի անվան տակ, Վալերիանը գրում և խմբագրում էր թերթիկներ, ընդամենը, լսելով հին բանվորների խորհուրդները, ձգտելով այն-

պես գրել թերթիկները, վորպեսզի դրանք մատչելի լինեն ամեն մի բանվորի գիտակցությանը:

Այսպիսի մի դեպք պատահեց:

Մի հին բողջեիկ բանվոր Վալերիանի մոտ բերեց մի յերթառարկ բանվորի:

— Ահա, ընկեր քարտուղար, ձեզ մոտ եմ բերել մի լավ տղայի, բայց միայն նա չի ուզում համարությունը հասկանալ...

— Ի՞նչ կա վոր—հարցրեց Վալերիանը:

— Ահա այսոր յես իմ դադդյահի վրա թուռցիկ եմ դրել: Ինչի՞ս է պետք նա: Յեմ յես դնացի այդ թուռցիկն ավագ վարպետին տալու:

— Իսկ ինչո՞ւ վարպետին,—հարցնում է Վալերիանը:

— Թող նա ջոկի, թե ինչ է նրա մեջ գրված... Յես գործ չունեմ, իսկ յես գլխի յեմ ընկնում, թե ով է դրել: Յեմ ահա, թող վարպետը նրա հետ խոսի:

Տղան մի տեսակ անվստահ նայում էր Վալերիանի և իրեն բերող բանվորի վրա:

— Դու ընտանիք ունե՞ս:

— Կին ու յերեխա և պառավ, հիվանդ մայր: Իսկ դա ձեր ինչի՞ն է պետք:

— Դու ասում ես, վոր քեզ թուռցիկներ պետք չեն: Յեթե դու կարդայիր այդ թուռցիկը, կտեսնեյիր, վոր այնտեղ քո կյանքի, քո ընտանիքի, քո հիվանդ մոր մասին է գրված:

Տղան բոլորովին անվստահ նայում է Վալերիանին, իսկ նա շարունակում է հանդիստ և ուշադրությամբ հարցնել տղային նրա որ ու ապրուստի մասին: Նրանց զրույցը յերկարեց: Տղան այլևս Վալերիանի վրա անվստահ չէր նայում: Նա արդեն ինքն է նրան հարցեր տալիս, ինքն է պատմում իր կարիքների մասին և այն մասին, թե ինչն է նրան Պիտեր բերել: Իսկ հեռանալիս ամաչելով խնդրեց.

— Իսկ դուք, են ինչ... յեթե կարիք կա, ապա յես ել կտրող եմ թուռցիկներ ցրել... Իսկ ինձ—հըմ, վոչ վոք չի տեսնի, յես կարող եմ:

Յեմ այդ բանվորը կուսակցական կազմակերպության ակտիվ ոգնականը դարձավ: Վալերիանը կարողանում էր այնպես անկեղծորեն համոզել բանվորներին՝ կուսակցության գործի արդարության մեջ, վոր կուսակցության կողմնակիցների թիվն օրեցօր աճում էր:

Դժվար ժամանակ էր գալիս: Պատերազմ էր: Կառավարու-

Թյունը բաց եր թողել պատերազմական փոխառություն: Հիմա-
դանոցային դրամարկդում կար միքանի հազար ուլլի, գործա-
րանի վարչությունն առաջարկում եր այդ գումարը փոխառու-
թյան մեջ դնել: «Կառավարությունը կարիք ունի, նրան պիտի
ոգնել պատերազմը մղելու»:

Վալերիանը պատասխանում եր.

— Փողերը բանվորներինն են: Դրանք պետք են հենց իրենց
բանվորների կարիքների համար: Վերցնել այդ փողերը—կնշա-
նակի՝ վորերին սովահար անել և չոգնել հիվանդներին:

Դալիք ժողովին պետք եր նախապատրաստել իրենց՝ բան-
վորների յեղութի: Վալերիանը հրահանգում եր յեղութի պա-
րաստվող բանվորին.

— Իսկ դու քեզ համար պլան կազմիր, թե ինչպես պիտի խո-
սես, վորպեսզի վոչինչ չմոռանաս: Չե՞ վոր դու խորապես հա-
մաձայն ես այն բանի հետ, վոր հիվանդանոցային դրամարկդ
հավաքած փողերը պատկանում են բանվորներին, նրանք պիտի
ծախսվեն բանվորների կարիքների համար և վոչ թե կառավա-
րության կարիքների համար, վորպեսզի պատերազմ մղի և դեռ
այդ պատերազմի մեջ քաշի նույն բանվորներին, վորոնցից վերց-
նում են վերջին կուպեկը... Այդ փողերը պետք են յերկսանիքին,
կանանց և մայրերին... Դու համաձայն ես սրա հետ, ահա և
պաշտպանիր այդ միտքը, վորպեսզի վոչ վոք չկարողանա քեզ
ջախջախել:

Բանվորը ժողովում յեղութ ունեցավ. նրան սկզբում պաշտ-
պանեցին վարչության անդամները, իսկ հետո նաև բոլոր բան-
վորները պատերազմական փոխառության դեմ դուրս յեկան:

Գործարանի վարչությունն զգում եր, վոր բանվորներն
իրենք իրենց չեյին կարող հասնել այդ մտքին: Մենչեիկներն
ասում եյին, վոր այս ծանր ժամանակ, յերբ թշնամին հարձակ-
վում ե հայրենիքի վրա, պիտի ոգնել կառավարությանը: Բոլ-
շևիկները պատասխանում եյին, վոր բանվորներին պատերազմ
պետք չե, կովել մենք չենք ուզում և դրա համար մենք փոք
չենք տա: Բանվորները պաշտպանում եյին բոլշևիկների առա-
ջարկները:

Վալերիանի աշխատանքը վոստիկանության կողմից նկատ-
վել եր: Սկսեցին հետապնդել: Պետրոգրադի պահնորդական բաժ-
նի պետը Նարվսկի քաղաքամասի 3-րդ թաղամասի պրիստավին
գրած նամակում առաջարկում եր «անմիջապես մանրագին և
բազմակողմանի խուզարկություն կատարել ուսումնասիրելու»:

«Տրեուդնիկ» ռետինի գործարանի հիվանդանոցային դրամարկ-
դում և անպայման ձեռքակալել Վ. Վ. Կուլբիշևին՝ նրա այնտեղ
ներկա լինելու դեպքում»:

Վալերիանը մի ամիս թաղնվում եր պահնորդական բաժնի
գործակալներից: Բայց և այնպես 1915 թ. հուլիսին նրան ձեռ-
բակալեցին:

Հաճելի չե բանտ նստել, յերբ զգում ես, վոր հեղափոխու-
թյունը մոտենում ե, վոր քո ուժերը պետք են նրան:

Ամեն ոք բանտ եյին բերում նոր և նոր ձերբակալվածների:
Ուշ գիշերին, յերբ արդեն կալանավորների սենյակում պա-
րաստվում եյին քնելու, Վալերիանը նոր յեկած ընկերներին կի-
սաչռուկով հարցեր եր տալիս Պիտերում տեղի ունեցող ընթա-
ցիկ դեպքերի մասին, բանվորների տրամադրության մասին և
այլն և այլն:

Նոր ձերբակալվածները լուրեր եյին բերում գործադուլների
մասին, վորոնք բռնկում եյին ավելի ու ավելի հաճախ: Այդ լու-
րերը տարածվում եյին ձերբակալվածների բոլոր սենյակներում
և վիճաբանությունների առիթ եյին տալիս բոլշևիկներին ու մեն-
չևիկներին միջև:

Վալերիանը նաև բանտում չդադարեց աշխատելուց, սովո-
րելուց, ուրիշներին սովորեցնելուց և մենչեիկների դեմ անողոք
պայքար մղելուց: Ընկերները, վորոնք Վալերիանի հետ միասին
նստել եյին բանտում, պատմում եյին, վոր դրոստանքների ժամա-
նակ Վալերիանը փայլում եր ուրախությունից և հարևանցիո-
րեն, իրբ թե անսպասելիորեն, հայտնում եր բոլորին, վոր հե-
ղափոխությունը մոտ ե, իր խոսքերով հավատ բորբոքելով դեպի
նրա հաղթանակը:

Անցնելով մենչեիկներին մոտով, նա, նրանց վրա ծիծաղելով՝
ասում եր.

— Իսկ դուք ասում եք, թե հեղափոխական շարժումը պա-
տերազմի ժամանակ չի կարող զարգանալ: Պնդում եք, վոր պի-
տի սպասել ցարի հաղթանակին՝ ընդդեմ գերմանացիների: Բայց
ահա մասսաները գլխիվայր են չուռ տալիս ձեր մենչեիկյան բո-
լոր մարդարեյությունները:

ԴԱՐՁՅԱԼ ԱՔՍՈՐ

1915 թ. ոգոստոսին Վալերիանը Պետերբուրգի բանտից յե-
րեք տարով աքսորվեց Խրկուտսկի նահանգի Տուտուբի գյուղը՝
վոստիկանության բացահայտ հսկողության տակ:

Աքսորյայնքին բանտից ուժեղացրած հսկողութեան տակ քերին Նիկիոյայնի կայարանը և դրին զնացքի վերջին, լուսամուտները վանդակապատած, վազոնը: Վազոնի մոտ քայլում էին պահակներ, լուսոնք հեռացնում էին այն բոլոր մարդկանց, ովքեր ցանկանում էին մոտենալ նրան:

Չնայած դրան, չափազանց շատ ուղեկցողներ էին համարվել. նրանք ձերբակալվածներին տվին մթերք, փող և հաղորդեցին բարեկամների վողջույնները...

Մինչև Կրասնոյարսկ բոլոր ձերբակալվածները միասին էին, մթերքներից միմյանց բաժին էին հանում, տպավորութուններ փոխանակում, զեպերը քննարկում: Կրասնոյարսկում ուղեկցող պահակախումբը փոխվեց և պահանջեց, վոր բոլոր ձերբակալված կանայք նստեն վազոնի մի բաժանմունքում, իսկ տղամարդիկ՝ մյուսում: Բացի այդ, արգելված էր վազոնում ման գալ և խոսել: Վազոնում առաջվա ուժիմը վերականգնելու բոլոր փորձերին ուղեկցողը պահակները պատասխանում էին չենթարկվողներին չլթայելու սպառնալիքով:

Վալերիանը, պահակների այդպիսի վերաբերմունքից վրդովված, նրանց հետ վեճի բռնվեց: Նրան միացան և մյուս ձերբակալվածները: Սկսվեց խսկական խռովություն: Յեւ միմիայն այդպիսով հաջողվեց վերականգնել վազոնում առաջվա ուժիմը:

Իրկուտսկում բոլորին բանտ նստեցրին: Մտնելով իր կամերան, Վալերիանը նետվեց դեպի լուսամուտը, վորպեսզի տեսնի, թե դեպի ուր է նայում այն:

— Հեռացե՛ք լուսամուտից, այստեղ այդ թույլ չեն տալիս, կկրակեն,—կանգնեցրեց Վալերիանին նույն կամերայում գտնվող մի կալանավոր:

Բանտում ուժիմը սոսկալի յեր: Չեր թույլատրվում վոչ յերգել, վոչ բարձր խոսել, վոչ կարդալ: Կերակրում էին մի ինչ-վոր կեղտաջրով, վորի մեջ վորդեր էին լողում:

Ուշ աչնանը, 1915 թ. նոյեմբերին, ձերբակալվածներին ազարկեցին աքսորավայրը:

Սառնամանիքային օրերը փոխվում էին հորդ անձրևներով: Իրկուտսկի ճանապարհը մերթ Ծածկվում էր սառցե գուղձավար կեղևով, մերթ վերածվում էր կաշուն ցեխի:

Գնալը դժվար էր: Հետ մնալ չեր կարելի—դինվորներն սպառնում էին հրացանի կոթերով:

Գաղաքական աքսորյալները քայլում էին շարքերով, յուրաքանչյուր շարքում չորս մարդ:

Վալերիանը քայլում էր արիարար, բռնելով իր հարևանի թևը և ոգնելով նրան: Շատերը կիսաձայն յերգում էին հեղափոխական քայլերդը կամ Սիրիի տաժանակիրների յերգը: Բարձր յերգել թույլ չէին տալիս:

Յուրա էր, անհաճո, ախուր...

— Ինչո՞ւ էին յերգում ախուր յերգեր, լավ կլինի յերգել ուրախ, գլխով յերգ,—ասում է Վալերիանին իր հարևանին:

Гей, друзья! Вновь жизнь вскипает.
Слышны всплески здесь и там.
С нею радость мчится к нам,
Радость жизни, радость битвы
Пусть умчит унынья след...*)

Այդ յերգը վախժանելով սկսեց յերգել յերիտասարդ կալանավորներից մեկը:

Վալերիանը շուտ է գալիս դեպի նա, գարմացած և ուրախ հարցնում.

— Վո՞րտեղից դու գիտես իմ վոտանալորը:

— Դա մեր ամբողջ յերիտասարդությունը դիտե: Մենք դա արտադրել ենք և սովորել, իսկ յեն դրա համար և յեղանակ եմ բնորել: Չե՞ վոր դուք ուզում էիք ուրախ, գլխով յերգ:

1915 թվի դեկտեմբերի 1-ին հասան Տուտուրի: Աքսորյալները ազատվելով ուղեկցողը պահակախմբից, ցրվեցին դյուղում՝ բնակարան փորոնելու: Գյուղական խրճիթում Վալերիանը իր համար վարձեց մի փոքրիկ սենյակ, ուր տեղավորվում էին միայն մի մահճակալ, մի սեղան և մի աթոռ:

Աքսորյալները, Տուտուրի գալուց անմիջապես հետո, դյուղական մի մեծ խրճիթում ճաշարան կազմակերպեցին: Այստեղ էլ զրուցում էին քաղաքական թեմաների շուրջը, կարգում էին ուժերատներ:

— Ի՞նչպես էք ապրում այստեղ,—հարցրեց Վալերիանն ալեյի շուտ Տուտուրի յեկած աքսորյալներին:

— Տխուր էինք ապրում առանց ձեզ: Վո՞չ ժողովներ, վո՞չ դատախառնություններ: Նույնիսկ կարդալու վոչինչ չկար:

*) Ե՛յ ջան, տղերք, կյանքն է յետում նորից ու նորից, լավում է ճողիյունը նրա այստեղ, այնտեղ, Յեւ նրա հետ խնդությունն է սլանում դեպի մեզ, Խնդությունը կյանքի, խնդությունը պայքարի, Թող լքումի հետքերն այլևս կորչեն...

Հաճախ եյին ընդարձակ խորճիթում հավաքվում յերեկույթ-ների, վորպեսզի պարեն գյուղական յերիտասարդության հետ: Պարերի ընթացքում գրույցներ եյին անցկացնում քաղաքական թեմաների շուրջը, խաղում եյին, յերգում, արտասանում: Հե-տըզհետե յերեկույթներին հաճախում եր ավելի ու ավելի շատ յերիտասարդութիւն: Գալիս եյին և աքսորյալները՝ Գոլովնով-կա և ուրիշ գյուղերից:

Սիրում եյին յերգել «Վարչալյանկա», «Մարսեյոզ», «За-мучен тяжелой неволей» յերգերը:

Գյուղական յերիտասարդութիւնը նույնպէս սովորեց այլ յերգերը և յերգում եր փողոցում, հարմոնի նվազի տակ: Վոս-տիկանութիւնը յերբեմն միջամտում եր, իսկ մեծ մասամբ այն-պէս եր ձևացնում, վոր իբր թե չի հասկանում, թե ի՞նչ յերգ և յերգում յերիտասարդութիւնը:

Մի անգամ գյուղական մի յերիտասարդ տղա գիմեց Վալերի-անին, խնդրելով նրան բացատրել «Замучен тяжелой неволей» յերգի խոսքերի միտքը:

—Ահա՛ դուք ել եք ազատագրկված, բայց ինչքա՞ն ուրախ եք... — ամաչելով ասաց նա:

Վալերիանն սկսեց նրան պատմել ցարական ստրկության բոլոր սարսափների մասին, բանտերի և տաժանավայրերի մասին:

—Ուրեմն ի՞նչ, ձեզ ե՞ր և սպասում այդպիսի վիճակ, յեթե դուք չենթարկվեք ցարական ժանդարմներին:

—Ինձ ել կարող ե այդ վիճակվել:

—Յեվ դուք չե՞ք վախենում:

—Վո՛չ, չեմ վախենում:

—Այո, յերևում ե իսկպես, վոր լավ գործի համար եք պայքարում:

Յեվ յերիտասարդն սկսեց ելի հարցեր տալ: Վալերիանը համբերությամբ և հասկանալիորեն բացատրում եր նրան ամեն ինչ: Այդ ժամանակվանից սկսած յերիտասարդութիւնն սկսեց ավելի հաճախ գիմել նրան այս կամ այն հարցերի բացատրու-թյան համար: Այդպիսով, Վալերիանը գյուղական յերիտասար-դության մեջ ձեռք բերեց ժողովրդականութիւն, հարգանք և սեր:

—Մըանչելի յե նայել, թե ինչպէս Կուլյիչեվն ինքն ե հա-վաքում իր սենյակը, անգամ հատակն ինքն ե լվանում, — ասում եր մի աղջիկ, հանդիպելով Վալերիանին, յերբ նա հատակն եր

լվանում: — Կիւանչեյիք ինձ, — խնդրում եր աղջիկը: — Յեվ յես Կիւաքեյի:

— Իսկ յեո ինքս ել կարող եմ: Տեսնու՞մ ես՝ ինչքան լավ եմ լվացել: Այս հե՛շտ ե: Հատակը փայտից ե: Ա՛յ, բանտում ավելի դժվար եր. այնտեղ հատակը քարից եր, բայց և այնպէս յեո սո-վորեցի աչնպէս մաքրել, վոր փայլում եր:

— Դուք ամե՞ն ինչ գիտեք անել, — ծիծաղում ե աղջիկը:

Վալերիանն ուրախ պատմում ե նրան, վոր ինքը գիտե կա-չա և սուալ յսիել:

— Բայց ահա, բլինիներ չգիտեմ թխել, դա դժվար գրադ-մանք ե, դու ինձ մի կերպ կսովորեցնես:

Յերիտասարդներից շատերը գալիս եյին նրա մոտ և խնդ-րում, վոր պարապի իրենց հետ: Յեվ Վալերիանն աշխատում եր դասադրքեր գտնել և ոգնում եր մաթեմատիկա կամ այլ ա-ռարկաներ ուսումնասիրել ցանկացողներին:

«Կուլյիչեվը սիրում եր յերեխաներին: Մի անգամ գյուղի յերեխաների համար յե փոքրիկ տոն եյի կազմակերպել: Յեկավ և Կուլյիչեվը: Նա ուրախ զբաղվեց նրանց հետ, խաղալով դա-նադան խաղեր: Նա զարմանալի կերպով գիտեր լավ մոտենալ յերեխաներին, և նրանք սիրում եյին «քեռի Վալերիանին», — գրում ե նրա աքսորի մի ընկերը:

★

Բողեւիկներն աշխուժորեն վիճում եյին մենչեիկներին և ես-երների հետ իմպերիալիստական պատերազմի հարցի մասին: Վալերիանը կազմակերպեց ձեռագիր ամսագիր, վորի մեջ լա-յնորեն քննվում եր այդ հարցը: Վորպեսզի ամսագիրն աշխուժաց-նի, Վալերիանը կազմակերպեց դրական եջ:

Գտնվեցին աքսորյալներ, վորոնք լավ պատմվածքներ և բա-նաստեղծութիւններ եյին գրում որվա չարիքների վերաբերյալ, աքսորյալների կենցաղի թեմաների շուրջը: Գտնվեցին և նկարիչ-ներ, վորոնք պատկերազարդում եյին պատմվածքներն ու բա-նաստեղծութիւնները:

Ամսագիրը շատ աշխատանք եր պահանջում: Ամեն ինչ պիտի ձեռքով տրվեր: Դուրս եր գալիս հետաքրքիր և դուռնեղ ամսա-գիր: Այդ ամսագիրն աքսորյալների և տեղական յերիտասարդու-թյան մեջ ձեռքից ձեռք եր անցնում:

Գյուղում բոլորը ճանաչում եյին Վալերիանին: Գյուղացինե-րը հարգանքով եյին նայում «տեսքով աղնվական, բայց աղպե-պարզասիրտ» յերիտասարդ մարդուն:

Լուրերը դրսի աշխարհից Տոստուրի եյին գալիս միայն «բա-
րեհաջող քամով», այսինքն միայն նոր յեկած աքսորյալների միջո-
ցով: Փոստն աշխատում էր վատ: Մինչև յերկաթուղու կայարա-
նը 350 կիլոմետր էր:

Տխրեց Վալերիանը, նա դեպի կենտրոն էր ձգտում, դեպի
բանվորական կազմակերպությունները: Նա դիտեր, վոր այնտեղ
իր ուժերն ավելի եյին պետք, վոր ինքն այնտեղ ավելի շատ
ոգուտ կարող էր բերել: Ոգտվելով սուրբից, վոր բարեկենդան
է, յերբ բնակիչները բլիններ են թխում, զրոսնում են սիրբիջան
յեռածի լայն սահնակներով, և վոստիկանության զգոնությունը
նույնպես վորոշ չափով թուլանում է, Վալերիանն իր ընկերնե-
րով սահնակ է նստում և խնդրում գյուղացուն, վորպեսզի նա
աանի նրանց զրոսներու հարեան Կաչուգ գյուղը:

— Հյուր ենք գնում ընկերների մոտ, — քացատրեց Վալե-
րիանը:

Ուրախ, աղմկելով դուբա են գալիս Տոստուրից: Ծոծոտւմ է
ձյունը սահնակի կեռափայտերի տակ, փափուկ թռչկոտում է
սահնակը ճանապարհի փոսերի վրա: Բոլորը յերգում են ուրախ
տոնական յերգեր և ուրախ ծիծաղում:

Գյուղացին նույնպես տոնական տրամադրություն ունի: Նա
չի կասկածում, վոր իրեն խաբում են, վոր նստողներն այնքան էլ
ուրախ տրամադրության մեջ չեն, վոր նրանք մտահոգված են
չհանդիպելու պահապանին, առանց վորի թուլյության վո:
Վոք չի կարող զնալ նույնիսկ մոտակա գյուղերը: Բայց սահնակ
քշողը հանգիստ է, լսելով նրանց ուրախ յերգերը և ծիծաղը:

Բարեկենդանն անցավ: Պահապանները գնացին խոճիթներն
տուգելու՝ արդյո՞ք բոլոր աքսորյալներն իրենց տեղերումն են:
Վալերիանի բնակարանը նույնպես յեկավ պահակը:

— Վորտե՞ղ ե Կույրիչեվը:

— Նա գնաց ընկերների մոտ, — հայտնում է տանտիրուհին:

— Իսկ նա այստեղ՝ Տոստուրիո՞մն է: Ձի՞ փախել:

— Ո՞ւր պիտի փախչի: Այստեղ է, իհարկե այստեղ է:

Մի քանի օրից հետո պահապանը կրկին գալիս է:

— Կույրիչեվը տա՞նն է:

— Ըստ լուրերի, նա Կաչուգ է գնացել...

— Ի՞նչպես թե Կաչուգ, — ճշաց պահապանը: — Ի՞նչպես է նա
համարձակվել ինքնադուրս կերպով վոլոստից հեռանալ: Ի՞նչ է,
նա օրենքը չգիտե՞:

Պահապանը նետվեց ժիգալեվո վոլոստային գյուղը, ուր հե-
ռադրատուն կար: Հարցում արավ Կաչուգ:

— Յեկե՞ղ ե ձեզ մոտ Կույրիչեվը:

— Վո՞չ, չե՛նք տեսել:

Պահապանը հասկացավ, վոր Կույրիչեվը փախել է:

ՍՍ.ՄԱ.ՐԱ.

1916 թ. ապրիլ ամսին գալով Սամարա, Վալերիանը Գապ-
վեց կուսակցական կազմակերպության հետ, վորն այդ ժամա-
նակ չափազանց տուժել էր ժանդարմների և վոստիկանության
հետապնդումից:

Վալերիանն սկսեց աշխատել նախ փուլում, վորպես տարե-
չէիկ, հետո կոոպերատիվ ընկերության մեջ, վորպես հաշվապահի
օգնական, իսկ 1916 թ. հունիսից սկսեց աշխատել Սամարայի
խողովակների գործարանում, վորպես ֆրեզերովչէիկ:

Իրրե ֆրեզերովչէիկ Վալերիանն աշխատում էր առաջին ան-
գամ: Ընկերները, վորոնք հաջողեցրել էյին նրան աշխատելու
գործարանում, վախենում էյին, թե վարպետը չճշտով կնկատի
Վալերիանի անփորձ լինելը և կհեռացնի նրան աշխատանքից:
Իսկ Վալերիանը, վորպես քաղաքական ղեկավար, պետք էր խո-
զովակների գործարանում: Սակայն ընկերներն առիթ չունեցան
կարմրելու Վալերիանի համար՝ վորպես ֆրեզերովչէիկ:

«Գործարանում իմ աշխատանքի վերջում յես ավելի մեծ
նօրմա եյի կատարում, քան վորեւէ հին ֆրեզերովչէիկ: Բանն
այնտեղ էր հասել, վոր իմ կուսակցական ընկերները գալիս էյին
ինձ մոտ և խնդրում, վոր յես քիչ արտադրեմ, վորպեսզի չիջնի
բանվորների ընդհանուր աշխատավարձը», — պատմում էր մի ան-
գամ Վալերիանը:

Սամարայում Վալերիանն անլեզալ էր ապրում՝ Ադամչիկ
Իոսիֆ Անդրեյեվիչ անվան տակ: Միայն կուսակցական կազմա-
կերպությանը մոտիկ կանգնած ընկերները գիտեյին նրա իսկա-
կան անունն ու ազգանունը:

խողովակների գործարանում Վալերիանը տանում էր կուսակ-
ցական խողոր աշխատանք: Նա, ինչպես ամեն տեղ, այստեղ էլ
չուտով հեղինակություն ձեռք բերեց բանվորների մեջ:

«Պետք էր տեսնել, թե ինչպիսի խոր հավատով էյինք մենք
վերաբերվում դեպի մեր ղեկավարը և ինչպես էյին ուղղում մեզ
վրա նրա բոլոր խոսքերը», — գրում էր բանվոր Ն. Տ. Դմիտ-
րիևը:

«Մենք սիրում եյինք նրան, հավատում և գնում նրա հետեւից», — ասում է բանվոր Շեստուխինը:

Քոլչեկիներէ կազմակերպութեան աշխատանքը Վալերիանի գաղտնի հետո նկատելիորեն աշխուժացաւ: Պատրաստուած էր մերձավորեցան բոլշեւիկներէ կոնֆերենցիան: Կոնֆերենցիայի բացումը նշանակւած էր 1916 թ. սեպտեմբերի 13-ին, Վոզնեսենսկայա փողոցի վրա գտնվող փայտյա համեստ տնակում:

Կոնֆերենցիա գնալիս Վալերիանը ընդհատակյա հեղափոխականի փորձված աչքով նկատեց վոչ հեռու կանգնած լրտեսին:

— Մեզ հետեւում են: Մեզ մատնե՛լ են, — հայտարարեց Վալերիանը և պահանջեց, վորպեսզի ընկերները ցրվեն: Այդպես ելարին: Մի ժամից հետո լրտեսները յեկան: Ինչպես հետո իմացվեց, մատնել էր Սուրովյով — Սապոժնիկովը, վորը հայտնել էր ժանդարմներին կոնֆերենցիայի բացման տեղը, ժամանակը և ուղիքը: Դա անակցողների ցուցակը: Կոնֆերենցիան չկայացաւ: Նրա բոլոր անդամները շուտով մեկը մյուսի հետեւից ձերբակալվեցին: Զերբակալվեց նաև Վալերիանն ու իր կինը:

Վալերիանը բանտ յեկավ վորպես Ադամչիկ: Հարցաքննումների ժամանակ ժանդարմական զննապետը շարունակ անխառնութեամբ էր վերաբերվում Վալերիանի ազգանունը:

— Դուք Ադամչիկ չեք: Դուք փախած տաժանակիր եք: Ինչո՞ւ չեք դուք այդ թաղցնում: Միւսումնայն է, ձեր հանցագործութիւնները մեզ հայտնի յեն, և դուք կրկին հետ կուղարկվեք տաժանավայր:

— Յես գյուղացի Ադամչիկն եմ, աքսորված գյուղացու տղա: Տաժանավայրում յերբեք չեմ յեղել: Զերբակալվում եմ ուռալին անդամ:

— Վո՛չ: Առաջին անգամը չե, վոր դուք ձերբակալվում եք: Առաջին անգամ ձերբակալվածներն իրենց այդպես չեն պահում: Դուք փորձված կալանավոր եք:

Յերկար ժամանակ Վալերիանը չէր հայտնում, թե ով է ինքը. յերկար ժամանակ ժանդարմները չարչարվում էյին իմանալու, թե ով է նա: Յեվ միայն այն ժամանակ, յերբ Վալերիանը համոզվեց, վոր իրեն վոչ մի տաժանավայր չեն ուղարկի, և գործը կվերջանա վարչական աքսորով՝ հայտնեց:

— Յես Իրկուտսկի աքսորավայրից փախած եմ: Իմ ազգանունն է Կուլբիշեւ: Այդ ամենը դուք կարող եք ստուգել իմ գործում, վորը գտնվում է ժանդարմական վարչութեան արխիւում:

Ժանդարմական զննապետը խիստ հիասթափւած էր: Նա յանկանում էր վաստակ ձեռք բերել կարեւոր հանցագործ բռնելով, և նա խիստ անխառնութեամբ վերաբերվեց Վալերիանի խոստովանութեանը: Բայց հավաքած տեղեկութիւնները հաստատեցին նրա ցուցմունքները:

Դատ յեղավ: Բոլոր ձերբակալվածներին, զանազան վայրեր աքսորեցին: Վալերիանը դատապարտվեց հինգ տարով աքսորի՝ Տուրուխանսկի յերկրամասը:

Յերբ աքսորվողներին դուրս բերին բանտի բաղն անունանուն կանչելու և փաստաթղթերը հանձնելու համար, բանտի պետը, զարմացած, վոր Վալերիանն ազնվական է և սովորել և կազետական կորպուսում, դիմեց նրան.

— Ափսո՛ս, ափսո՛ս. հիմա սպա կլինեյիր...

Զերբակալվածներից մեկը պատասխանեց Վալերիանի փոխտրեն.

— Իսկ մեզ մոտ նա գնեցաւ կլինի...

Վալերիանը նորից աքսոր գնաց: Նրա կինը բանտում մնաց: Նա սլտի ծներ և նրան ժամանակավորապես թողին:

Սամարայի բանվորներն իմանալով Ադամչիկ-Կուլբիշեւի ձերբակալման և առաջիկա աքսորման մասին, փող եյին հավաքում իրենց սիրելի զեկավարին ճանապարհ գնելու համար:

Վալերիանն այդ փողը չընդունեց:

— Այդ փողը պետք կզա ձեր կազմակերպութեան համար: Յես փող ունեմ: Յես վաստակել եմ:

Գործարանի վարչութիւնը բանտ էր ուղարկել Վալերիանի վաստակած փողը:

Կուլբիշեւին աքսոր ուղարկելու որը բանվորներն իրենց կանանցով ու յերեխաներով փողոց եյին թափվել:

Յերիտասարդ, լայնաթիկունք, մի փոքր կուցած հսկան գնում էր ձեռքը շղթայված՝ իր հարեանի ձեռքի հետ: Նրա խոշոր գորշ-կապտադուն աչքերը փայլում էյին ժպիտով:

Բայց Սամարայի բանվորները հրաժեշտ չեյին տալիս Կուլբիշեւին:

— Յանտութիւն, թանգագի՛ն Վալերիան: Մինչև չուտ ախտութիւն:

Յեվ, իսկապես, դա Վալերիանի վերջին ետապն էր:

1917 թ. փետրվարի 25-ին աքսորյալները յեկան Կրասնոյարսկի բանտը: Փետրվարի 27-ին, յերբ իշխանութիւնն արդեն գտնվում էր ժամանակավոր կառավարութեան ձեռքին, Վալերի-

անն աքսորյալներն մի խմբի հետ դուրս յեկալ Կրասնոյարսկից ուղղվելով դեպի Հյուսիս, դեպի արսորման վայրը: Կրասնոյարսկից վտարով միայն 200 վերստ գնալուց հետո, մարտի 6-ին արսորյալներն իմացան ինքնակալության տապալման մասին և մարտի 8-ին ազատվեցին:

Այնուհետև վերադարձ դեպի Սամարա:



Այն ժամանակ, յերբ Վալերիանը քայլում էր դեպի աուրու-խանյան աքսորը, Սամարայի բանտում 1917 թ. մարտի 3-ին (16-ին) ծնվեց նրա վորդին՝ Վլադիմիրը:

Յեթև չլինե՞ր հեղափոխությունը, յեթև ամբողջ չներխուժե՞ր բանտը—մայրը և վորդին բանտի կեղտոտ կամերայում կմեռնե-լին արյան վարակումից: Բժիշկ բերին, և մոր ու վորդու կյանքը փրկվեց:



—Այն ճանապարհը, վոր մենք անցանք ետապով փետրվարի 26-ից մինչև մարտի 8-ը, հետո մենք վերադարձանք յերկու-որվա ընթացքում—պատմում էր Վալերիանը իր՝ Սամարա վերադարձի մասին:

Նա սլանում էր Սամարա, խմանալով, վոր այնտեղ իրեն սպառնում են ուժախուժյամբ ու անհամբեր:

Վալերիանը Սամարա յեկալ մարտի 17-ին:

Կայարանի կառավարողը հավաքվել էր բանվորների բազմությունը՝ կարմիր դրոշներով: Նրանք լսել էյին, վոր այսօր վերադառնում է Վալերիանը Սամարայից՝ իր հետ աքսոր-ված ընկերների հետ միասին:

Գնացքը կանգ է առնում կայարանում: Վազոնի հարթակում յերևում է Վալերիանը, նրա հետևից՝ մյուս ընկերները:

«Ուռա՛» բացականչություններ, յերգեր:

—Կույրիչեվը վազոնից դուրս յեկալ իր ընկերների հետ ինչպես մարտիկների ջոկատի հետ:

—Այդ յեկել է վոչ թե նախկին աքսորյալը, այլ հաղթողը—այսպես էյին խոսում իրար հետ Սամարայի բանվորները, կա-յարանում հանդիպելով իրենց զեկավարին և բարեկամին:

Սկսվեց յեռուն կյանք: Վալերիանը Խորհրդի նիստերին հան-դես է դալիս Ժամանակավոր կառավարության, իմպերիալիստա-կան պատերազմի, բանվորական և ագրարային հարցերի վերա-բերյալ զեկարացիայով:

Դժվար և պատկերացնել, թե կա՞ր արդյոք աշխատանքի մի-րնադավառ, վորտեղ Վալերիանը Հայտնաբերեր իր կրակոտ յե-տանդը:

— Բայց յե՞րբ և նա քնում—զարմանում էր նրա ուժարացի-չափեր Շումեյկինը:

Որ չէր լինում, վոր նա Համախեր միջանի դործարան: Ա-մեն տեղ նա հանդես էր դալիս միտինդներում, մերկացնելով մենչևիկներին և եսերներին:

Հասարակ և համոզիչ, պարզ և խելացի յեր խոսում Վալե-րիան Վլադիմիրովիչը: Նրա ճառերը հասնում էյին յուրաքան-չուր բանվորի, վոգուորում էյին պայքարի համար:

Միտինդից Վալերիանը չարունակ գնում էր բանվորներով չըջապատված:

Ձևերը հարձակվում էյին: Վալերիանը գնում էր դործա-րանները, վորտեղ յեր հանում բանվորներին՝ Սամարան պաշա-պանելու: Յերեկ և գիշեր ստուգում էր պոստերը: Կաղմակեր-պում էր քաղաքի պաշտպանությունը:

Յեվ նա այդ ամբողջ կաղմակերպական, ռազմական, խոր-հրդային աշխատանքը տանում էր, պայքարելով մենչևիկների և եսերների դեմ:

— Մենք, այնուամենայնիվ, հաստատապես յանկանում ենք միասին աշխատել,—հայտարարում էյին մենչևիկները:

—Միասին աշխատել կարելի չե, բայց պիտի ընդունել մեր ծրագիրը,—պատասխանում էր Վալերիանը:

—Պիտի քննարկել մեր ծրագիրը և ձերը,—չարունակում էյին մենչևիկները:

—Ձերը քննարկել մենք չենք ուզում, իսկ մերը քննարկել՝ մենք թույլ չենք տա: Յերկուսից մեկը՝ կամ մեզ հետ, մեր ծրագրով, կամ առանց ձեզ,—վերջացնում էր խոսակցությունը Վալերիանը:

Նա դաժան և համառ էր թշնամիների դեմ մղվող պայքա-րում և միևնույն ժամանակ անսովոր մեղմ և սիրալիր՝ իրեն չըջապատող ընկերների հետ:

«Վալերիան Վլադիմիրովիչն ինձ մարտական առաջադրանք տվեց—դրամարկը տեղափոխել Որենբուրգի ճակատը... Այդ առաջադրանքը յես կատարեցի և ներկայացա հեղկոմ՝ Վալերիան Վլադիմիրովիչին զեկուցելու այդ մասին: Նրա առաջին խոսքերն էյին. «Ի՞նչպես գնացիր, ի՞նչպես ե քո առողջությունը, հո չը-սառեցի՞ր»—գրում է Վալերիանի մասին ընկ. Սիմոնովան:

Աղբիւյան կուսակցական կոնֆերենցիայից վերադառնալով Սամարա, Վալերիանը մեծ վոզեւորությամբ պատմում էր կոնֆերենցիայում Լենինի ունեցած յելույթի մասին:

—Յես լսեցի Իլյիչի յելույթը: Յես նոր ուժ գգացի: Ընկերներ, յես ցանկանում եմ այդ նոր ուժը փոխանցել ձեզ:

Վալերիանը յեռում էր աշխատանքում:

Ընկեր Կլիմովիչը պատմում է.

«1918 թվի հունվարի 8-ին, յերբ չեխերը ներս խուժեցին քաղաք, յես մենակ էյի շտաբում: Հանկարծ լսվեց հեռախոսի զանգը:

«Ինձ մարդիկ ուղարկիր ոգնության, չեխերն ինձ պաշարում են»,—ասում էր Կուլյրիչեւը:

Բայց յես անգոր յեղա ոգնելու, վորովհետեւ իմ բոլոր մարդիկն ուղարկված էյին զանազան տեղամասեր, իսկ չեխերը գընդակոծում էյին շտաբը:

Հետո յես իմացա, վոր Կուլյրիչեւը դուրս է յեկել աների կուռններով և հազիվ կարողացել է չոգենալ նստել»:

ՔԱՂԱՔԱՑԻՍԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՃԱԿԱՏՆԵՐՈՒՄ

Ռազմաճակատներում ունեցած իր գործունեյության մասին Վալերիանը մեզ շատ քիչ բան էր պատմում: Յես, որինակ, յերկար ժամանակ չեյի իմանում ռազմաճակատում Վալերիանի ունեցած մասնակցության մանրամասնությունները և այն վտանդի մասին, վորին նա այնտեղ յենթարկվում էր: Յես նրա մեջ տեսնում էյի միայն քաղաքական դործչի, բայց վոչ ռազմական աշխատողի:

Ճիշտ է, Վալերիանը մեզ վորոշ ղեպքեր էր պատմում ռազմաճակատի կյանքից, բայց իր մասին նա մի տեսակ շարունակ լուծ էր, և թվում էր, թե նա այնտեղ յերկրորդական դեմք է յեղել:



1918 թ. սեպտեմբերին Մոսկվայից տազնապալից լուր ստացվեց.

«Շեսերկա Կապլանը վիրավորել է Լենինին...»

Այդ լուրն ստանալուց բոլորին պատեց և՛ ալելի մեծ ցանկութուն՝ շուտ, ինչքան կարելի յէ շուտ ջարդել թշնամուն:

Միտինգում Վալերիանն ասում էր.

—Լենինի հայրենիք՝ Սիմբիրսկն աղաւել չեխերից:

Յեւ շուտով առաջին Կարմիր Բանակից, վորը հետ խլեց Թըշնամուց այն քաղաքը, ուր ծնվել է Իլյիչը, հեռագիր գնաց վիրավոր Լենինին.

«Թանգադին Իլյիչ: Ձեր հայրենի քաղաքի՝ Սիմբիրսկի գրավումը—դա պատասխանն է ձեր մեկ վերքի—իսկ յերկրորդինը կլինի Սամարան»:

Լենինին տված խոստումը շուտով կատարվեց—Սամարան գրավվեց:



Սամարայի գրավումով չվերջացավ Վալերիանի մարտական կյանքը:

Նա նշանակվում է IV Բանակի Ռազմահեղափոխական Խորհրդի անդամ:

Ուրալի սպիտակ կազակությունը Դուտովի, Կուչակի և գեներալ Տոլստոյի հրամանատարությամբ շարունակում էր սպասանալ յերիտասարդ Խորհրդային յերկրին:

IV Բանակի ամբողջ ուժերն ուղղված են դեպի այդ ռազմաճակատը:

Կուլյրիչեւը և Ֆրունզեն շարունակ գտնվում են մարտերում: Նրանք չեն նստում շտաբում: Նրանց շարունակ կարելի յէր տեսնել առաջավոր դիրքերում, ամենավտանգավոր տեղերում:

—Յես միքանի անգամ տեսել եմ Վալերիան Վլադիմիրովիչին կրակի առաջին գծերում,—ասում էր Չապայեւի դիվիզիայի մարտիկներից մեկը:

Մի ուրիշ մարտիկ պատմում է, թե ինչպես նա Վալերիանի հետ միասին խրամատներ էր փորում և ծածկոցներ կառուցում:

—Թշնամին հարձակվում էր: Դիրքը վոչնչով պաշտպանված չէր: Մերկ տափաստաններ: Սկսեցինք արագորեն խրամատներ փորել: Սկսեցինք ալաղով, ածուխով, նույնիսկ կարտոֆիլով լցված տոպրակներ կրել: Յեւ յես տեսա, թե ինչպես ընկ Կուլյրիչեւը, հանելով իր կաշվի տուժուրկան, ծանր տոպրակները կրում էր դեպի խրամատները:



IV Բանակն իր մարտական դիվիզիաներով շարժվում էր դեպի Ուրալի: Այաղուտ տափաստանները ծածկված էյին խոր ձյունով: Սառնամանիք էր: Քամին, բարձրացնելով ալաղի հետ

խառնված ձյունը, լցնում, ծածկում եր աչքերը: Մարդու վտա-
քերը խորը թաղվում եյին ձյունի մեջ: Գնալը դժվար եր: Ճա-
նապարհին հանդիպած գյուղերն ավերված եյին սալիտակ բան-
դանների կողմից: Աղբաբնակությունը փախել եր: Հացի բերքը
հավաքված չեր:

«Ընկեր Կուլյբիչեվը անասելի ճիշդ եր դործադրում, վորպես-
դի ապահովի ճակատում կռվող մարտիկների մատակարարումը:
Յերբ նա դալիս եր վորեն զինվորական մաս, մարտիկները, հրա-
մանատարները և քաղաշխատողները լավ գիտեյին, վոր նրա
խոստացած փամփուշտները, կոշիկները, դիմնաստյորկաները,
չինեխները ժամանակին կլինեն ճակատում: Չուր տեղը նա յեր-
բեք չեր խոստանում»,—հիշում ե մի չապայեվական մարտիկ:

Մի անգամ—գա պատահեց հենց Լըիչենսկի մոտ—Վալե-
րիանը մտավ այն խրճիթը, ուր տեղավորված եր զինվորային
շաքեր:

Խրճիթում սեղանի մոտ նստած եր Չապայեվը և, գլուխը
ձեռքին հենած, տխուր-տխուր յերգում եր.

Նստած եմ վանդակի հետևը, խոնավ բանտում...

Դիչերն ուժեղ մարտ եր տեղի ունեցել: Մարտիկները հոգ-
նել եյին: Թշնամուն չպրտել եյին հեռու և կարելի չեր հանդըս-
տանալ: Բայց Չապայեվը չեր կարող հանգստանալ, մտահոգված
ներանով, վոր ռազմամթերքը վերջացել ե, կենսամթերք քիչ կար:
Անհրաժեշտ եր վորեն բան նախաձեռնել:

—Ինչո՞ւ յե այդպես տխուր յերգում ընկերը,—հարցրեց Վա-
լերիանը:

Չապայեվի փոխարեն պատասխանեց նրա անբաժան բարե-
կամ Պետլա Իսայեվը:

—Վասիլիյ Իվանովիչը այդ յերգը զանազան յեղանակներով
ե յերգում: Յեթե դրությունը վատ ե, նա տխուր ձայնով ե յեր-
գում, յեթե լավ ե՝ ուրախ:

—Միևնույն յերգը տարբեր յեղանակներով: Դա հեռա-
բլրաբեր ե: Ինչի՞ մասին ե տխրում Չապայեվը. չե՞ վոր թշնա-
մին հետ ե չպրտված—ուրախանալ ե պետք...

—Ռազմամթերք քիչ կա, կենսամթերքը վերջանում ե,—մի
տեսակ դժվար պատասխանեց Չապայեվը, բոլորովին ուշադրու-
թյուն չդարձնելով Վալերիանի վրա:

—Իսկ յեա ձեզ բերել եմ և՛ ռազմամթերք, և՛ կենսամթերք,
և՛ մախորկա,—բացականչեց Վալերիանը:

—Բերե՞լ եք: Իսկ դուք ո՞վ եք—կասկածոտ հարցրեց Չա-
պայեվը, նայելով և չճանաչելով Վալերիանին:

—Յեա Կուլյբիչեվն եմ:

—Ո՞ր,—բացականչեց Չապայեվը, թույլ սեղանի հետևից և
նետվեց գրկելու Վալերիանին:

—Ո՞ր... նո՞ւ... Ո՞ր...—կրկնում եր Չապայեվը, իսկ հետո
յերգեց ուրախ, բարձր...

Նստած եմ վանդակի հետևը, խոնավ բանտում...

Չապայեվի անվան հետ կապված են շատ փառավոր հաղթա-
նություններ: Ֆրունզեն և Կուլյբիչեվը բարձր եյին զնահատում նրա
մատուցած ծառայությունները: Նրանք դիմեցին Ժողովուրդի, միջնորդելով պարգևատրելու Չապայեվին Կարմիր դրոշի շքանը-
շանով:

Մեռավ Չապայեվը, նրան չվիճակվեց շքանշաններ կրել իր
կրծքին, բայց նրա մեծ և պայծառ հիշատակը հավիտյան մնաց
վողջ Խորհրդային յերկրում:

Կուլյբիչեվի և Ֆրունզեյի առաջարկությամբ 25-րդ զինվորական
սկսեց կրել իր փառապանծ հրամանատարի՝ Չապայեվի անունը:
Բալակովը քաղաքը, ուր իր մանկությունն ե անց կացրել Չապա-
յեվը, այժմ կոչվում ե նրա անունով:

Շատ հետաքրքրական բաներ եր պատմում Վալերիան Վլա-
դիմիրովիչը Չապայեվի մասին, նրա անընկճելի բնավորության
մասին, զարմանում եր այդ առասպելական հրամանատարի խի-
զախության, տոկունության և անվահեռության վրա:

ՄՇՏԱՊԵՍ ՍԻՐԱԼԻՐ, ՈՒՐԱԽ, ՊԱՐԶ...

Հիշողությունս կենդանացնում ե մի շարք փաստեր Վալերի-
անի կյանքի վերջին տարիներից և նրա հետ ունեցած հանդի-
պումներից:

Ապրում եյինք ամառանոցում:

Վալերիանը, Մարուսյա քույրս, նրա ամուսինը, մեզ մոտ
գտնվող ելի միջանի հյուրեր գնացին կայարան, վորպեսզի գնաց-
քով մեկնեն Մոսկվա:

Հանկարծ մենակ վերադառնում ե վրդովված Վալերիանը և
հայտարարում, վոր բոլորը թույն չարժվող գնացքը, իսկ իրեն
թողին:

Մենք հուզված ենք:

Միջանի րոպեյից հետո վաղում ե Մարուսյան, իսկ հետևից

ամուսինը: Մարուսյան հարձակվում է Վոլյայի վրա, կշտամբելով, թե նա ցած թռչելով շարժվող դնացքից, հրեց նրան: Վոլյան կշտամբում է Մարուսյային, վոր նա հրեց նրան:

Մարուսյայից հետո վազում են մյուսները: Մեկի թևը կապոտած է. ջարդել է՝ թռչելով վազոնից Վալերիանի հետևից:

Վիճում են, հուզվում, վրդովվում, միմյանց մեղադրում:

Մենք դարձացած լսում ենք նրանց և չենք հասկանում, թե վերջիվերջո ով է մեղավորը: Հանկարծ լսվում է ծիծաղի պոռթկում: Պարզվում է, վոր բոլորն ել ուշացել են դնացքից և այդ ամբողջը հորինել: Նախաձեռնողը, իհարկե, Վալերիանն էր:



Վալերիանը քիչ փոխվեց, դառնալով խոշոր պետական գործիչ: Նա առավելապես կատակ էր անում և հորինում դանազան խաղեր, սիրում էր յերաժշտությունը, յերգեցողությունը և աշխատում էր յերգչին կամ յերաժշտին աննկատելի կերպով հոգատարություն ցույց տալ պատճառած հաճույքի համար: Խմբական յերգեցողության մեջ նա առավելապես պառուզա յեր պահում:

Վալերիանը շատ էր սիրում յերեսաներ: Նա շատ էր զբաղվում իր բազմաթիվ քեռորդիներով և քեռաղջիկներով: Յերեսաները նույնպես նրան սիրում էյին և շարունակ անհամբեր ապաստում էյին նրա հանդիպմանը:

Յես պարզ հիշում եմ հետևյալ պատկերը.

Նրա աղջիկը՝ Գալյան, այն ժամանակ դեռ փոքր, թաշկիտակը շարժելով և ձեռքերը կողքերին դնելով, պարելով շարժվում էր դեպի հայրը, իսկ վերջինս կկապարելով դնում էր նրան ընդառաջ:

Շրջապատողները յերգում են. «Ախ, դուրա-դուրա-դուրա» և ծափ տալիս: Վալերիանի դեմքը փայլում է, ինչպես մանկության ժամանակ:



Յերբ Վալերիանը հանգստանում էր Ղրիմում, նրա մոտ շարունակ հյուր էյին գալիս պիոներները «Արտեկից»: Նա աշխուժանում էր նրանց դալուց: Զրոսնում էր նրանց հետ միասին, ցույց էր տալիս պարկի հետաքրքրական տեղերը, խաղեր կադմակերպում:

Մի անգամ Վալերիանը յերեսաներին տարաւ տիր:

Յերեսաներն ուրախ էյին ցույց տալու իրենց ընդունակությունները կրակելու մեջ: Բոլորից շատ թիրախին խփել էր Վալերիանը, բայց, նայելով թիրախին, նա ասում էր, թե անհրաժեշտ է, վոր ինքն ավելի հաճախ վարժություններ կատարի, թե չէ արդեն սկսել է վատ կրակել և թիրախի վրա գրեց. «շատ վատ»:

Յերեսաներն այդ թիրախն իրենց հետ տարան «Արտեկ», վորպես հիշատակ:

Սեղանի շուրջը նա հարցնում էր յերեսաներին՝ ով ինչով է հետաքրքրվում:

Յերեսաներն իրենց ազատ էյին դնում Վալերիանի մոտ և սկսեցին իրար ընդհատելով պատմել. մեկը սիրում է ճանապարհորդել, յերկրորդը՝ շինարարությամբ զբաղվել, յերրորդը՝ կարգալ, ռադիո պատրաստել, լոգսանկարել, շախմատ խաղալ և նույնիսկ գտնվեց խեցեգետին վորսալ սիրող:

—Իսկ դուք ի՞նչ եք սիրում, ընկեր Կուլբիշեւ—հարցրեց հյուրերից մեկը:

—Յես ամենից շատ սիրում եմ պիոներներին: Իսկ ի՞նչ եմ սիրում յես անել: Ամեն ինչ սիրում եմ անել, սիրում եմ ամեն մի աշխատանք:

Իսկ հետո, շախմատ խաղալով մի տղայի հետ, ասաց.

—Այ, շախմատ խաղալը սիրում եմ:

Մի պարտիա բիլիարդ խաղալով բոլորովին փոքրիկ պիոների հետ, նա, քնքշաբար շոյելով նրա գլուխը, ասաց.

—Բիլիարդ խաղալ ել եմ սիրում:

Յեւ դառնալով դեպի խեցեգետին վորսալ սիրողին, ծիծաղելով ասաց.

—Յեւ խեցեգետին վորսալ եմ սիրում: Ամեն ինչ, ամեն ինչ սիրում եմ:

Յերեսաները կպան Վալերիանին, վորպեսզի նա պատմի նրանց իր կյանքից, ռազմաճակատից:

Նա նրանց նստեցրեց հարմար բազմոցի վրա, պտուղներ բերեց և յերկար պատմեց այն կռիվների մասին, վորոնց ինքը մասնակցել էր: Նա հիշեց, թե ինչպես բանակում տասներեք տարեկան մի տղա կար՝ Վանյա Վորոբյով, թե ինչպես այդ տղան մասնակցեց հետախուզության և բերեց պետքական ու կարևոր շատ տեղեկություններ:

—Իսկ վորտեղ է այժմ այդ Վանյան,—հարցրին յերեսաները:

—Յեա նրան ճակատից ուղարկեցի սովորելու: Նրան վորո-
նում էյին ծնողները և խնդրեցին ինձ՝ հետ ուղարկել տուն: Նա
յերկար ժամանակ չեր համաձայնում, նույնիսկ ուզում էր լայ
լինել: Իսկ յես նրան իմ ձիու վրա առա և ասացի. «Իե, հրա-
ժեշտ տուր քո ընկեր մարտիկներին և խոսք տուր նրանց լավ սո-
վորել, ուսյալ և խելոք լինել»:

—Յեւ տարա՞ր, — հուզված կանչեց մի պիտներ:

—Յեւ տարա: Այժմ նա ինժեներ և: Աշխատում է գործա-
րանում: Կոմունիստ և:

—Յեա չեյի գնա: Յեա ձեզնից կթաղնւլէյի:

—Նա նույնպես ամբողջ ճանապարհին կրկնում էր. «Իզուր
ինձ հետ այդպես վարվեցիք, ընկեր Կույրիչեւ, իզուր: Հարկա-
վոր եր ձեզնից թագնվել, իսկ յես գլխի չընկա...»:

Ուշ յերեկոյան բոլորը գնացին ծովափ՝ խնցդետին վորսա-
լու: Պարկի մութ ծառուղիներով առջևից գնում էր բոլորից
բարձրահասակ պիտները և տանում էր վառված ջահը, վորը հա-
մարյա չեր ցրում պարկի մթությունը, այլ միայն ֆանտաստիկ
աավերներ և բծեր եր գցում շավիղների ու թիփերի վրա:

Յերեխաները չընկալաւեցին Վալերիան Վլադիմիրովիչին—
յերևի նրանցից շատերը վախենում էյին մթությունից, բայց
թագցնում էյին իրենց վախը. հո չե՛ր կարելի իրեն վախկոտ
ցույց տալ ընկերներին առաջ, Վալերիան Վլադիմիրովիչի առաջ:

Յերեխաները ցրվեցին բոլորովին ուշ: Նրանք չեյին ցանկա-
նում թողնել ուրախ, սիրալիւր, հյուրասեր ընկեր Կույրիչեւին:



Հանգստյան օրերին Վալերիանը սիրում էր չախմատ, վո-
լեյբոլ և բիլիարդ խաղալ:

Բոլոր խաղերով նա շատ էր գրավվում և յերբ հաղթում էր՝
նրա դեմքը յերեխայի դեմքի պես ուրախ և խնդուն էր լի-
նում:

—Ս'յ քեզ խիել, — ասում էր նա, վորպես հաղթող հեռանա-
լով վոլեյբոլի հրապարակից:

Մանկությունից նա սիրում էր բանջարեղենը: Մեզ մոտ՝
Կոկչետավում պտուղները հազվագյուտ էյին լինում: Վորպես
քաղցրավենիք ծառայում էր բանջարեղենը՝ գազարը, չաղգամը,
սիսեռը:

Վալերիանի վերջին ամառանոցում՝ Մորդովկայում միջանի
ածուններ էյին փորել և սիսեռ ցանել:

Ամառանոց գալով, Վալերիանը յերբեմն ասում էր.

—Գնանք արածելու:

Բոլորը գնում էյին դեղի սիսեռը և «արածում», այսինքն՝
ուտում էյին դեռ կանաչ, թարմ սիսեռը:

Վալերիանն իր գրպանները լցնում էր սիսեռով և չախմատ
խաղալու ժամանակ խորը մտածության մեջ հանկարծ գրպանից
հանում էր սիսեռը, ուտում էր և հյուրասիրում իր շուրջը
նստած բոլոր մարդկանց, զարմանք առաջացնելով նոր հյուրերի
դեմքերին:

Քիչ կարելի յեր հանդիպել Վալերիանին առանց աշխատանքի:
Նույնիսկ հանգստյան օրերին նա իր հետ ամառանոց էր տանում
գործերով լի պորտֆելը և միջանի ժամ աշխատում:

Բայց և շատ խիստ դրաղված լինելով հանդերձ, նա, թեկուզ
մի րոպեյով, կարվում էր աշխատանքից և հարցնում բոլոր հա-
րադատներին մասին.

—Պատմիր բոլորի մասին ավագության կարգով, — ասում էր
Վալերիանը:

Մենք նրան մասնակից էյինք դարձնում ուրախության և
վշտին, վորոնց նա շարունակ ջերմ արձագանգում էր:



1934 թ. փետրվարին լրացավ Վալերիան Վլադիմիրովիչի
աղջկա՝ Գալյայի տասնհինգ տարին: Մենքյան օրը հախաբել
էյին բարեկամները և հարազատները: Տոնական սեղանի շուրջն
աշխուժ խոսում էյին, ծիծաղում, սպասում Վալերիանին:

Ահա յեկավ Վալերիանը՝ հագնած, մտահոգված: Նստեց սե-
ղանի շուրջը, վորպեսզի մասնակցի ընդհանուր ուրախությանը,
բայց տխրությունը և մտահոգվածությունը հանդիստ չեյին թող-
նում նրան:

Պայմանավորվեցինք, վոր մեզանից յուրաքանչյուրը հերթով
վորեւեղ վարձալի բան պատմի իր կյանքից: Պատմում ենք: Մի-
ծաղում ենք: Հերթը հասավ Վալերիանին: Նա լռեց և ներողու-
թյուն խնդրելու տոնով ասաց.

—Դժբախտաբար յես այժմ վոչ մի ուրախ բան պատմել չեմ
կարող: Իմ միտքն ամբողջ ժամանակ ահա՛ այս նամակի
հետ է:

Նա հանում է նամակը և կարդում.

—Քաղաք Մոսկվա, չեյուսկինյաններին փրկող Հանձնաժո-

զորվի Նախագահին: Թանգագին ընկեր Կույրիչեզի: Փրկեք իմ պապոչկային: Յես շատ եմ սիրում իմ պապոչկային: Աղա»: Սա առաջին նամակն է, վոր ստացել եմ Հեյկուսկինյանների հարազատներից:

Նամակը, վոր գրված էր յերեսայական ձեռագրով, ձեռքից ձեռք է անցնում:

Չեյկուսկինյաններին փրկող հանձնաժողովում աշխատելու ժամանակ Վալերիանը խիստ մտահոգված էր: Հազվագյուտ դեղեր եր լինում, վոր նա հանգիստ քնի: Հեռախոսների զանգերը անդադար հնչում էյին:

Նրա հեռախոսային մի խոսակցությանը, յերբ հայտնի յեղավ, վոր ողաչու Լյապիդեւսկին ճամբարից տարել է տասնմեկ մարդու, յես ականատես էյի:

Վալերիանի ձայնը խնդությամբ էր հնչում: Նրա աչքերը փայլում էյին:

Յած դնելով հեռախոսի փողակը, նա հարցրեց.

— Ել ո՞ւմ զանգահարել և պատմել...

Բայց նա շատ չմտածեց, թե ելի ում զանգահարել: Հեռախոսը զանգահարեց, և Վալերիանն առույգ և ուրախ պատասխանում էր.

— Ճի՛շտ է, ճի՛շտ... միանգամից բոլոր յերեսաներին և կանանց:

Իսկ ինչպե՞ս էր նա հուզվում, յերբ սառցի վրա մնացել էր վեց հոգի:

— Այժմ նրանք հեշտությամբ կարող են կործանվել: Դժվար է այդքան մարդով պայքարել տարերքի դեմ:

Իսկ հետո կրկին ուրախություն—բոլորը փրկված են: Կրկին աշխուժ խոսակցություններ հեռախոսով:

Վալերիանը կանոնավորապես կարդում էր փրկված Հեյկուսկինյանների ծնողներից, հարազատներից և բարեկամներից ստացած բոլոր նամակները: Յերեսաները շնորհակալությունների հետ միասին ուղարկում էյին նաև ճամբարի, ողաչունների, Շմիդտի նկարները: Վալերիանը ամեն ինչ ուղարկությամբ նայում էր և խնամքով դասավորում առանձին պապկայում:



Մահից քիչ առաջ Վալերիանն այցելեց Ղազարխատանի և Տաջիկստանի ծանոթ վայրերը:

Այստեղ էր անցել նրա մանկությունը: Այստեղ էր նա պատե-

րադմել սալիտակ-դվարդախականների դեմ: Այստեղ էր նա կռվել քառամաշնների, կուլակների դեմ, վերականգնելով և ամրապնդելով խորհրդային իշխանությունը:

Տասնչորս տարուց հետո նա չէր ճանաչում ծանոթ յերկիրը:

— Ամեն ինչ, ամեն ինչ այնտեղ նոր է, ամեն բան նորից է շինվել, ամեն ինչ փոխվել է: Աճել, փոխվել է և ժողովուրդը: Մեծկվածներ ու աղքատներ, վորոնք կային ցարական կառավարության ժամանակ, այլևս չեն տեսնի: Այնտեղ, ուր մի ժամանակ Կարմիր Բանակը դաժան կռիվներ մղելով թաղվում էր ազգների մեջ, յերկաթուղի յե անցկացված: Այնտեղ, ուր անջուր, հյուժող անապատներ էյին, այժմ տարածվում են լավ վոռոգվող բամբակի դաշտերը: Աչքով դժվար է ընդգրկել մեր խորհրդային բամբակի դաշտերի վիթխարի տարածությունը:

Վալերիանը մանրամասն պատմում էր այն կուլտուրայի մասին, վորն այժմ յուրաքանչյուր քայլափոխում յերևում է այնտեղ, ուր առաջ նրա մասին գաղափար անգամ չունեյին:

— Մեր սեփական մեքենաները, դաշտերը վոռոգելու համար մեր սեփական կառուցումները, բոլորը մեր սեփականն է, բոլորը, ինչի մասին ցարական կարգերի ժամանակ ծեծկված ժողովուրդը յերազել անգամ չէր կարող:

Նա պատմում էր մեզ այն մասին, վոր իրեն դուր են յեկել նոր դարոցները, ակումբները, վորոնք շինվում են տեղական ազգային ճաշակով և վոճով: Նա պատմում էր, վոր տեղերում գիտության, տեխնիկայի, գեղարվեստի բոլոր բնագավառներում հայտնվում և աճում են շատ նոր տաղանդավոր մարդիկ:

Պատմելով Ղազարխատանի և Տաջիկստանի աճած մասին, Վալերիանն ասում էր, վոր արձակուրդի ժամանակ ինքն անպայման կգնա իր հայրենիք՝ Ղազարխատան, վորպեսզի մի լավ նայի, թե ինչպես է փոխվել այդ յերկիրը, ինչպես է փոխվել հայրենի Կակչե-տաու քաղաքը:

ՎԵՐՁԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ

1935 թ. հունվարի 23-ին յես վերջին անգամ տեսակցություն ունեցա իմ յեղորդ՝ Վալերիան Վալեիմիրովիչ Կույրիչեզի հետ:

Ուշ յերեկոյան նա պատրաստվում էր գնալ իր ամառանոցը և ինձ կանչեց, վոր գնամ իր հետ: Չեմ հիշում, թե ինչ պատճառով յես չեյի կարող գնալ նրա մոտ և սկսեցի պատրաստվել տուն վերադառնալու: Վալերիանը և նրա կինը՝ Ուլա Անդրեյանան դուրս յեկան նախասենյակը՝ ինձ ճամբա դնելու:

Յեղբայրս կանգնած եր դեպի սենյակները տանող սանդուխքի վրա: Յես արդեն սանդուխքից իջել էյի, վոր հազնվեմ ե ցածից նայում եյի Վալերիանի ուժեղ, ամուր Ֆիզուրային: Յեղբայրս հենվել եր բաղրիքին, կարծես թե ցանկանալով բարձրանալ ձեռքերի վրա: Նրա դեմքը հանդիստ եր, աչքերը, ինչպես միշտ, սիրալիր եյին և ուրախ:

Հազնելով բոտերս և հետ ուղղվելով, յես ծանր հառաչեցի:

— Ի՛նչ ե, սիրտդ ցավո՞ւմ ե,— մտահոգված հարցրեց Վալերիանը:

— Վո՛չ, սիրտս առողջ ե,— պատասխանեցի յես,— իսկ ճեղքի՞նչ ասաց բժիշկների վերջին խորհրդակցությունը: Ի՛նչպես ե ճո սիրտը:

Վալերիանն ուղղվեց ամբողջ հասակովը մեկ—նա ինձ ավելի հուժկու և ուժեղ թվաց—և, ձեռքի ավուով խփելով իր կրծքին, ասաց.

— Ի՞մ սիրտը: Դա ամենաառողջն ե այն ամենից, ինչ կա իմ որդանիդում:

Յես հավատացի: Հավատում եր և Ուլա Անդրեյսիման: Յեվ ո՞վ կարող եր չհավատալ, տեսնելով իր առաջ ուժեղ, կրծքով, ուրախ, փայլուն աչքերով, սիրալիր, ժպտադեմ այդ հսկային:

Իսկ հունվարի 25-ին տեղի ունեցավ աղետը... Ձկար այլևս Վալերիանը... Նրա սիրտը դադարեց բարախելուց և դադարեց ղեկավարելուց այդ հուժկու, ուժեղ որդանիդը, այդ մեծ խելքը, աշխատելու նրա անցուսպ ծարավը, ամբողջ աշխատավոր մարդկության համար յերջանիկ, ուրախ կյանք կառուցելու և ստեղծելու նրա ցանկությունը:

Վալերիան Վլադիմիրովիչի մահից հետո մենք հոգեկան տաղնապ եյինք ապրում: Յեվ հատկապես այն միտքը, վոր այդ մահը տեղի ունեցավ անբնական ճանապարհով, յերկար ժամանակ մեզ հանգիստ չեր տալիս:

Յես հարց տվի յեղբորս բնակարանում գտնվող բժիշկ Լեվինին—ինչու՞ այդպես հանկարծակի, այդպես անսպասելիորեն հրաժարվեց աշխատել Վալերիան Վլադիմիրովիչի սիրտը:

— Անսպասելիություն այստեղ չկա,— գրգռված պատասխանեց Լեվինը,— Վալերիան Վլադիմիրովիչի լարված, ջղային աշխատանքը սիրտը հասցրել եր այն դրության, վոր աղետն ամեն որ սպասվում եր:

Յես ինձ մեղադրում եյի տղիտության և յեղբորս նկատմամբ ունեցածս վատ հոգատարության մեջ: Այդ ի՛նչպես մենք մինչև

այժմ չեյինք իմացել, վոր Վալերիանի սիրտը հիվանդ ե: Բայց չե՞ր վոր հենց նույն Լեվինը նրան թուլյատրել եր աշխատելու, վորեյբով խողալու և նիստերին հանդես դալու: Յեվ վերջին կոնսիլիումի ժամանակ բժիշկներ՝ Պլետնյովը և Լեվինը դուռ եյին, վոր Վալերիանի սիրտն առողջ ե: Ձե՞ր վոր հենց նույն Լեվինը բոլորովին նորբա թուլյատրեց յեղբորս գնալ դժվարին, հեռու գործուղում՝ Միլին Ասիա:

Գործուղումից վերադառնալուց հետո յեղբայրս կարծես թե փոխված եր յերևում: Դեռ կայարանում հանդիպելով նրան՝ մենք բոլորս նկատեցինք, վոր նա դունատ ե և տխուր: Բայց այդ ամենը մենք բացատրեցինք նրանով, վոր ճանապարհորդությունը հոգնեցրել ե նրան, վոր ճանապարհորդության ժամանակ հիվանդացել ե բարձր ջերմություն առաջացնող անդինայով և այնուամենայնիվ չարունակել ե աշխատել:

«Այժմ նա առողջ ե... ուղղակի քիչ հոգնել ե»,— մտածում եյինք մենք:

Բայց տկարությունն իրեն զգալ եր տալիս: Վալերիանը համախ մտասուզվում եր, հաճախ պատվում եր մերթ ոթոցի վրա, մերթ դուռին ուղղակի դնում եր սեղանի վրա: Այդպիսի բան առաջներում նրա հետ յերբեք չեր պատահել: Յես մի անգամ նրան դտա ասանք՝ խալաթ հագած: Այդ ել նույնպես արտասովոր բան եր միշտ գործունյա Վալերիանի համար: Նա չարունակ լարված եր, չարունակ աշխատանքի մեջ:

— Մրսածություն, ջերմության մի փոքր բարձրացում, հոգնածություն... — այսպես եր բացատրում Վալերիանն իր վիճակը:— Ինձ Լեվինը թուլյ է տվել նույնիսկ դուրս գալ և աշխատել, այս բոլորը դատարկ բան ե, բոլորը չուտով կանցնի...

Բայց զգացվում եր, վոր նա մի ինչ—վոր բանի տկանջ ե դնում: Այժմ ինձ համար ամեն ինչ սրարզ ե և հատկանալի: Նա տկանջ եր դնում իր «բոլորովին առողջ սրտին» և, յերևի զարմանում եր, վոր նա իրեն խաբում ե: Բայց նա մեղ այդ չեր ասում, չցանկանալով մեզ վշտացնել: Ահա և հունվարի 23-ին նա ինձ ասաց, վոր իր սիրտը ամենաառողջն ե այն ամենից, ինչ կա իր որդանիդում:

ԻՄ ՅԵՂԲԱՅՐՆ ԸՆԿԱՎ ԺՈՂՈՎՐԴԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԻ ՁԵՌՔՈՎ

Դատարանի դաշխիճում 1938 թ. մարտի 2-ին յես ասում նրանց բոլորին... Ահա նրանք, մարդասպանները:

Այդ նրանք սպանեցին ընկերներ Կիրովին, Կուլբիշևին, Մենժինսկուն, Գորկուն և նրա վորդուն: Պարզվում է, վոր նրանք դեռ Հոկտեմբերյան հեղափոխության հենց սկզբին, 1918 թվին, ընկերներ Լենինի, Ստալինի և Սվերդլովի դեմ մահափորձ էյին պատրաստում: Այդ նրանք էյին ուղարկել էսերկա Կապլանին՝ սպանելու Լենինին: Եւ այդ նրանք էյին տվել նրա ձեռքը ատրճա- նակ՝ թունավորված գնդակներով:

Մեղադրյալների աթոռին նստած էյին Փաշիգմի արյունոտ գամփոները, լրտեսները, դիվերսանտները, պրովոկատորները, մարդասպանները, հայրենիքի դավաճանները:

Ահա Լեվինը: Նա միապաղաղ և հանդիստ, ասես թե դասա- խոսություն է կարդում, պատմում է դատարանին, թե ի՞նչպես է սպանել Մենժինսկուն, Կուլբիշևին, Գորկուն և նրա վորդուն: Նա պատմում է, թե ի՞նչպես եր իրեն Յագոդան առատորեն ըն- ծաներ տալիս և կաշառում, մատակարարելով ծաղիկներ, Փրան- սական գինի, հատկացնելով ամառանոց, թույլ տալով, վոր արտասահմանից առանց մաքսի ապրանքներ բերի: Յագոդան համոզել եր նրան նախ թունավորել Գորկու վորդուն, հետո իրեն՝ Գորկուն և Մենժինսկուն, իսկ այնուհետև՝ Կուլբիշևին...

Նա սկսեց ճիշտ չբուժել նրանց, ում նրան հանձնարարել էյին սպանելու: Նա տալիս եր այնպիսի դեղեր, վորոնք քայքա- յում էյին առողջությունը: Նա իրեն ոգնելու յեր կանչել և ուրիշ մարդասպանների՝ պրոֆեսոր Պլետնյովին, բժիշկ Կազակովին, Կուլբիշևի բարտուղարին՝ բանդիտ և մարդասպան Մակսիմո- վին:

Մակսիմովը դատարանում ասում եր, վոր նա կարգադրու- թյուն եր ստացել հակախորհրդային «աջ-տրոցկիստական բլո- կի» պարագլուխներից, ինչպես և անձնապես Յագոդայից ու Յե- նուկիձեյից, հետևելու Կուլբիշևի առողջությանը: Նա գիտեր, վոր Լեվինը և Պլետնյովն ամեն ինչ անում են, վորպեսզի քայ- քայեն Կուլբիշևի առողջությունը: Իսկ նրան, Մակսիմովին, մնում եր ուշ կանչել բժշկական ոգնությունը, յեթե Կուլբիշևը իրեն վատ զգար, իսկ յեթե կանչելու ել լիներ, ապա միայն Լեվինին կամ Պլետնյովին:

Մակսիմովն այդպես ել անում եր: Յեւ ահա, Մակսիմովը 1935 թ. հունվարի 25-ին տեսնելով մահու չափ գունատ Կուլբի- շևին, նրան միայնակ թողնում է տուն գնալու, փոխանակ նրան պառկեցնելու հենց տեղնուտեղը առանձնասենյակում և կանչելու շտապ բժշկական ոգնություն: Նա գիտեր, վոր մոտենում է

կրծքի հեղձուկի նոսրան, և նա չեր շտապում բժիշկներ կանչելու:

Վալերիանը շատ տաք եր հագնված: Նա հագել եր մորթու- տուժուրկա, տաք կոշիկներ և կրկնակոշիկներ: Սրտի համար մեծ բեռնավորում եր անցնել Կրեմլի ամբողջ բակը, բարձրանալ յերրորդ հարկը:

Իսկ Մակսիմովը հանձնարարություններ կատարողին ուղար- կեց Լեվինին վորոնելու, չնայած վոր Վալերիան Վլադիմիրովիչի ապրած տան առաջին հարկում, նույն շքամուտքում բուժարան կար, վորտեղ բժիշկը և քույրը շարունակ հերթապահում էյին:

Վալերիանը քրտինքի մեջ լողալով և հագիվ վոտքերի վրա կանգնելով, բարձրացավ յերրորդ հարկը, իր բնակարանը և վա- լենկաներով ու մորթու կուրտկայով գնաց ուղիղ իր առանձնա- սենյակը:

— Վալերիան Վլադիմիրովիչը կրկնակոշիկներով նույնիսկ միջանցքը չեր մտնում, իսկ այժմ հանկարծ առանձնասենյա- կը... — պատմում եր տնային աշխատավորուհին:

Հարևան սենյակի մահահալալից Վալերիանն ինքը վերցրեց բարձը և սլեղը, դլխի վրայով հանեց մահուդի գլխաստոր- կան և սովորականի պես չկախեց այն, զցեց աթոռի վրա, հա- նեց վալենկաները և անդրալարտիքը հագին պառկեց ոթոցի վրա, ծածկվելով պեղով:

Տնային աշխատավորուհուն նա ասաց, վոր ուղում է հանդըս- տանալ, իրեն վոչինչ պետք չե, վոր իր սիրտն ինչ-վոր վատ է, և վոր հանձնարարություններ կատարողը գնացել է բժշկի հե- տևից: Խնդրեց նրան գալ իրեն մոտ տաս րոպեյից հետո...

Տնային աշխատավորուհին դանդահարեց Մակսիմովին, վոր Վալերիան Վլադիմիրովիչը շատ վատ է: Մակսիմովն անմիջապես գանգահարեց Յենուկիձեյին և ասաց նրան, վոր, ինչպես յե- բուժում է, վերջը մոտ է, վոր Կուլբիշևին իրեն շատ վատ է զգում: Յենուկիձեյն հանգստացրեց նրան, վորպեսզի նա չհուզվի, բժիշկ- ներ չկանչի, վոր ամեն ինչ լավ է գնում...

Տաս րոպեյից հետո տնային աշխատավորուհին մտավ Վա- լերիան Վլադիմիրովիչի առանձնասենյակը և գտավ նրան արդեն մեռած:

Վազելով յեկավ Մակսիմովը: Քիչ հետո յեկավ Լեվինը: Յա- գոդան յեկավ իմանալու, թե ո՞վ է ներկա յեղել Վալերիան Վլա- դիմիրովիչի մահվան ժամանակ, և իմանալով, վոր Կուլբիշևը մենակ է յեղել, չմտավ նույնիսկ նրա մոտ, սենյակը, այլ ասաց Մակսիմովին, վոր նա չհուզվի, իրեն զոչաղ պահի...

Յեա այդ ամենը լսեցի դատարանում: Այդ ամենն առում էյին անարգ հրեշ-մարդասպաններ Լեվինը, Պլետնյովը և Մակսիմովը: Այդ ամենը հաստատում էր իր անդրչերիմյան ձայնով որեք-բանդիտ և մարդասպան Յադուդան: Այդ ամենը հաստատում էյին հակախորհրդային «աջ-տրոցկիստական բլոկի» արդարուններ, ֆաշիստական բանդիտներ՝ Բուխարինը և Ռիկովը:

Այդպես մեռցվեց Վալերիան Վլադիմիրովիչ Կուլբիշևը, ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի տեղակալը, Համ(բ) Կ Կենտկոմի Քաղբյուրոյի անդամը, Խորհրդային Վերահսկողութան Հանձնաժողովի նախագահը:

Յեվ անտ յես դատարանում տեսնում եմ նրա սպանողներին...

Յեա լսեցի նրանց վերջին խոսքերը...

Յեա նայում էյի լեվ-լեցուն դատարանի դահլիճին. այստեղ էյին կոլտնտեսությունների, ֆարրիկանների, գործարանների, Կարմիր Բանակի, ուսանողների, բժիշկների ներկայացուցիչները: Այստեղ էյին ամբողջ յերկրի ներկայացուցիչները:

Յեա տեսնում էյի, թե ինչպիսի դայրույթով և ատելությամբ էյին լսում բոլոր մեղադրյալների վերջին կեղծ խոսքերը: Բարկությունը և դայրույթը վառվում էյին դատին բոլոր ներկա գանդողների աչքերում:

Ահա դատարանը վճիռն է հանում՝ պատժի առաջնադույն չափ-դեղակահարությո՛ւն:

Թեթևության հոգոցն անցավ դահլիճով:



1935 թ. հունվարի 25-ին, լսելով հեռախոսի տաղանապալի զանգը, յես վաղեցի Կրեմլ, յեղբորս բնակարանը: Առաջինը, վորին յես հանդիպեցի միջանցքում՝ Ռիկովին էր: Նա—անարգ մարդասպանների ղեկավարը և դրդիչը—յեկեկ էր նայելու իր զոհին: Նրա դիրեկտիվներով էր կատարվել այդ սպանությունը: Բայց և այնպես նա յեկեկ էր և նույնիսկ տխուր խոնարհել էր գլուխը, ցանկանալով ցույց տալ, վոր նա տիրում է: Ստո՛ր սառխոս: Անա՛րդ մարդասպան:

Մտնելով առանձնասենյակը, յես Վալերիանին տեսա սթոցի վրա պստկած, առանց չնչառության: Նա գունատ էր, հանդիստ և չբացեց իր սիրալիք աչքերը, քաղցր չժպտաց:

Նրո մոտ նստած էր կինը, Ոլգա Անդրեյեւնան: Նա չէր լայիս, այլ միայն զարմացած նայում էր Վալերիանին ամուր փակված աչքերին և շոյում էր նրա մեծ, արդեն բոլորովին սառած ճակատը:

Կյանքը դադարեց...

Աշխույժ, ուրախ, մտախոհ, չարածճի, սիրալիք, հողատար, սիրելի, թանգադին Վալերիանին մենք այլևս յերբեք, յերբեք չենք տեսնի:

ՍՍՍԼԻՆԻ ՀԱՎԱՏԱՐԻՄ ԶԻՆԱԿԻՑԸ

Կուսակցության և կառավարության ղեկավարները Վալերիան Վլադիմիրովիչի մասին, նրա վաղաժամ մահվան կազակցությամբ, գրեցին:

«Վալերիան Վլադիմիրովիչ Կուլբիշևը պատանեկական հասակից սկսած պայքարում էր Լենինի մեծ դրոշի տակ:

Նա համառորեն, առանց ձեռքերը ծալելու, աշխատել է և՛ բոլշևիկյան ընդհատակում, և՛ քաղաքացիական պատերազմի ճակատներում, և՛ սոցիալիստական շինարարության կարևորագույն տեղամասերում:

Արդեն 1905 թվին ընկեր Կուլբիշևը, վորպես բոլշևիկ, Պետերբուրգում ակտիվորեն մասնակցում էր հեղափոխությանը: Հետո նա աշխատում է Սիբիրի բոլշևիկյան կազմակերպության մեջ, վորպես պրոֆեսիոնալ կուսակցական. հաճախակի աքսորների և բանտային կալանքների ընդմիջումներին նա կուսակցական ղեկավար աշխատանք է տանում Պիտերի բոլշևիկյան կազմակերպության մեջ:

Փետրվարյան հեղափոխությունը գտնում է ընկեր Կուլբիշևին գեպի Տուրուխանսկի յերկրամասը հերթական աքսորի գնալիս:

Ընկեր Կուլբիշևը Սամարայի բոլշևիկների կազմակերպիչն ու նրանց ղեկավարն էր Հոկտեմբերյան հեղաշրջման ժամանակ:

Ընկեր Կուլբիշևը Կարմիր բանակի ամենաականաւոր քաղաքական ղեկավարներից մեկն էր չեխոսլովակների և կոլչակյանների դեմ, իսկ հետո Թուրքեստանի ճակատում մղվով մարտերում:

Անխոնջ, աշխատանքի մեջ հստակ, անսահմանորեն նվիրված պրոլետարական հեղափոխության գործին, նա ականավոր բոլշևիկյան պետական գործչի որինակն էր հանդիսանում:

Ընկեր Կուլբիշևը Լենինի ցուցումներով վերակառուցված ՖՎՀ—ԲԳՏ նախագահն էր հանդիսանում, հետևողական, անհաշտ

պայքար տանելով կուսակցութեան գլխավոր գծից յեղած բոլոր թեքումների դեմ:

Մեր յերկրի տնտեսութիւնը ճանաչող և խոշորադուշն կազմակերպիչ ընկեր Կուլքիշեվն իր ժամանակին գլխավորում էր ժողովրդական Տնտեսութեան Գերագուշն Խորհուրդը, ղեկավարելով սոցիալիստական արդունարերութիւնը: Ընկեր Կուլքիշեվը հետո գլխավորում էր Պետական Պլանային Հանձնաժողովը, ղեկավարելով առաջին և յերկրորդ հնգամյակների ժողովրդա-տնտեսական պլանների կազմումը:

Ընկեր Կուլքիշեվի կազմակերպական և տնտեսական աշխատանքի հարստագուշն փորձը, նրա պետական լայն աշխարհայացքը առանձնապէս փայլուն կերպով յերևան յեկան ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահի Տեղակալի պաշտոնում:

Ընկեր Կուլքիշեվը մեռավ մարտական սրտտում, աշխատելով առանց ձեռքերը ծալելու, ամբողջ ուժերով, մինչև իր կյանքի վերջին րոպեն:

Նա իր ամբողջ կյանքը, իրեն ամբողջովին նվիրեց բանվոր դասակարգի գործին, հերոսական ժողովրդի գործին»:

Վալերիան Վլադիմիրովիչը մինչև իր կյանքի վերջը ընկեր Ստալինի հավատարիմ զինակիցը և ոգնականն էր: Նա, վորպես լենինյան-ստալինյան տիպի պրոլետարական հեղափոխական, իր ամբողջ ուժերը, իր ամբողջ կրակոտ յեռանդը տալիս էր ԽՍՀՄ սոցիալիզմի կառուցման և հաղթանակի գործին: Ընկեր Ստալինի ղեկավարութեամբ Վալերիան Վլադիմիրովիչն անողոր պատերազմ էր մղում Ֆաշիզմի այժմ մերկացված վարձու գործակալներին փորձերի դեմ՝ չեղելու կուսակցութիւնը նրա գլխավոր գծից: Վալերիան Վլադիմիրովիչը 1929 թվին առաջին անգամ հրապարակեց Ստալինի նամակը Լենինին՝ Գոբելոսի պլանի մասին: Իր «Ստալինը և յերկրի ինդուստրացումը» հոդվածում նա պատմեց, թե ինչպէս ընկեր Ստալինը, ղեռ 1921 թվին, մերկացնելով դավաճաններ Տրոցկու, Ռիկովի և Տոմսկու փորձերը՝ խանդարելու Ռուսաստանի ելկտրիֆիկացիայի լենինյան պլանը, «չտապում էր կենդանի պրակտիկ գործ դարձնելու ինդուստրացման վերաբերյալ առաջին խոսքը»:

Վալերիան Վլադիմիրովիչը Լենինի—Ստալինի՝ մեր յերկրում սոցիալիզմի կառուցման մեծ գաղափարների պրակտիկ կենսագործման համար անխոնջ պայքարող էր:

Լինելով Պետպլանի նախագահ և ԽՍՀՄ Ժողկոմխորհի նա-

խագահի տեղակալը, Վալերիան Վլադիմիրովիչն իր ամբողջ աշխատանքը յենթարկում էր կուսակցութեան գլխավոր գծի պրակտիկ իրագործմանը, ամենուրեք անկյունաքար էր դարձնում ինդուստրացման խնդիրները—սոցիալիզմի հաղթանակի հիմքերը մեր յերկրում:

Ստալինի ցուցումին լիովին համապատասխան, նա մարտի յեր կոչում բանվոր դասակարգի բազմամիլիոն մասսաները՝ սոցիալիստական ինդուստրացման բարձր տեմպերի համար: Մոսկվա քաղաքի յերիտասարդ հարվածայինների և մասնագետների ժողովում արտասանած իր ճառում Վալերիան Վլադիմիրովիչը հետեյալ կոչն արավ. «Դեպի մա՛րտ, Ուրալո-Կուզնեցկի կոմբինատի համար»:

Նկարագրելով յերկրի յերկրորդ ածխա-մետաղագործական բաղայի ստեղծման՝ Ստալինի այդ մեծագուշն գաղափարի համաշխարհային-պատմական կարեւորութիւնը, նա ասում է. «Խորհրդային Միութեան բոլոր մեծ պատմական նվաճումները հնարավոր են այն պատճառով միայն, վոր կուսակցութեան և բանվոր դասակարգի յուրաքանչյուր առաջադրանքի կատարման գործում մասնակցում են բազմամիլիոն մասսաները: Միմիայն շնորհիվ միլիոնների ակտիվութեան կարելի յե իրագործել այն տեմպերը, վորոնց մենք հասանք անցած տարում»:

Ուրալո-Կուզնեցկի վիթխարի կոմբինատի կառուցումը միայն հնարավոր է բանվոր դասակարգի բովանդակ ուժերի և ամբողջ պրոլետարական հասարակայնութեան մեծագուշն մոբիլիզացիայի պայմաններում»:

Վալերիան Վլադիմիրովիչը կուսակցութեանը և բոլոր աշխատողներին շարունակ կոչում էր քաղաքական զգոնութեան, անողոր պայքարի՝ սոցիալիզմի ամեն տեսակ թշնամիների դեմ: Վալերիան Վլադիմիրովիչը խորն էր ապրում անմոռանալի Սերգեյ Միրոնովիչ Կիրովի մահը, յերբ Ֆաշիստական տեռորիստների անարդ տրոցկիստական-զինովյեկական բանդան սպանեց նրան: Յեվ, վորպէս առաջին յեղրակացութիւն, նա Խորհուրդների Մոսկվայի մարզային III համագումարում 1935 թ. հունվարի 7-ին տված իր զեկուցման մեջ կոչ էր անում դասակարգային զգոնութեան հետագա բարձրացման:

«Վոդորմելի և անարդ տականքները Ս. Մ. Կիրովի սպանութեամբ իրենք տվին իրենց գործունեյութեան հանրագումարը, գառնալով միջազգային հակահեղափոխութեան առաջադրանքների

անմիջական կատարողները և դրանով ամբասեցին իրենց դավա-
ճանական ուղին:

Մեր հաղթանակները ձեռք են բերված դատակարգության թըշ-
նամու և նրա գործակալների դիմադրության դեմ մղված սխա-
տեմատիկ դաժան պայքարում... Սակայն դա չի նշանակում, Վոր
մենք կարող ենք, թեկուզ մի բոսկե, թուլացնել մեր դատակար-
գային զգոնությունը: Ընդհակառակը, նաև հետադաշում մեր
դեկավար սկզբունքը պիտի լինի դատակարգային զգոնության
ուժեղացումը, ե՛լ ավելի համախմբումը կուսակցության շուր-
ջը, ընկեր Ստալինի շուրջը»:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Քաղաքը: Տունը: Ընտանիքը	3
Պատանի հեղափոխականը	11
Կադետական կորսություն	14
Զինվորա-բժշկական տկալեմիայի ուսանող	19
Առաջին՝ ձերբակալությունը	21
Դատը	28
Ձերբակալություններն ու բանտերը	30
Նարիմի աքաղաղվելը	40
Ազատության մեջ	45
Գարձյալ աքաղաղ	51
Սամարա	57
Քաղաքացիական պատերազմի նախատեսում	62
Մշտապես սիրալիր, ուրախ, պարզ	65
Վերջին հանդիպումը	71
Իմ յեղբայրն ընկավ ժողովրդի բշտամիների ձեռքով	73
Ստալինի հավատարիմ գիմակիցը	77

Թարգմ. Հ. Նիկիթեկյան
Պատգիբ. Ռ. Ն. Դավթյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Մրբագրիչ Վ. Զիգեջյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արսվյան

Դրավիտի լիազոր № Կ—2451 հրատ. № 635,

Գառվեր № 184, տիրած 7000

Թղթի չափսը $62 \times 94 \frac{1}{16}$ (38.480 տպ. նիշ 1 տպ. մասնուլում,
5 տպ. մասնուլ, $2 \frac{1}{2}$ թերթ թուղթ):

Հանձնվել է արտադրության 14/XII 1938 թ.

Ստորագրվել է տպագրելու 17/I 1939 թ.

Գինը 65 կ.

Պետրաս—Դադարական գրականության հրատարակչության տպարան,
Ֆերիան, Այավերյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0928244

4 ФЕВ. 1939

55

11

28840

ԳԻՆԸ 65 Կ.

ЕЛЕНА КУЙБЫШЕВА
ВАЛЕРИАН ВЛАДИМИРОВИЧ
КУЙБЫШЕВ

Армгиз—Издательство полит.
литературы, Ереван, 1939